

ISSN 2579-2830

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ

ИСКУССТВОВЕДЧЕСКИЙ
ЖУРНАЛ

JOURNAL OF ART STUDIES

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2021 № 2 (6)

2

2021



Արամ Իսաբեկյան. «Վիգեն Ղազարյանի դիմանկարը» (2017), կտավ, յուղաներկ, 85 x 65

Арам Исабекян. «Портрет Вигена Казаряна» (2017), холст, масло, 85 x 65

Aram Isabekyan. "Portrait of Vigen Ghazaryan" (2017), oil on canvas, 85 x 65

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA



ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ

ИСКУССТВОВЕДЧЕСКИЙ
ЖУРНАЛ

JOURNAL OF ART STUDIES

2 (6)

2021

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA

ՎԵՑԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՑ

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

ԱՍԱՏՐՅԱՆ Աննա Գրիգորի – գլխավոր խմբագիր

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՔԱՄԱԼՅԱՆ Մարգարիտա Արսենի – պատասխանատու քարտուղար
արվեստագիտության թեկնածու

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՂԱՍՅԱՆ Արարատ Վլադիմիրի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳՈՒՍԵՎ Վլադիմիր Ալեքսանդրի (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)

ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու

ՀԱՄՐԱԹՅԱՆ Մուրադ Մարգարի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ,
ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ Վահանի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՂԱԶԱՐՅԱՆ Արմեն Յուրիի (Ռուսաստան, Մոսկվա)

Ռուսաստանի ճարտարապետության և շինարարական գիտությունների
ակադեմիայի թղթակից անդամ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի
պատվավոր անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ,
արվեստագիտության դոկտոր

ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՅՈՒՐԵՎԱ Տատյանա Սեմյոնի (Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ)

ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր

ՉԵՊԱԼՈՎ Ալեքսանդր Իվանի (Ուկրաինա, Կիև)

Ուկրաինայի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության
դոկտոր, պրոֆեսոր

ՊՐՈԿՈՊՅՈՎ Վլադիմիր Իվանի (Բելառուս, Մինսկ)

Բելառուսի արվեստի վաստակավոր գործիչ, Ռուսաստանի գեղարվեստի
ակադեմիայի պատվավոր անդամ, արվեստագիտության թեկնածու

ՍՈՒՎԱՐՅԱՆ Յուրի Միքայելի (Հայաստան)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ЖУРНАЛ ВЫХОДИТ 2 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С ИЮНЯ 2019 ГОДА

ИЗДАЕТСЯ РЕШЕНИЕМ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА

АСАТРЯН Анна Григорьевна – главный редактор
заслуженный деятель искусств Республики Армения,
доктор искусствоведения, профессор
КАМАЛЯН Маргарита Арсеновна – ответственный секретарь
кандидат искусствоведения

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

АГАСЯН Арарат Владимирович (Армения)
член-корреспондент Национальной академии наук РА,
заслуженный деятель искусств РА, доктор искусствоведения, профессор

АСРАТЯН Мурад Маргарович (Армения)
член-корреспондент Национальной академии наук РА,
заслуженный архитектор РА, доктор архитектуры, профессор
ГУСЕВ Владимир Александрович (Россия, Санкт-Петербург)
заслуженный деятель искусств РФ, кандидат искусствоведения

КАЗАРЯН Армен Юрьевич (Россия, Москва)
член-корреспондент Российской академии архитектуры и строительных наук,
почетный член Российской академии художеств, иностранный член
Национальной академии наук РА, доктор искусствоведения

КАЗАРЯН Виген Оганесович (Армения)
член-корреспондент Национальной академии наук РА, заслуженный деятель
культуры РА, доктор искусствоведения, профессор

ОГАНЕСЯН Генрик Ваганович (Армения)
член-корреспондент Национальной академии наук РА,
заслуженный деятель науки РА, доктор искусствоведения, профессор

ПРОКОПЦОВ Владимир Иванович (Беларусь, Минск)
заслуженный деятель искусств Республики Беларусь, почетный член
Российской академии художеств, кандидат искусствоведения

СУВАРЯН Юрий Михайлович (Армения)
академик Национальной академии наук РА, заслуженный деятель науки РА,
доктор экономических наук, профессор

ЧЕПАЛОВ Александр Иванович (Украина, Киев)
заслуженный деятель искусств Украины, доктор искусствоведения,
профессор

<p>ЮРЬЕВА Татьяна Семеновна (Россия, Санкт-Петербург) заслуженный деятель искусств Российской Федерации, доктор искусствоведения, профессор</p>

JOURNAL IS PUBLISHED 2 TIMES IN A YEAR, SINCE JUNE 2019

**PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL OF
NAS RA INSTITUTE OF ARTS**

ASATRYAN Anna – Editor-in-chief

Honored Worker of Arts of the RA, Doctor of Arts, Professor

KAMALYAN Margarita – Responsible secretary

Candidate of Arts

EDITORIAL BOARD

AGHASYAN Ararat (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,

Honored Worker of Arts of the RA, Doctor of Arts, Professor

CHEPALOV Alexander (Ukraine, Kiev)

Honored Worker of Arts of the Ukraine, Doctor of Arts, Professor

GHAZARYAN Vigen (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,

Honored Worker of Culture of the RA, Doctor of Arts, Professor

GUSEV Vladimir (Russia, Saint-Petersburg)

Honored Worker of Arts of the Russia, Candidate of Arts

HASRATYAN Murad (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,

Honored Architect of the RA, Doctor of Architecture, Professor

HOVHANNISYAN Henrik (Armenia)

Corresponding Member of National Academy of Sciences of RA,

Honored Worker of Science of the RA, Doctor of Arts, Professor

KAZARYAN Armen (Russia, Moscow)

Corresponding Member of the Russian Academy of Architecture and

Construction Sciences, Honorary Member of the Russian Academy of

Arts, Foreign Member of National Academy of Sciences of RA, Doctor of Arts

PROKOPTSOV Vladimir (Belarus, Minsk)

Honored Worker of Arts of the Belarus, Honorary Member of the Russian

Academy of Arts, Candidate of Arts

SUVARYAN Yuri (Armenia)

Academician of National Academy of Sciences of RA, Honored Worker of Science

of the RA, Doctor of Economics, Professor

YURIEVA Tatiana (Russia, Saint-Petersburg)

Honored Worker of Arts of the Russia, Doctor of Arts, Professor

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐԸ

ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ԱՐԱՐԱՏ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱՂԱՍՅԱՆ



Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Վլադիմիրի Աղասյանի 30 տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդը և հիմք ընդունելով արվեստի ինստիտուտի գիտական անձնակազմի 2021 թ. օգոստոսի 24-ի ընդհանուր ժողովի որոշումը՝ ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստա-

գիտության դոկտոր, պրոֆեսոր **Արարատ Վլադիմիրի Աղասյանն** ընտրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար:

Ա. Աղասյանը ծնվել է 1956 թ. օգոստոսի 11-ին ՀԽՍՀ Սիսիան քաղաքում՝ ԽՍՀՄ պետական բանկի հայկական գրասենյակի կառավարիչ, ՀԽՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, ՀԽՍՀ մինիստր, ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու Վլադիմիր Աղասյանի և մանկավարժ, անգլերենի ուսուցչուհի Մարգարիտա Ասոյանի ընտանիքում: 1960-ին Ա. Աղասյանը ծնողների հետ տեղափոխվել է Երևան, 1973-ին ավարտել Երևանի հ. 122 միջնակարգ դպրոցը և ընդունվել Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան: 1978-ին ավարտելով համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժինը և ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում՝ իր գիտելիքները հայրենի արվեստաբանությանը ծառայեցնելու նպատակով Ա. Աղասյանը վերադառնում է հայրենիք և օգոստոսի 1-ին աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Հենց այս գիտական օջախում էլ անցնելու էր երիտասարդ արվեստաբանի գիտաստեղծագործական ու գիտակազմակերպչական հետագա ողջ կյանքը:

Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում Ա. Աղասյանը ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Դմիտրի Սարաբյանովի գիտական ղեկավարությամբ 1989-ին պաշտպանել է «Մարտիրոս Սարյանի ստեղծագործական մեթոդի ձևավորումը» թեմայովատենախոսություն և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2007-ի մարտին Երևանում՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» թեմայով դոկտորական ատենախոսությունը, ստացել արվեստագիտության

դոկտորի գիտական աստիճան: Նույն թվականի նոյեմբերին Ա. Աղասյանին շնորհվել է «Արվեստագիտություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: 2005-ին Ա. Աղասյանը որակավորվել է որպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իսկ 2010-ին, 2015-ին, 2016-ին և 2021-ին՝ գլխավոր գիտաշխատող:

2009-ին Ա. Աղասյանն ընտրվել է Սանկտ Պետերբուրգի՝ Պետրոս Մեծի անունը կրող Գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ: Նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ է (2007-ից), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ (2011):

2014-ի դեկտեմբերին Ա. Աղասյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Այսօր պրոֆեսոր Ա. Աղասյանը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմության լավագույն գիտակն է, որի արվեստագիտական հետաքրքրությունների հիմնական ոլորտը XIX-XX դարերի հայ կերպարվեստի ու գեղարվեստական մտքի պատմությունն է: Նա հեղինակ է մասնագիտական բարձր մակարդակով և հարուստ փաստական նյութեր պարունակող 22 գրքերի ու մենագրությունների, շուրջ 180 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, որոնք ընդգրկվել են Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, ԱՄՆ-ում, ԳՖՀ-ում, Հունգարիայում, Լիբանանում, Լեհաստանում լույս տեսած գիտական ժողովածուներում, կերպարվեստին նվիրված հանրագիտարաններում և պարբերականներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային, միութենական և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում:

Ա. Աղասյանն առաջինն է ուսումնասիրել և հայերենով շարադրել նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի պատմությունը:

Արվեստաբանի երկարամյա հետազոտությունների ու պրպտումների հանրագումարը դարձավ ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով պետական պատվերի շրջանակում հրատարակված՝ գեղարվեստական, պատմամշակութային և փաստագրական մեծածավալ նյութ պարունակող «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնարար ուսումնասիրությունը, որտեղ առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվեց հայ կերպարվեստի պատմական ուղին՝ սկսած Ռուսաստանի կազմում 1801-1828 թթ. Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց մինչև մեր օրերը:

Ա. Աղասյանն է հեղինակել 2007-ին Մոսկվայում լույս տեսած՝ Նոնա Ստեփանյանի «Искусство Армении» մենագրության՝ հետխորհրդային Հայաստանի կերպարվեստին նվիրված գլուխը:

Ծանրակշիռ է գիտնականի ներդրումը «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հիմնարար աշխատության ստեղծման գործում, որի համար 2009 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի՝ կերպարվեստի ոլորտում: Նա հեղինակել է XIX-XX դդ. հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդարձակ բաժինները, որոնք կազմում են գրքի ուղիղ կեսը:

Բազմավաստակ արվեստաբանն է շարադրել «Հայոց պատմություն» քառահատորի՝ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստին վերաբերող բաժինները՝ երրորդ և չորրորդ հատորներում:

Ա. Աղասյանը XIX դարի արևմտահայ կերպարվեստի պատմության առաջին հետազոտողներից է: Հայ կերպարվեստի պատմաբանը ոչ միայն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել մոռացված անուններ ու ստեղծագործություններ, այլև համակողմանիորեն ուսումնասիրել է հայկական և թուրքական քանդակագործության հիմնադիր Երվանդ Ոսկանի ու պոլսահայ շնորհալի գեղանկարիչ Ինտրայի (Տիրան Չրաքյան) ստեղծագործությունը:

Ա. Աղասյանը լրջագույն ներդրում ունի սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում:

«Սփյուռքի նախարարության և «ԳԱԱ արվեստի ինստիտուտի համատեղ հիմնարկված «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարի անդրանիկ հատորը Ա. Աղասյանի «Քաջազի մշտավառ կանթեղը» աշխատությունն էր՝ նվիրված ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջազունի Քեչեճյանին: Առաջին անգամ փաստական նյութի լայն ընդգրկմամբ հանգամանորեն ներկայացվում է արվեստագետի երկարատև, փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հայրենական արվեստաբանության մեջ Ա. Աղասյանն առաջին է Հայաստանում ներկայացրել ֆրանսահայ նկարիչ Լևոն Թութունջյանի արվեստը, ուսումնասիրել ֆրանսահայ նկարչուհի Արմինիա Կարբոնել-Քաբայանի և քանդակագործ Հակոբ Գյուրջյանի ստեղծագործությունը: 2009-ի մարտի 1-ին «ԳԱԱ արվեստի ինստիտուտում վերաբացվեց սփյուռքահայ արվեստի բաժինը, որի աշխատակիցների գերակա խնդիրներից է սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությունը, և որի ղեկավարը 2016 թ. փետրվարի 1-ից Արարատ Աղասյանն է:

Հատկապես նշելի է Ա. Աղասյանի ներդրումը սուրենյանցագիտության և այվազովսկիագիտության ասպարեզում:

2010 թ. մարտի 10-ին լրացավ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակը: Հոբելյանական միջոցառումների շարքում Ա. Աղասյանի նախաձեռնությամբ և ջանքերով 2010 թ. նոյեմբերի 16-ին «ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում «ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց «Վարդգես Սուրենյանց – 150» հոբելյանական գիտական նստաշրջանը, որը եզրափակվեց վաստակաշատ արվեստաբանի՝ «Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին» ուշագրավ զեկուցմամբ: Հոբելյանական միջոցառումների շարքում Հայաստանի ազգային պատկերասրահում նոյեմբերի 26-ին բացվեց Վ. Սուրենյանցին նվիրված ցուցահանդեսը և հրատարակվեց նկարչի ստեղծագործությունների պատկերագիրը՝ Ա. Աղասյանի առաջաբանով (հայերեն և անգլերեն):

Իսկ մինչ այդ՝ 2009 թ. օգոստոսի 1-ին, Ախալցխայի նախկին Սաֆարյան, ներկայումս Քեթևան թագուհու անունը կրող փողոցում գտնվող առանձնատան պատին, որտեղ անցել են Վ. Սուրենյանցի մանկության տարիները,

բացվել էր մեծ նկարչի հուշաքարը (հեղինակ՝ քանդակագործ Լևոն Գրիգորյան)՝ Ախալցխայի պատմության մեջ առաջին հայատառ հուշատախտակը, որին հաջորդած հոբելյանական հանդիսավոր երեկոյի ընթացքում Ախալցխայի թատրոնի լեփ-լեցուն դահլիճում Սուրենյանցի կյանքի և գործունեության մասին հանգամանալից զեկուցումով հանդես եկավ Արարատ Աղասյանը:

2017-ին լրացավ հայ հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հոբելյանը: Ա. Աղասյանի նախաձեռնությամբ և ակտիվ ջանքերով 2017 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց «Հովհաննես Այվազովսկի – 200» գիտական նստաշրջանը: Հայ իրականության մեջ առաջին անգամ մի ամբողջ գիտական նստաշրջան բացառապես նվիրվեց մեծ ծովանկարչի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը: Ա. Աղասյանը հանդես եկավ «Հովհաննես Այվազովսկու իտալացի սանը. Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսի» զեկուցումով՝ բացահայտելով, որ մեծահամբավ նկարիչը նկատելի ազդեցություն է թողել նաև եվրոպացի առանձին վարպետների ստեղծագործության վրա: Հոբելյանական նստաշրջանին ընդառաջ՝ ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ Ա. Աղասյանի «Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) մենագրությունը:

Ծանրակշիռ է Ա. Աղասյանի ներդրումը սարյանագիտության և քոչարագիտության բնագավառներում, ինչպես նաև խորհրդային ու հետխորհրդային հայ կերպարվեստի, գեղարվեստական կյանքի ուսումնասիրման գործում:

1992-ին հրատարակվեց Ա. Աղասյանի անդրանիկ՝ «Мартирос Сарьян. Раннее творчество» մենագրությունը, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Երիտասարդ հետազոտողի վստահ մուտքը սարյանագիտություն պատահական չէր. դեռևս 1980-ին հրատարակվել էր Մարտիրոս Սարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որի համահեղինակներից մեկը 24-ամյա Ա. Աղասյանն էր:

2012-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերի շրջանակում «Ոսկան Երևանցի» հրատարակչատունը հրատարակեց Ա. Աղասյանի «Символизм и творчество Мартироса Сарьяна» մենագրությունը՝ նվիրված XX դ. հայ խոշորագույն նկարիչ Մարտիրոս Սարյանի ստեղծագործության վաղ՝ սիմվոլիստական շրջանին: Սարյանի վաղ շրջանի հիմնական ստեղծագործությունների մանրագնին ու բազմակողմանի ուսումնասիրության շնորհիվ բացահայտվեցին նրա արվեստի ձևաոճական և գաղափարական-կերպարային առավել բնորոշ առանձնահատկությունները:

Ա. Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում հարատև եղել է XX դարի հայ ականավոր արվեստագետներից մեկի՝ քանդակագործ, գեղանկարիչ և գծանկարիչ Երվանդ Քոչարի արվեստը: Հայ մեծ քանդակագործը բազմավաստակ արվեստաբանի սիրելի արվեստագետներից է: Այսօր նա Քոչարի արվեստի լավագույն գիտակն է՝ Երվանդ Քոչարի թանգարանի գիտական խորհրդի երկարամյա անդամը նրա մասին երկու մենագրության, բազմաթիվ գիտական հոդվածների ու զեկուցումների հեղինակ է:

Առաջին մենագրությունը հրատարակվել է 1999-ին: Իսկ 2013-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հայերեն և ռուսերեն հրատարակվեց Ա. Աղասյանի «Երվանդ Քոչարի տարածության մեջ» մենագրությունը, որտեղ ներկայացվել են Երվանդ Քոչարի կյանքն ու արվեստը:

Ա. Աղասյանի գիտական գործունեության կարևոր ուղղություններից է ժամանակակից նկարիչների և քանդակագործների ստեղծագործության հանդեպ կենդանի հետաքրքրությունը: Ի դեպ, Ա. Աղասյանի մուտքը կերպարվեստագիտություն տեղի ունեցավ հենց ժամանակակից նկարիչների մասին ուսումնասիրություններով: «Սովետական արվեստ» հանդեսում 1979 թ. լույս տեսավ «Ռուբեն Շահվերդյանի արվեստը» հոդվածը, որին հաջորդեցին Ռուբեն Աղայանին և Լևոն Թոքմաջյանին նվիրված հետազոտությունները: Այս ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ «Հայաստանի երիտասարդ նկարիչները» երկվեզու (հայերեն և ռուսերեն) պատկերագիրքը: Այսօր էլ հեղինակավոր արվեստաբանի խոսքն ու կարծիքը, նկատառումն ու խորհուրդը խիստ կարևորում են մեր գեղանկարիչներն ու քանդակագործները:

Իր գիտական ուսումնասիրություններում Ա. Աղասյանը մեծ կարևորություն է տալիս հարևան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի ու Եվրոպայի հետ XIX-XX դդ. հայ կերպարվեստի ունեցած առնչություններին և զուգահեռներին: Այդ հարցերի բազմակողմանի լուսաբանման շնորհիվ նա բացահայտել է ոչ միայն դրանց պատմական ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները: Հատկապես ուշագրավ են հայ-ռուսական, հայ-իտալական և հայ-ֆրանսիական գեղարվեստական կապերին նվիրված՝ Ա. Աղասյանի գիտական հրապարակումներն ու զեկուցումները:

2015-ին ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Ա. Աղասյանի և Աննա Ասատրյանի «Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ)» աշխատությունը: Գրքի առաջին՝ «Սանկտ Պետերբուրգում կրթված հայ արվեստագետները» վերտառությամբ պատմական ակնարկում Ա. Աղասյանը հանգամանորեն ներկայացրել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում՝ Գեղարվեստի կայսերական ակադեմիայում և գեղարվեստական այլ կրթարաններում մասնագիտացած, այնտեղ ապրած և գործած հայ արվեստագետների ստեղծագործական դիմանկարները՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք մոռացված կամ գրեթե մոռացված անուններ, անհայտ ստեղծագործություններ, կենսագրական նորահայտ փաստեր ու վկայություններ:

Իսկ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2018-ին լույս ընծայված «Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը)» մենագրության մեջ Ա. Աղասյանը պատմական ակնարկի ձևով ներկայացնում է հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում նշված ժամանակաշրջանում: Հեղինակը, հենվելով թեմային առնչվող հայ և օտարազգի մասնա-

գետների ուսումնասիրությունների՝ գրքերի ու հոդվածների, հուշագրությունների ու նամակների, հին ու նոր մամուլի և այլ աղբյուրների վրա, բերում է հայկական վանքերում ու եկեղեցիներում պահվող՝ մանրանկարներով զարդարված մեր միջնադարյան ձեռագրերի, ինչպես նաև որմնանկարների, սրբանկարների, քանդակների, խաչքարերի ու խաչարձանների, կիրառական արվեստի տարատեսակ նմուշների միտումնավոր ոչնչացման և յուրացման բազմաթիվ օրինակներ. դա վկայում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած և այսօր էլ պարբերաբար շարունակվող մշակութային վանդալիզմի մասին:

Ա. Աղասյանը նոր խոսք է ասել նաև կոմիտասագիտության բնագավառում: 2019 թվականին՝ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի շրջանակներում, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ Ա. Աղասյանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրքը, որտեղ ներկայացված ստեղծագործություններն ունեն ինչպես գեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային և վավերագրական նշանակություն:

Ա. Աղասյանի ուսումնասիրությունների վերաբերյալ տպագրվել են ավելի քան 80 գրախոսականներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Իրանում:

Կերպարվեստագիտության ակնառու ժառանգության կողքին հիշատակության է արժանի Ա. Աղասյանի ներդրումը հայ պոեզիայում, թարգմանչական արվեստում: Քչերին է հայտնի, որ դեռևս պատանեկան տարիներին արվեստաբանը ստեղծագործել է, բանաստեղծություններ գրել հայերեն և ռուսերեն, որոնք, ցավոք, ցայսօր անտիպ են: 2013 թ. նա ընթերցողի դատին հանձնեց «Ռուսական պոեզիայի զանձարանից» ժողովածուն, որտեղ ներառել է XIX–XX դդ. ռուսական պոեզիայի լավագույն նմուշներն ու դրանց սեփական թարգմանությունները: Ժողովածուն հետաքրքրեց ընթերցողներին, դրական արձագանքների արժանացավ գրականագետների շրջանում:

Ա. Աղասյանը գիտության հմուտ կազմակերպիչ է: 1978-ին ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում աշխատանքի անցնելուց քիչ անց բացահայտվեց շնորհալի երիտասարդ արվեստաբանի կազմակերպչական ջիղը. 1980-ին նա ընտրվեց ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտխորհրդի նախագահ, իսկ 1981-ին արդեն գիտական խորհրդի անդամ էր:

1991 թ. հունիսի 1-ին Ա. Աղասյանը նշանակվեց Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար և գիտխորհրդի քարտուղար:

1995 թ. օգոստոսի 8-ին Արվեստի ինստիտուտում ստեղծվեց հանրապետությունում միակ՝ արվեստագիտության բնագավառի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհուրդը, որի ակունքներում կանգնած էր Ա. Աղասյանը. նա խորհրդի առաջին գիտքարտուղարն էր, այնուհետև՝ միակ գիտությունների թեկնածու անդամը, 2009-ից՝ նախագահի տեղակալը:

Վարչական աշխատանքի ընթացքում դրսևորվեցին Ա. Աղասյանի՝ գիտության կազմակերպչի աներկբա ունակությունները: Ա. Աղասյանը 2003-ին ընտրվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում, իսկ

2008-ին, 2013-ին և 2019-ին վերընտրվեց նույն պաշտոնում: 2003-2021 թթ. Ա. Աղասյանն ինստիտուտի գիտական խորհրդի նախագահն էր:

2021 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար:

Տնօրենի պաշտոնում Ա. Աղասյանի պաշտոնավարման 19 տարիների ընթացքում ինստիտուտում վերստեղծվել են թատրոնի (2004) և սփյուռքահայ արվեստի (2009, 2014-ից՝ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի) բաժինները: Նրա նախաձեռնությամբ 2004-ին վերստեղծվեց երիտասարդ արվեստաբանների խորհուրդը, և ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեցին արդեն ամենամյա դարձած՝ երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջանները, հիմնարկվեց «Հայ արվեստի հարցեր» մատենաշարը, պետական պատվերի շրջանակում հրատարակվեցին «Հայ ավանդական երաժշտության» 13 հատորները: 2014-2018 թթ. ինստիտուտը հրատարակել է «Կանթեղ» գիտական պարբերականը, իսկ 2019-ից՝ «Արվեստագիտական հանդեսը»:

Ինստիտուտում ավանդույթ է դարձել հայ կերպարվեստի ու երաժշտարվեստի գործիչների հոբբեյանական գիտական նստաշրջանների գումարումը՝ զեկուցումների ժողովածուների հրատարակությամբ:

Ինստիտուտը, որտեղ այսօր աշխատում են ՀՀ ԳԱԱ չորս թղթակից անդամ, գիտությունների 13 դոկտոր և 30 թեկնածու, ձեռք է բերել լայն ճանաչում, գնահատվել պետության կողմից. 2008-2015 թվականների ընթացքում գիտաշխատողներից տասներեքն արժանացել են ՀՀ պատվավոր կոչումների:

Ա. Աղասյանի պաշտոնավարման ընթացքում հիմնադրման կեսդարյա տարեդարձը բոլորեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, որի տարեգրության կարևոր էջերից դարձան 50-ամյա հոբբեյանին նվիրված միջոցառումների շարքը (2008) և Աննա Ասատրյանի «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ – 50» գրքի հրատարակումը՝ պետական պատվերի շրջանակում: 2013-ին՝ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբբեյանի կապակցությամբ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ ստեղծվեց ՀՀ ԳԱԱ հիմնը: Ա. Աղասյանի նախաձեռնությամբ վերականգնվեց ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը, նրա ջանքերով նկատելիորեն աշխուժացել է միջազգային համագործակցությունը:

Արվեստաբանի գիտական ու գիտակազմակերպչական բեղմնավոր աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեությամբ: Պրոֆեսորը տարիներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա արվեստաբաններին: Բազմիցս ղեկավարել է արվեստաբանության գծով պետական քննությունների և ավարտական աշխատանքների հանձնաժողովները պետական համալսարանում, գեղարվեստի պետական ակադեմիայում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերջին շրջանում վաստակաշատ գիտնականը ձեռնամուխ է եղել արվեստի դպրոցների և գեղարվեստական ուսումնարանների աշակերտության համար նախատեսված «Արվեստի պատմություն. Կերպարվեստ» ուսումնական ձեռնարկի ստեղծման աշխատանքներին: Կերպարվեստի պատմությանը նվիրված հայերեն առաջին դասագիրքը բաղկացած է երեք գրքից: «ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2020 թ. լույս տեսավ ձեռնարկի առաջին գիրքը, որը ներկայացնում է նախնադարյան կերպարվեստից մինչև եվրոպական Վերածննդի դարաշրջանի կերպարվեստը:

Նշանակալի է Ա. Աղասյանի ներդրումը երիտասարդ կադրերի պատրաստման գործում: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական տասնչորս ատենախոսություն: Ակնհայտ է, որ նա գիտական դպրոցի հիմնադիր է. նրա սաներն այսօր ևս, հետևելով ուսուցչի օրինակին, շարունակում են նպաստը բերել հայրենական կերպարվեստի ուսումնասիրության գործին: Արվեստաբանի ասպիրանտների թվում են նաև Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները: 2008-ից ի վեր նա «Կերպարվեստ, ղեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ թեկնածուական որակավորման քննական հանձնաժողովի նախագահն է:

Ա. Աղասյանն ընդգրկվել է «Գրականության և արվեստի բնագավառում արվեստի ոլորտի «ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2009), «Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2011, 2013, 2015) և «Հանրապետության Նախագահի մրցանակների շնորհման» (2006-2009) արվեստի հանձնախմբերում: Նա ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, ՀՀ նկարիչների միության վարչության անդամ: Ընդգրկված է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Ռուսական արվեստի թանգարանի (պրոֆեսոր Արամ Աբրահամյանի հավաքածու), Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարանի» գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության» և «Գիտության աշխարհում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նորաստեղծ «Արվեստագիտական հանդեսի», ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսի, «Կանթեղ» գիտական պարբերականի, Ստեփանակերտի (Արցախի Հանրապետություն) «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական հոդվածների ժողովածուի խմբագրական խորհուրդների կազմում:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Ա. Աղասյանն արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2008), պարգևատրվել ՀՀ ԳԱԱ վաստակագրով (2016) ու պատվոգրով (2005), ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2008) և ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2008):

**ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ ԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ*

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871-1928) ստեղծագործական ժառանգության հրատարակման և ուսումնասիրության, այլ խոսքով՝ ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում:

Սպենդիարյանագիտության ասպարեզում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատանքներն ընթացել են հետևյալ ուղղություններով՝ Ալեքսանդր Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով (1951-1988), գիտական ուսումնասիրություններ (Քնարիկ Գրիգորյան՝ «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» (1952), «Александр Спендиаров. Статьи и исследования» գիտական հոդվածների ժողովածու (կազմող՝ Գևորգ Գյոդակյան, 1973) և բազմաթիվ գիտական հոդվածներ), կոմպոզիտորին առնչվող արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի հրատարակում (Գեորգի Տիգրանով՝ «А. Спендиаров. По материалам писем и воспоминаний», 1953), կոմպոզիտորի գրական ժառանգության՝ Նամականու հրատարակում (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան, 1962), կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում (կազմող՝ Մարինա Սպենդիարովա, 1975), հոբեյանական գիտական նստաշրջանների կազմակերպում (1951, 1971, 2021), «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմում և հրատարակում (կազմող՝ Ալեքսանդր Թադևոսյան, 1960) և այլն:

Քանալի բառեր՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Ալեքսանդր Սպենդիարյան, ակադեմիական սպենդիարյանագիտություն, Ալեքսանդր Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով, գիտական ուսումնասիրություններ, կոմպոզիտորի գրական ժառանգության՝ Նամականու հրատարակում, կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում:

Ներածություն

2021 թ. նոյեմբերի 1-ին լրացավ ուկրաինական Կախովկա քաղաքում ծնված, մանկության տարիներից մշտապես ուկրաինացիների հետ շփված և

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, annaasatryan2013@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 01.11.2021, գրախոսելու օրը՝ 08.11.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

ուկրաինական ժողովրդական երգեր մշակած, Մոսկվայում և Պետերբուրգում երաժշտական կրթություն ստացած, ղրիմյան Յալթայում ստեղծագործած ու լայն ճանաչում ձեռք բերած հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871-1928) ծննդյան 150-ամյա հոբելյանը:

Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով Ալ. Սպենդիարյանը 1924 թ. հոկտեմբերին տեղափոխվեց Երևան: Կոմպոզիտորի ստեղծագործության երևանյան շրջանն առանձնացավ բազմաժանրությամբ: Մի կողմից՝ կոմպոզիտորը երգչախմբի, ծայնի և դաշնամուրի կամ նվագախմբի համար կատարում է հեղափոխական երգերի, հայկական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումներ (այդ թվում՝ Սայաթ-Նովայի «Ղարիբ բլբուլ» երգը), մյուս կողմից՝ գործիքավորում «Ալմաստ» օպերան, որն առանձնահատուկ տեղ ունի հայ երաժշտության պատմության մեջ: Սպենդիարյանի երևանյան ստեղծագործություններից հայկական սիմֆոնիզմի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ պատկերը (1925), որտեղ կոմպոզիտորը շարունակում է «Ղրիմի էսքիզներում» սկիզբ առած՝ ժողովրդական կյանքից վերցրած պատկերների սիմֆոնիկ ուրվանկարների ստեղծման գիծը: Կոմպոզիտորն անդրադառնում է հայ ժողովրդի կենցաղին, ստեղծում ժողովրդական կյանքի տարբեր կողմերի ընդհանրացված կերպարներ:

Կոմպոզիտորի մահից հետո Երևանում սկիզբ առավ ու բեղմնավոր ճանապարհ անցավ ակադեմիական սպենդիարյանագիտությունը:

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգության հրատարակման և գիտական ուսումնասիրության բնագավառում:

Մեր նպատակն է բացահայտել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում:

Սպենդիարյանագիտության ասպարեզում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատանքներն ընթացել են հետևյալ ուղղություններով.

1. Ալեքսանդր Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակություն,
2. գիտական ուսումնասիրություններ (մենագրություններ, հոդվածների ժողովածու, գիտական հոդվածներ ու զեկուցումներ),
3. Ալեքսանդր Սպենդիարյանի գրական ժառանգության՝ Նամականու հրատարակում,
4. Ալեքսանդր Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում,
5. հոբելյանական գիտական նստաշրջանների կազմակերպում,
6. «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմում և հրատարակում և այլն:

Ակադեմիական սպենդիարյանագիտության ակունքներում

Քչերին է հայտնի, որ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը 1958-ին

ստեղծվեց ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի հիման վրա, որն իր հերթին 1948-ին կազմակերպվել էր ՀՍՍՀ ԳԱ համակարգում 1944-ին հիմնադրված՝ երաժշտության պատմության և տեսության սեկտորի հիման վրա: Ու միանգամայն տրամաբանական է, որ ակադեմիական արվեստագիտության առաջին գիտական միջոցառումները հենց երաժշտագիտական էին:

Այսպես՝ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հիմնադրումից (29 նոյեմբերի, 1943) ամիսներ անց նրա համակարգում է ընդգրկվում Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Արվեստի գործերի կոմիտեին ենթակա Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետը, որը կազմակերպվել էր դեռևս 1934 թ. փետրվարի 19-ին¹ Երևանի պետական կոնսերվատորիային կից, գործել որպես ինքնուրույն հիմնարկ՝ Արվեստի վարչության ցանցում, և հընթացս իր գործունեության տասը տարիների ստեղծել էր գիտական ուսումնասիրություններ կատարելու համար ամուր հենք ու մասնագիտական համապատասխան կադրեր: Ակադեմիայի համակարգում կաբինետը վերակառուցվում է երաժշտության պատմության, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև տեսության սեկտորի:

Ակադեմիայի նախագահությունը 1944 թ. մարտի 30-ի № 8 նիստի որոշմամբ, որոշ հավելումներով, հաստատում է սեկտորի թեմատիկ պլանը, ավագ գիտաշխատակիցներին՝ Քրիստափոր Քուչնարյանին, Արշակ Ադամյանին, Մուշեղ Աղայանին, Սրբուհի Լիսիցյանին, Գևորգ Բուդաղյանին, Հ. Հովհաննիսյանին, Ալեքսանդր Շահվերդյանին, Գեորգի Տիգրանովին, Արամ Քոչարյանին՝ ընդամենը ինը հոգու, և գիտական խորհրդի նոր կազմը: Սեկտորի վարիչ է հաստատվում նախկին կաբինետի վարիչ Գ. Տիգրանովը, իսկ գիտական քարտուղար՝ Ա. Քոչարյանը: Ակադեմիայի նախագահության 1944 թ. մայիսի 31-ի № 11 նիստի որոշմամբ սեկտորի վարիչ է նշանակվում Բ. Քուչնարյանը, իսկ գիտական քարտուղար՝ Գ. Բուդաղյանը²:

1944 թ. հոկտեմբերի 28-31-ը երաժշտության պատմության ու տեսության սեկտորը գումարում է գիտական սեսիա³, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս Ա. Քոչարյանը՝ «Երաժշտական գործիքները և գործիքային արվեստը Հայաստանում», Բ. Քուչնարյանը՝ «Շարականների լադային առանձնահատկությունները» և Գ. Տիգրանովը՝ «Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի երաժշտական դրամատուրգիան»⁴ թեմաներով⁵:

¹ Տե՛ս **Մազմանյան Ռ.**, Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն (1920-1945), Երևան, 1979, էջ 126:

² Ինստիտուտի ստեղծման և կապերի մասին տեղեկություններ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արխիվ, գործ № 17:

³ Տե՛ս **Մազմանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 280:

⁴ Տե՛ս Գեորգի Գրիգորի Տիգրանով - 100, կազմող՝ Ն. Ավետիսյան, Երևան, 2008, էջ 70:

⁵ Նկատենք, որ 1945 թ. ապրիլի 3-ին երաժշտության պատմության ու տեսության սեկտորը կազմակերպում է գիտական սեսիա՝ նվիրված Ռոմանոս Մելիքյանի մահվան 10-ամյակին, որտեղ զեկուցումներով հանդես են գալիս Ա. Քոչարյանը՝ «Հայ երաժշտական լեզվի զարգացման հիմնական էտապները և Ռոմանոս Մելիքյանի տեղն ու դերը հայ երաժշտության մեջ», և Կ. Մելիք-Վրթանեսյանը՝ «Ռոմանոս Մելիք-

ինչպես տեսնում ենք, Սպենդիարյանի ստեղծագործության ուսումնասիրությունը եղել է ակադեմիական երաժշտագիտության ակունքներում:

Նշենք նաև, որ սեկտորի հիման վրա 1948-ին ձևավորված ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորում ավելի ծավալուն է դառնում Սպենդիարյանի ստեղծագործության ուսումնասիրության գործը: 1948-1958 թթ. պաշտպանված երաժշտագիտական թեկնածուական ութ ատենախոսություններից երկուսը վերաբերում էին հենց Սպենդիարյանի ստեղծագործության ուսումնասիրության հարցերին:

Արվեստների պատմության ու տեսության սեկտորի ասպիրանտուրան 1951-ին ավարտած Քնարիկ Գրիգորյանը 1955-ին պաշտպանում է «Ալեքսանդր Սպենդիարյան (կյանքի ու ստեղծագործության բնութագրման փորձ)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը⁶, որի համար հիմք էր ծառայել հեղինակի՝ 1952-ին հրատարակած «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը:

Սեկտորի էքստերնատուրան 1953-ին ավարտած Միքայել Տեր-Մարտիրոսյանը (Տերյան) 1955-ին պաշտպանում է «Ալեքսանդր Սպենդիարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը⁷, որում կոմպոզիտորի սիմֆոնիկ երկերի տեսական վերլուծությունն էր:

Ալեքսանդր Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով (1951-1988)

Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության նախապատրաստման և իրականացման ուղղությամբ (Գևորգ Բուդաղյանի խմբագրությամբ) աշխատանքները մեկնարկեցին ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության՝ 1939 թ. նոյեմբերի 23-ի հրամանագրի հիման վրա: Դրանից օրեր առաջ Գևորգ Բուդաղյանը դիմում է ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին՝ Ալ. Սպենդիարյանի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության անհրաժեշտության խնդրանքով: Հանդիպման ընթացքում երաժիշտը համառոտ ներկայացնում է իրեն հուզող հարցի էությունը: «Ուշադիր լսելով ինձ, - հետագայում կհիշի Գևորգ Բուդաղյանը, - նա (Գրիգոր Հարությունյանը - Ա.Ա.) լիակատար հավանություն տվեց իմ նախագծին և ասաց, որպեսզի մեկ օր անց ես հանդիպեմ Արվեստի հարցերով վարչության պետ Անդրանիկ Քրիստափորի Շահինյանին: Երբ ես եկա Ա. Ք. Շահինյանի մոտ, նրա սեղա-

յանի երաժշտական ժառանգությունը» թեմաներով: 1945 թ. դեկտեմբերի 25-ին սեկտորը գումարում է գիտական սեսիա, որտեղ կարդացվում են հետևյալ զեկուցումները՝ Ալեքսանդր Շահվերդյանի՝ «Կոմիտասի էթնոգրաֆիկ ժառանգությունը», Քրիստափոր Քուշնարյանի՝ «Հայ եկեղեցական երաժշտության պատմական արմատների շուրջ», Գեորգի Տիգրանովի՝ «Տ. Չուխաջյանի օպերային ժառանգությունը» (տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ - 50, Երևան, 2010, էջ 26-27):

⁶ Տե՛ս **Григорян К.** Александр Спендиарян (Опыт характеристики жизни и творчества), Автореферат на соискание ученой степени кандидата искусствоведения, Ереван, 1955, 19 с.

⁷ Տե՛ս **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ - 50, էջ 36:

նին արդեն դրված էին մեքենագրված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: 1939 թվականի նոյեմբերի 23-ին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն ընդունեց հրամանագիր՝ Ա.Ա. Սպենդիարովի երկերի ակադեմիական լիակատար ժողովածուի հրատարակման վերաբերյալ: Ողջ հրատարակությունը՝ 11 հատորով, նախատեսված էր իրականացնել մի քանի տարիների ընթացքում՝ առանց ավարտի կոնկրետ ժամկետ նշելու: Խմբագիր նշանակվեցի ես»⁸:

Շուտով՝ 1943 թվականին, Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին (համընկավ Սպենդիարյանի մահվան 15-ամյա տարելիցի հետ) Հայկական ՍՍՀ ժողկոմսովետին կից արվեստի գործերի վարչության Ռ. Մելիքյանի անվան գիտահետազոտական կաբինետի ջանքերով Հայպետհրատը Հակոբ Կոջոյանի ձևավորմամբ լույս ընծայեց Սպենդիարովի «Ստեղծագործությունների լրիվ ժողովածուի» առաջին հատորը՝ Գևորգ Բուդաղյանի խմբագրությամբ, որն ընդգրկում էր կոմպոզիտորի ռոմանսներն ու երգերը՝ քառասուն համար. դրանցից տասնմեկը հրատարակվում էին առաջին անգամ: Խմբագրական հանձնաժողովում ընդգրկվել էին Գևորգ Բուդաղյանը, Ալեքսանդր Շահվերդյանը, Յ.Հ. Պողոսյանը, Կոնստանտին Սարաջևը, Զավեն Վարդանյանը, Գեորգի Տիգրանյանը, Արամ Քոչարյանը և Քրիստափոր Քուշնարյանը:

«Ներկա ժողովածուն,- կարդում ենք առաջին հատորի «Խմբագրական հանձնաժողովի կողմից» վերտառությամբ նախաբանում,- լինելով առաջինը՝ ընդգրկում է կոմպոզիտորի թե՛ նախապես հրատարակված և թե՛ մինչ այժմ ձեռագիր մնացած բոլոր ավարտված գործերը: Ամբողջ հրատարակությունը լույս է ընծայվելու տասնմեկ հատորով. առաջին հատոր – ռոմանսները և երգերը, երկրորդ հատոր – վոկալ անսամբլները, խմբերգերը, մելոդեկլամացիաները, ռուսական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումը, երրորդ հատոր – ինստրումենտալ փոքր գործերը, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ հատորները – սիմֆոնիկ ստեղծագործությունների պարտիտուրաները, իններորդ հատոր – սիմֆոնիկ գործերի հեղինակային քառաձեռք վերաշարադրումը դաշնամուրի համար, տասներորդ հատոր – «Ալմաստ» օպերայի կլավիրը, տասնմեկերորդ հատոր – «Ալմաստ» օպերայի պարտիտուրան»⁹:

Կոմպոզիտորի երկերի ժողովածուի հրատարակությունն իրականացվելու էր նախորդ հրատարակությունների և Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական գիտահետազոտական կաբինետում պահպանվող հեղինակային ձեռագրերի հիման վրա: Յուրաքանչյուր հատորի վերջում գետեղված ծանոթագրություններն ու առանձին հատորների նախաբանները պիտի պարունակեին տվյալ հատորի բովանդակության վերաբերյալ ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ փաստական տվյալներ:

Այսպիսով՝ կոմպոզիտորի «Ստեղծագործությունների լրիվ ժողովածուի» առաջին հատորի լույսընծայումով տրվեց Հայաստանում Սպենդիարյանի ստեղծագործությունների համակարգված հրատարակության մեկնարկը:

⁸ **Будагян Г.** Со Спендиаровым. Страницы воспоминаний, Ереван, 1999, с. 48.

⁹ **Սպենդիարով Ա.**, Ստեղծագործությունների լրիվ ժողովածու, Առաջին հատոր, Ռոմանսներ և երգեր, խմբագրություն՝ Գ. Բուդաղյանի, Երևան, 1943, էջ 17:

Տասնամյակների ընթացքում ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և սեստության սեկտորը, ապա՝ արվեստի ինստիտուտը հրատարակեցին կոմպոզիտորի Երկերի ժողովածուի մնացած տասը հատորները (1951-1988)՝ Գևորգ Բուդաղյանի խմբագրությամբ:

Իններորդ հատորում¹⁰ (1950 թ.) ընդգրկվեցին Սպենդիարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունների քառաձեռք փոխադրումները դաշնամուրի համար, ինչպես նաև նրա վաղ շրջանի երկու երկ՝ գրված դաշնամուրի քառաձեռք նվագաձայնի համար: Բոլոր փոխադրումներն արել էր Սպենդիարյանը, բացառությամբ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի, որի փոխադրումը Մ. Բեյլակի պատվերով և կոմպոզիտորի համաձայնությամբ կատարել էր Մաքսիմիլիան Շտեյնբերգը:

Հատորում առաջին անգամ քառաձեռք փոխադրությամբ հրապարակվեցին «Պոլոնեզը», «Սգո քայլերգը», «Սգո պրեյլուդը», «Պարայինը», ինչպես նաև չորս հատված «Ալմաստ» օպերայից:

Երրորդ հատորը¹¹ (1951 թ.) պարունակում է Սպենդիարյանի կամերային-գործիքային ստեղծագործությունները՝ մինչ այդ հայտնաբերված գործիքային մանրանվագները, որոնք հիմնականում վերաբերում են կոմպոզիտորի ստեղծագործության վաղ շրջանին, այդ թվում՝ ուսանողական տարիներին: Դրանց զգալի մասը հրատարակվեց առաջին անգամ:

Հատորը բաղկացած է չորս բաժնից, որոնցում ստեղծագործությունները դասավորված են ժամանակագրական կարգով: **Առաջին** բաժնում ընդգրկված են դաշնամուրային երկերը՝ «Վալս (Սի բեմոլ մաժոր)», «Վալս (Մի բեմոլ մաժոր)», «Սկենցո», «Մենուետ», «Բարկարոլա», «Ղայթարմա», «Օրորոցային», «Մենուետ», «Խիզախ մարտիկները», «Երգ, պար և ղայթարմա»: Այս բաժինը եզրափակում է «Երևանյան էտյուդների» փոխադրումը դաշնամուրի համար, որը կոմպոզիտորի խնդրանքով կատարել է Գևորգ Բուդաղյանը: **Երկրորդ** բաժնում ընդգրկված են ջութակի համար գրված ստեղծագործությունները՝ «Վալս», «Երգ», «Ռոմանս», «Օրորոցային», «Մելոդիա», «Կանցոնետտա», «Ղայթարմա»: **Երրորդ** բաժինը ներկայացնում է թավջութակի և դաշնամուրի համար գրված ստեղծագործությունները՝ «Ռոմանս (Սոլ մինոր)», «Ռոմանս (Ֆա մաժոր)», «Բարկարոլա (Սոլ մաժոր)» և «Բարկարոլա (Սոլ մինոր)»: Հատորը եզրափակում են գործիքային անսամբլները՝ «Պրեյլուդ», «Մենուետ», «Սկերցինո», «Ֆուգա» և «Ռոնդո»:

Չորրորդ հատորում¹² (1953 թ.) հիմնականում տեղ գտան կոմպոզիտորի ռոմանսների ու երգերի (այդ թվում՝ «Բարկարոլա», «Այ վարդ», «Արևելյան օրորոցի երգ», «Ձկնորսն ու փերին», «Օգիմանդիա», «Բեդա-քարոզիչը»,

¹⁰ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու: Հատոր իններորդ: Սիմֆոնիկ ստեղծագործություններ: Քառաձեռք փոխադրումներ դաշնամուրի համար: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1950, 270 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹¹ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հատոր երրորդ: Գործիքային ստեղծագործություններ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1951, 175 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹² Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հատոր չորրորդ: Պարտիտուրաներ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1953, 184 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

«Այ-Ջամաստ», «Այնտեղ, այնտեղ՝ դեպ վեհ այն դաշտը», «Օրորոցի երգ», «Պարի երգ», «Առ Հայաստան», «Առ սիրուհիս», «Էլմաս», «Սարի կեռաս է շուրթը քո» և «Ղարիբ բլբուլ»)՝ ստեղծագործական գործունեության տարբեր փուլերում կոմպոզիտորի գրած նվագախմբային պարտիտուրները:

Ի դեպ, «Այ վարդ», «Արևելյան օրորոցի երգ («Արի իմ սոխակ»)» և «Այ-Ջամաստ» ռոմանսների, ինչպես նաև «Էլմաս» և «Սարի կեռաս է շուրթը քո» երգերի պարտիտուրներն ու թավջութակի «Բարկարոլան» նվագախմբային պարտիաների հիման վրա վերականգնել էր Գևորգ Բուդաղյանը, իսկ «Ղարիբ բլբուլ» երգի պարտիտուրը՝ Անուշավան Տեր-Ղևոնդյանը: Այս պարտիտուրները, ինչպես նաև «Ձկնորսն ու փերին»՝ բասի և նվագախմբի բալլադի (հեղինակային վերջին խմբագրություն), «Օզիմանդիա» ռոմանսի, «Այնտեղ, այնտեղ՝ դեպ վեհ այն դաշտը» հերոսական երգի, «Առ Հայաստան» կոնցերտային արիայի և «Առ սիրուհիս» երգի պարտիտուրները հրատարակվեցին առաջին անգամ:

Երկրորդ հապորում¹³ (1955 թ.) ընդգրկվել էին «Գնանք, հեռանանք», «Ազատ թռչունը» և «Պաղեստինի ոստը» վոկալ անսամբլները, «Զինծված արտը», «Վ.Վ. Ստասովի հիշատակին» և «Փառքդ մե՛ծ, օր մայիսի» խմբերգերը, «Մենք կհանգստանանք» և «Էդելվեյս» մելոդեկլամացիաները, ռուսական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումներ և «Ուկրաինական սյուիտը»:

Հինգերորդ հապորում¹⁴ (1956 թ.) տեղ գտան «Պաղեստինի ոստը» (խոսք՝ Մ. Լերմոնտովի) կվարտետի պարտիտուրը՝ գրված խառը ձայների համար, նվագախմբի ընկերակցությամբ և «Էլեգիայի» (խոսք՝ Ն. Նեկրասովի) պարտիտուրը՝ գրված խառը խմբի ու մենակատար բասի համար, նվագախմբի ընկերակցությամբ: Երկուսն էլ առաջին անգամ տպագրվել էին 1903 թվականին Բեսսելի երաժշտական հրատարակչության կողմից:

Հատորում առաջին անգամ հրատարակվեցին «Մենք կհանգստանանք» մելոդեկլամացիայի (Սոնյայի մենախոսությունը Ա. Չեխովի «Քեռի Վանյան» պիեսից) և «Էդելվեյս» մելոդեկլամացիայի (ըստ Մ. Գորկու բանաստեղծության), ինչպես նաև երգչախմբի ու նվագախմբի համար գրված «Ուկրաինական սյուիտի» պարտիտուրները: Նշենք, որ այս ստեղծագործությունների կլավիրներն ընդգրկվել էին ներկա հրատարակության երկրորդ հատորում:

Վեցերորդ հապորդ¹⁵ (1960 թ.) գիտական շրջանառության մեջ դրեց կոմպոզիտորի՝ 1895-1905 թթ. գրած սիմֆոնիկ ստեղծագործությունների, այդ թվում՝ «Երկու պիես նվագախմբի համար. Մենուետ (օր. 3, № 1) և Օրո-

¹³ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հատոր երկրորդ: Վոկալ անսամբլեր, խմբերգեր, մելոդեկլամացիաներ, ռուսական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումներ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1955, 215 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹⁴ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հատոր հինգերորդ: Պարտիտուրաներ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1956, 175 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹⁵ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու: Հատոր վեցերորդ: Պարտիտուրաներ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1960, 286 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

րոցային, օր. 3, № 2» (1897), «Հինավուրց պար» (օր. 12, 1896), «Համերգային նախերգանք» (օր. 4, 1900), «Ղրիմի էսքիզներ (առաջին սերիա)» (օր. 9, 1903) և Մ. Լերմոնտովի բանաստեղծության հիման վրա գրված «Երեք արմավենի» (օր. 10, 1905) սիմֆոնիկ պատկերի պարտիտուրները: Հատորում զետեղվեց նաև «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերի Նախանվագը, որը հրատարակվեց առաջին անգամ:

Յոթերորդ հատորը¹⁶ (1962 թ.) պարունակում է 1907-1925 թթ. ստեղծված սիմֆոնիկ ստեղծագործությունների, այդ թվում՝ Սպենդիարյանի հսկողությանը տպագրված գործերից «Համերգային վալսի» (օր. 18, 1907), «Սգո պրելյուդի» (օր. 20, 1908), «Ղրիմի էսքիզների» երկրորդ սերիայի (օր. 23, 1912), մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Խիզախ մարտիկները» քայլերգի (օր. 26, 1915) և «Երևանյան էտյուդների» (օր. 30, 1925) պարտիտուրները: Հատորում առաջին անգամ, ըստ կոմպոզիտորի ձեռագրի, հրատարակվեցին երկու մաս «Ղրիմի էսքիզների» երկրորդ սերիայից և «Էտյուդ հրեական թեմաներով» ստեղծագործության (1921)՝ գործիքային պարտիաների հիման վրա վերականգնված պարտիտուրները:

Ութերորդ հատորում¹⁷ (1964 թ.) ներառվեցին երկու սյուիտներն «Ալմաստ» օպերայից և օպերայի եզրափակիչ տեսարանը՝ «Դավաճանություն» սիմֆոնիկ պատկերը: Բացառությամբ «Պարսկական քայլերգի», որի պարտիտուրը Հայպետհրատը հրատարակել էր 1932 թվականին, երկու սյուիտների և «Դավաճանություն» սիմֆոնիկ պատկերի պարտիտուրները հրատարակվեցին առաջին անգամ:

Սպենդիարյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակությունը եզրափակեցին **տասներորդ** (1971)¹⁸ և **տասնմեկերորդ** (երկու գրքով, 1984, 1988)¹⁹ հատորները, որոնցում համապատասխանաբար հրատարակվեցին «Ալմաստ» օպերայի կլավիրոն ու պարտիտուրը:

«Ալմաստ» օպերայի կլավիրի հրատարակության համար ընդունվեց կոմպոզիտորի հավանությանն արժանացած ռուսերեն տեքստը, որը ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հանձնարարությամբ թարգմանեց բանաստեղծ Պարույր Միքայելյանը: Ակադեմիական հրատարակության համար հիմք ծառայեցին Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության արվեստի և գրական-

¹⁶ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու: Հատոր յոթերորդ: Պարտիտուրաներ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1962, 258 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹⁷ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու: Հատոր ութերորդ: Երկու սյուիտ և սիմֆոնիկ պատկեր «Ալմաստ» օպերայից: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1964, 286 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹⁸ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու: Հատոր տասներորդ: Ալմաստ: Օպերա չորս գործողությամբ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1971, 295 էջ, նոտաներ, 1 թ. նկ.:

¹⁹ Տե՛ս Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հատոր տասնմեկերորդ, գիրք առաջին: Ալմաստ, օպերա չորս գործողությամբ, պարտիտուր: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1984, 406 էջ, նոտաներ, 1 թ. նկ.: Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հատոր տասնմեկերորդ, գիրք երկրորդ: Ալմաստ, օպերա չորս գործողությամբ, պարտիտուր: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1988:

նության թանգարանի Սպենդիարյանի ֆոնդում պահվող օպերայի առաջին, երկրորդ և երրորդ գործողությունների ձեռագիր պարտիտուրի բնագիրը, առաջին և երկրորդ սյուիտների, ինչպես նաև «Դավաճանություն» սիմֆոնիկ պատկերի պարտիտուրների ձեռագրերը և Սպենդիարյանի ձեռագիր կլավիրը, Մարինա Սպենդիարովայի անձնական արխիվում պահվող երկու սյուիտները՝ նվագախմբային ձայներին վերաբերող խմբագրական վերջին ուղղումներով, որ կատարել էր կոմպոզիտորը, և որոնք հնչել էին հեղինակի ղեկավարությամբ, ինչպես նաև Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի թանգարանում գտնվող օպերայի առաջին, երկրորդ և երրորդ գործողությունների պարտիտուրի ձեռագրի պատճենը, որտեղ Մ. Շտեյնբերգի ձեռքով լրացված են հեղինակի բաց թողած շտրիխները, դինամիկայի, տեմպի նշանները, ինչպես նաև հեղինակի բաց թողած առանձին տակտերի գործիքավորումը, օպերայի չորրորդ գործողության պարտիտուրը, որը գործիքավորել էր Մ. Շտեյնբերգը:

Սպենդիարյանի երաժշտական ժառանգության ակադեմիական հրատարակությունն ունեցավ կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ դրա շնորհիվ ոչ միայն մոռացությունից փրկվեց կոմպոզիտորի ժառանգությունը, այլև այն մատչելի դարձավ երաժիշտ-կատարողների և հետազոտող-գիտնականների համար ամբողջ աշխարհում՝ նպաստելով կոմպոզիտորի ստեղծագործության զանգվածային պրոպագանդան հույժ կարևոր գործին:

Գիտական ուսումնասիրություններ

ՀՍՍՀ ԳԱ երաժշտության պատմության ու տեսության սեկտորի առաջին լուրջ հետազոտությունները նվիրված էին Սպենդիարյանի ստեղծագործության ուսումնասիրությանը: Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ 1952-ին լույս տեսավ Քնարիկ Գրիգորյանի «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» մենագրությունը²⁰, որի պատասխանատու խմբագիրն էր Մուշեղ Աղայանը:

«Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի առջև խնդիր է դրված ոչ միայն մշակել հայկական արվեստի պատմության և տեսության հրատապ հարցերը, - կարողում ենք ՀՍՍՌ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի ներկայացրած «Երկու խոսք» վերտառությամբ առաջաբանում, - այլև ստեղծել գիտա-հանրամատչելի աշխատություններ հայ արվեստի (երաժշտության, ճարտարապետության, թատրոնի և կերպարվեստի) ականավոր ներկայացուցիչների մասին՝ տալով նրանց կյանքի, գործունեության և ստեղծագործության սեղմ բնութագիրը: Այս աշխատությամբ Արվեստների պատմության և տեսության սեկտորը դնում է գիտա-հանրամատչելի գրքերի ծրագրված սերիայի սկիզբը»²¹:

²⁰ Տե՛ս **Գրիգորյան Ք.**, Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1952, 144 էջ:

²¹ Նույն տեղում, էջ 3:

Աշխատության նպատակն էր մի կողմից՝ համառոտ ներկայացնել Ալ. Սպենդիարյանի կյանքն ու գործունեությունը՝ տալով նրա ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, մյուս կողմից՝ ընթերցող լայն շրջանակներին ծանոթացնել կոմպոզիտորի կյանքին ու գործունեությանն առնչվող արխիվային նոր փաստաթղթերն ու ստեղծագործությունները:

Աշխատության վեց գլուխներում հեղինակը, համապատասխանաբար, ուրվագծել է Ալ. Սպենդիարյանի կյանքի ուղին, քննության առել նրա ստեղծագործական ժառանգությունը՝ անդրադառնալով վոկալ, սիմֆոնիկ, կամերային-գործիքային ստեղծագործություններին և «Ալմաստ» օպերային: Ուսումնասիրության համար նյութ են ծառայել կոմպոզիտորի ձեռագիր ու տպագիր շուրջ 150 ստեղծագործությունները, ավելի քան 2000 նամակները, նրա մասին հուշերն ու արխիվային այլազան վավերագրեր: Մենագրության կարևոր արժանիքներից են կոմպոզիտորի ստեղծագործությունների ցանկը (էջ 131-140) և նրա մասին եղած գրականության ցանկը (էջ 141-142)²²:

Ակադեմիական սպենդիարյանագիտության մեջ կարևոր հանգրվան դարձավ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 1973-ին ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության լույս ընծայած «Александр Спендиаров. Статьи и исследования» գիտական հոդվածների ժողովածուն, որի կազմողը Գևորգ Գյոդակյանն էր: Ժողովածուի խմբագիրներն էին Գևորգ Գյոդակյանն ու Մարգարիտա Ռուխկյանը: Ժողովածուի մեջ քննության էին առնվել Ալ. Սպենդիարյանի ստեղծագործական գործունեության տարբեր նիստերը, հայ և ռուս երաժշտական մշակույթի առաջադեմ ներկայացուցիչների հետ ունեցած նրա առնչությունները: Ժողովածուում նշանակալի ուշադրություն էր հատկացվել կոմպոզիտորի ստեղծագործության ոճի և դրամատուրգիայի առանձնահատկությունների, երաժշտական լեզվի խնդիրների բացահայտմանը:

Ժողովածուում, որը ծնվեց հայ ականավոր կոմպոզիտորի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ, ընդգրկվեցին ժամանակի երաժշտագիտական մտքի առաջատարների հոդվածները՝ Գևորգ Գյոդակյանի ««Ալմաստ» օպերան (պատմա-քննադատական էտյուդ)», Գեորգի Տիգրանովի «Ա.Ա. Սպենդիարովի մեկ նոտային տետրի մասին», Մարգարիտա Ռուխկյանի ««Երեք արմավենին» և ռուսական օրիենտալիզմը», Կարինե Խուդաբաշյանի «Ա. Սպենդիարովի ստեղծագործության մեջ ժողովրդական նյութի մշակման որոշ սկզբունքների մասին» և «Ա. Սպենդիարովի «Ալմաստ» օպերայի լիբրետոյի հեղինակը՝ Սոֆյա Պարնոկ», Մարգարիտա Տեր-Սիմոնյանի «Սպենդիարովի ծրագրային սիմֆոնիզմը», Անահիտ Գրիգորյանի «Սպենդիարովի

²² Նկատենք, որ Սպենդիարյանի մասին առաջին հետազոտությունը Ալեքսանդր Շահվերդյանի «А.А. Спендиаров» գրքույկն էր, որը լույս էր տեսել Մոսկվայում 1939-ին և ելակետ դարձել հետագա ուսումնասիրությունների համար: Գրքույկում հեղինակը լուսաբանել էր կոմպոզիտորի կյանքի կարևորագույն փուլերը և բնութագրել հիմնական ստեղծագործությունները: Միևնույն ժամանակ՝ Ալ. Շահվերդյանի ձեռքի տակ չեն եղել բազմաթիվ արխիվային նյութեր, որի պատճառով կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգությունը լիարժեք չի լուսաբանվել: Սպենդիարյանի կյանքի ու ստեղծագործության հետագա ուսումնասիրության փորձը Սամսոն Գասպարյանի աշխատությունն էր (Երևան, 1951):

կամերային-վոկալ ստեղծագործությունը», Միքայել Տերյանի «Երաժշտական ոճի որոշ գծեր», Մաթևոս Մուրադյանի «Հայրենասիրական թեման Սպենդիարովի ստեղծագործության մեջ» և Ռաֆայել Ստեփանյանի «Սպենդիարովի մեկ տոնայնական-մոդուլյացիոն պլանի մասին՝ նրա հարմոնիայի լույսի ներքո» արժեքավոր ուսումնասիրությունները:

Խորհրդանշական է, որ ժողովածուն բացվում է Արամ Խաչատրյանի «Ոգեշնչված արվեստագետը» վերտառությամբ առաջաբանով²³, որտեղ հեղինակը ներկայացնում է պատառիկներ իրենց բազմաթիվ՝ ինչպես պաշտոնական, այնպես էլ կիսապաշտոնական ու ընկերական, հանդիպումներից: «Մեծ երախտագիտությամբ եմ հիշում ես Ալեքսանդր Աֆանասևիչի վերաբերմունքն իմ՝ սկսնակ կոմպոզիտորի հանդեպ: Ես հսկայական հուզմունքով նրա դատին էի հանձնում իմ առաջին կոմպոզիտորական փորձերը, բայց իմ ստեղծագործության հանդեպ նրա խոհուն, լուրջ վերաբերմունքը, ուշադրությունն ու հոգատարությունը ոգեշնչում ու խրախուսում էին ինձ: Ալեքսանդր Աֆանասևիչը, լինելով խիստ ու բարյացակամ քննադատ, ընդգծում էր և՛ լավը, և՛ բացթողումները՝ ոչինչ բաց չթողնելով: Նրա հետ հանդիպումը դարձավ իմ ճակատագրի վճռորոշ շրջադարձային պահերից մեկը, քանի որ այն ժամանակ՝ 1922 թվականին, ես Մոսկվայի համալսարանի ուսանող էի»²⁴:

Ա. Խաչատրյանը նկատում է, որ Սպենդիարյանին նախորդած հայ կոմպոզիտորները հիմնականում սահմանափակվում էին վոկալ ժանրերով: «Սպենդիարովը ուղիներ բացեց սիմֆոնիկ երաժշտության զարգացման համար՝ ամենախոր ընկալմամբ: Սա դարձավ իսկական հեղափոխություն: Անմիջապես բարձրացավ հայ երաժշտության «առաստաղը», միանգամայն այլ դարձան նրա մասշտաբներն ու չափանիշները: Հենց այդժամ որոշվեցին մեր երաժշտական արվեստի զարգացման ուղիները հետագա տասնամյակների համար»²⁵:

Եզրափակելով խոսքը՝ Ա. Խաչատրյանը գրում է. «Անհնար է պատկերացնել սովետահայ երաժշտական մշակույթի շինարարությունն առանց Սպենդիարյանի: Հենց Ալեքսանդր Աֆանասևիչի նախածեռնության, եռանդի ու ջանքերի շնորհիվ կազմակերպվեց Երևանի կոնսերվատորիային կից սիմֆոնիկ նվագախումբը՝ հանրապետության առաջին ազգային նվագախումբը: Դժվար է գերազնահատել Սպենդիարովի նշանակությունը Հայաստանի համար ինչպես ստեղծագործության բնագավառում, այնպես էլ հասարակական կյանքում: Նա հանրապետության երաժշտական իրականության մեջ ներմուծեց ռուս դասական երաժշտության բարերար ազդեցությունը՝ Գլինկայից մինչև իր ուսուցիչ Ռիմսկի-Կորսակով, բարձր պրոֆեսիոնալիզմը, սերը դեպի ժողովրդական արվեստը: Իր ստեղծագործությամբ, իր խոսքով նա այդ ավան-

²³ Արամ Խաչատրյանը, ապրելով ու ստեղծագործելով Մոսկվայում, սերտորեն կապված էր ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ: Տե՛ս **Ասատրյան Ա.**, Արամ Խաչատրյանը և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, «Պատմաբանասիրական հանդես», 2018, № 3, էջ 17-37:

²⁴ **Хачатурян А.** Вдохновенный художник, Александр Спендиаров. Статьи и исследования, Ереван, 1973, с. 5.

²⁵ Նույն տեղում, էջ 6:

դույթները տեղափոխեց ազգային հողի վրա՝ դրանով իսկ նշելով հետագա զարգացման համար ելակետը: Գուցե՝ կարիք չկա փնտրել նրա ստեղծագործության հետևորդներ: Կարծում եմ՝ կարևորը դա չէ: Հայաստանի կոմպոզիտորները՝ Սպենդիարովի ժառանգորդները, վերցրեցին նրանից ստեղծագործական էստաֆետը և տանում են առաջ՝ յուրաքանչյուրն իր տաղանդի ու անհատականության համապատասխան: Եվ Սպենդիարովի ստեղծած այդ ավանդույթների կենսունակության, նրա ստեղծագործական սկզբունքների արդյունավետության ապացույցն է հայ երաժշտության ծաղկումն այսօր»²⁶:

«Александр Спендиаров. Статьи и исследования» գիտական հոդվածների ժողովածուի հոդվածներից հատկապես ուզում եմ առանձնացնել Գևորգ Գյոդակյանի ուսումնասիրությունը: Նկատենք, որ Ալ. Սպենդիարյանի մասին երաժշտագետի առաջին հոդվածը հրատարակվել է ճիշտ 70 տարի առաջ. Ա. Սպենդիարյանի ծննդյան 80-ամյակի առիթով «Сталинец» թերթի 1951 թ. նոյեմբերի 2-ի համարում տպագրվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժնի շրջանավարտ, 23-ամյա երաժշտագետ Գ. Գյոդակյանի «Классик армянской музыки. К 80-летию со дня рождения» վերնագրով հոդվածը: Հետագայում Սպենդիարյանի ստեղծագործության ուսումնասիրությունը մշտապես մնաց Գ. Գյոդակյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Նշենք դրանցից մի քանիսը՝ «Սովետական արվեստի» 1958 թ. 7-րդ համարում նա հրապարակում է Ռոմանոս Մելիքյանի հուշերը Ալ. Սպենդիարյանի մասին, որոնք հետագայում տեղ գտան «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուում (1960), 1961-ին՝ Մոսկվայում, «Музыкальная жизнь» ամսագրի 1961 թ. 21-րդ համարում՝ «Александр Спендиаров» հոդվածը, «Պատմաբանասիրական հանդեսի» 1971 թ. 1-ին համարում՝ «Ալեքսանդր Սպենդիարյան» հոդվածը և այլն:

Ինչ վերաբերում է «Александр Спендиаров. Статьи и исследования» գիտական հոդվածների ժողովածուում տպագրված ««Ալմաստ» օպերան (պատմա-քննադատական էտյուդ)» հոդվածին, ապա երաժշտագետը, վիճարկելով օպերայի ընդունված ժանրային բնորոշումը որպես հերոսական-հայրենասիրական, բացահայտելով «Ալմաստի» հոգեբանական ուղղվածությունը՝ այն բնութագրում է որպես հոգեբանական: «Ինչպես խորը արվեստագետ-հոգեբան,- գրում է Գ. Գյոդակյանը,- Սպենդիարովը բացահայտում է Ալմաստի մոտ այդ կործանիչ կրքի առաջացումն ու զարգացումը: Եվ մարդու մեջ իսկական մարդկայինի փլուզման այդ տեսարանը թողնում է ամենադառն ու մռայլ տպավորություն՝ ողջ օպերան գունազարդելով դառն ու մռայլ երանգներով»²⁷: Մյուս կողմից՝ դատապարտելով գլխավոր հերոսուհու դավաճանությունը, կոմպոզիտորը միևնույն ժամանակ «ցույց է տալիս նրա բարոյական վերածնունդը: Որպես հումանիստ-կոմպոզիտոր նա հավատում է,

²⁶ Նույն տեղում, էջ 7:

²⁷ **Геодакян Г.** Опера «Алмаст» (историко-критический этюд), Александр Спендиаров. Статьи и исследования, Ереван, 1973, с. 29.

որ չարությունն ու հանցագործությունը հակասում են և անհարիր են մարդու իսկական էությանը, թեև կարող են իրենց հաղթանակը տոնել այս աշխարհում»²⁸:

Ակադեմիական սպենդիարյանագիտության մեջ կարևոր նշանակություն են ունեցել Գեորգի Տիգրանովի, Մաթևոս Մուրադյանի, Կարինե Խուդաբաշյանի, Մարգարիտա Ռուֆսյանի, Անահիտ Գրիգորյանի, Աննա Արևշատյանի, Նազենիկ Սարգսյանի, Աննա Ասատրյանի և այլոց գիտական ուսումնասիրությունները, երաժշտաքննադատական ու հրապարակախոսական հոդվածները նույնպես:

Ալ. Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում (կազմող՝ Մարինա Սպենդիարովա, 1975)

Ակնհայտ է, թե ինչ կարևոր նշանակություն ունեն տարեգրական աշխատանքները գիտական հետազոտությունների իրականացման համար: ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 1975 թվականին Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս է ընծայում «Ա. Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն» սովորաբար հատորը (ավելի քան 520 էջ), որը կազմել էր կոմպոզիտորի դուստրը՝ Մարինա Սպենդիարովան: Պատասխանատու խմբագիրն էր ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Գևորգ Գյոդակյանը:

«Տարեգրության» մեջ, որը վերստեղծում է Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործական ուղին, ընդգրկվել էին նորահայտ նյութեր՝ անտիպ նամակներ, ժամանակակիցների անհայտ կամ սակավ հայտնի ասույթներ: «Մ.Ա. Սպենդիարովայի գիրքը,- կարդում ենք «Խմբագրի կողմից» վերտառությամբ առաջաբանում,- ըստ էության խոշորագույն կոմպոզիտոր, հայ երաժշտության դասական Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովի կյանքին ու ստեղծագործական ուղուն առնչվող փաստաթղթերի ու նյութերի առաջին ընդգրկումն ու համակարգված հրատարակությունն է (նմանատիպ աշխատություններից կարելի է հատկապես առանձնացնել՝ Գ. Տիգրանովի «Спендиаров», Երևան, 1953 թ. և «Ал. Спендиаров. Письма», կազմող՝ Բ. Գրիգորյան, Երևան, 1962): Գրքում օգտագործվել են կոմպոզիտորի և նրա շրջապատի նամակները, մամուլի արձագանքներ, համերգների ծրագրեր, արխիվային վավերագրեր և այլն: Վկայությունների ու փաստերի այս խիստ վավերագրական համահավաքը, ըստ էության, հանդիսանում է Ա.Ա. Սպենդիարովի կյանքի և ստեղծագործության իսկական տարեգրությունը, և իր այդ նշանակությամբ գիրքը խիստ արժեքավոր նյութ է ծառայում նրա ստեղծագործական կենսագրության հետագա ուսումնասիրողների համար»²⁹: Ի դեպ, նման տարեգրական աշխատանքների հրատարակումը խիստ հազվադեպ երևույթ է հայ երաժշտագիտության մեջ: Եվ դա հասկանալի է, քանի որ տարեգրության կազմումն աշխատատար ու ժամանակատար գործընթաց է,

²⁸ Նույն տեղում, էջ 30:

²⁹ **Геодакян Г.** От редактора. **Спендиарова М.** Летопись жизни и творчества А.А. Спендиарова, Ереван, 1975, с. 5.

որը հեղինակից պահանջում է տարիների ու տասնամյակների լարված ու տքնաջան աշխատանք:

Ըստ էության, Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը դարձավ հայ կոմպոզիտորների և, առհասարակ, երաժիշտների ոչ միայն առաջին, այլև մինչև օրս՝ միակ տարեգրությունը: Ու կարելի է զարմանալ, որ ցայսօր չունենք անգամ Կոմիտասի կյանքի և ստեղծագործության առանձին հրատարակված տարեգրություն, եթե չհաշվենք ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու, հոգելույս Խաչիկ Սամվելյանի կազմած Կոմիտասի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որը հատվածաբար հրատարակվել է ինչպես «Սովետական արվեստ», այնպես էլ «Էջմիածին» պարբերականներում և մաս դարձել «Կոմիտաս» պլեոմի:

Պետք է փաստել, որ «Ա. Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը» դուրս է գալիս սովորական տարեգրության շրջանակից: «Հրատարակվող նյութերի լիարժեքությունը, դրանց մտածված գրական «մոնտաժն» այս գիրքը դարձնում են Ա.Ա. Սպենդիարովի ինքնատիպ վավերագրական ստեղծագործական կենսագրություն, հնարավորություն ընձեռում հետևելու կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության հիմնական փուլերը, որոնք խիստ անհրաժեշտ են նրա անձի, գեղարվեստական սկզբունքների, ազգային երաժշտության մեջ ստեղծագործական ներդրումի ճշմարիտ ըմբռնման համար: Այսպես, «Տարեգրության» մեջ հայտնվում ու հետո կարմիր թելով անցնում են «Սպենդիարովը և ռուսական երաժշտական մշակույթը», «Սպենդիարովը և հայ մշակույթի գործիչները», «Սպենդիարովը և հայ երաժիշտները», «Սպենդիարովը և Սովետական Հայաստանը» և այլ թեմաները: Այդ թեմաները ստանում են լիարժեք, կոնկրետ և շատ վառ լուսաբանում: Սպենդիարովի, նրա դարաշրջանի ու շրջապատի՝ ընթերցանության ընթացքում ստեղծվող *կերպարն* ընթերցողի համար դառնում է սրտամոտ ու թանկ: Դրանով իսկ գիրքը դառնում է հետաքրքիր ոչ միայն մասնագետների, այլև ընթերցող լայն շրջանների համար»³⁰:

«Տարեգրությունը» բաղկացած է «Մանկությունը», «Ուսանողական տարիները», «Ռիմսկի-Կորսակովի հետ պարապմունքների տարիները», «Յալթայի շրջանը», «Աշխատանքն «Ալմաստ» օպերայի վրա» և «Հայաստանում» բաժիններից:

Ա. Սպենդիարյանին վերաբերող արխիվային փաստաթղթերի և վավերագրերի հրապարակում

ՀՍՍՀ ԳԱ երաժշտության պատմության ու տեսության սեկտորում Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությանը զուգընթաց՝ աշխատանքներ էին ծավալվում նրա նամականու, ինչպես նաև նրա մասին հուշագրության հրատարակության ուղղությամբ: 1953-ին լույս տեսավ Գեորգի Տիգրանովի «А. Спендиаров. По материалам писем и воспоминаний» աշխատությունը, որը Սպենդիարյանի կյանքի ու գործունեության

³⁰ Նույն տեղում, էջ 5-6:

կարևոր կողմերը լուսաբանող բազմաբնույթ նյութերի և փաստաթղթերի՝ նամակների, հուշերի առաջին ընդարձակ համահավաքն էր:

Աշխատության նորույթն ու կարևորությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հայ երաժշտության պատմության արխիվային նյութերի գիտական մշակման ծայրահեղ անբավարար վիճակը: «Բավական է նշել,- կարդում ենք գրքի ընդարձակ առաջաբանում, որը հեղինակել է Ալեքսանդր Շահվերդյանը,- որ մինչ օրս դեռևս նկարագրված չէ Կոմիտասի արխիվը, հրատարակված չեն նրա նամակները, ավելին՝ իրականացված չէ նրա հողվածների և ուսումնասիրությունների գիտական, ստուգված և ծանոթագրված լիակատար ժողովածուի հրատարակումը»³¹:

Այս տեսակետից՝ Տիգրանովի սույն գիրքը դառնում է կարևոր առաջընթաց հայ երաժշտության պատմության մեջ փաստաթղթերի ու վավերագրերի հավաքման, ուսումնասիրման ու հրապարակման ասպարեզում: Հեղինակն ընթերցողին է ներկայացնում Երևանի, Մոսկվայի ու Լենինգրադի ձեռագրային ֆոնդերում իր մանրագնին ու ծայրահեղ աշխատատար աշխատանքի արդյունքները: Գրքում ընթերցողը գտնում է Սպենդիարյանի ստեղծագործությունը հասկանալու երկու կարևոր բանալիները: «Ամենից առաջ, լիարժեքորեն ներկայացված են Սպենդիարյանի անձնական, ստեղծագործական, գաղափարական բազմազան բարդ կապերը ռուսական կլասիկայի հետ: Մյուս կողմից՝ նույնքան լիարժեքորեն ներկայացված է Սպենդիարյանի՝ հրաշալի հայ կոմպոզիտորի, անխոնջ երաժշտական-հասարակական գործչի ազգային ինքնատիպությունը»³²:

Տիգրանովի աշխատությունն ամրապնդեց Սպենդիարյանի կյանքի և ստեղծագործության հետազա ուսումնասիրության համար գիտական հուսալի հիմքը:

Ալ. Սպենդիարյանի գրական ժառանգության՝ Նամականու հրատարակում (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան, 1962)

Հայտնի է, թե ինչ կարևոր նշանակություն ունի տվյալ արվեստագետի նամականու հրատարակումն ինչպես նրա գեղագիտական հայացքների, ստեղծագործական սկզբունքների ու աշխարհայացքի բացահայտման, այնպես էլ ստեղծագործության ուսումնասիրության համար: Դեռևս 1958-ին «ՀՍՄԻ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների» գիտական պարբերականի (1966-ից՝ «Լրաբեր հասարակական գիտությունների») 10-րդ համարի «Հաղորդումներ» բաժնում տպագրվեց Քնարիկ Գրիգորյանի «Ա. Սպենդիարյանի նորահայտ նամակները» հոդվածը³³: Այդ տարիներին գրականության և արվեստի թանգարանում պահվող Սպենդիարյանի արխիվում կար մոտ 2000 նամակ: Դրանք Սպենդիարյանի, Ռիմսկի-Կորսակովի, Գլազունովի, Լյադովի, Արենսկու, Կյուրի, Հովհաննես Հովհաննիսյանի, Վարդգես

³¹ **Тигранов Г. А.** Спендиаров. По материалам писем и воспоминаний, Ереван, 1953, с. 3.

³² Նույն տեղում, էջ 4:

³³ Տե՛ս **Գրիգորյան Ք.**, Ա. Սպենդիարյանի նորահայտ նամակները, ՀՍՄԻ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, 1958, № 10, էջ 103-106:

Սուրենյանցի, Յուրի Վեսելովսկու, Նիկողայոս Տիգրանյանի, Ռոմանոս Մելիքյանի նամակներն էին, որոնցից տպագրվել էին 25-30-ը: Ք. Գրիգորյանն այս ֆոնդից առանձնացնում է և մանրամասն ներկայացնում կոմպոզիտորի՝ օպերային և համերգային երգչուհի, ռեժիսոր և մանկավարժ Վարվառա Ապրյունովնա Էբերլեին (1870, որոշ տվյալներով՝ 1873-1943) հասցեագրած նամակները³⁴: Նրա հետ Սպենդիարյանը հանդիպումներ է ունեցել «Մոսկվայում 90-ական թվականներին՝ իր երիտասարդական շրջանում»³⁵:

Ք. Գրիգորյանը Սպենդիարյանի նամականուց ընտրում է հատկապես Էբերլեյան էջը, քանի որ մի կողմից՝ իրենց հետաքրքրականությամբ հանդերձ, դրանք անձանոթ էին երաժշտական հասարակայնությանը, իսկ մյուս կողմից՝ «լույս են սփռում Սպենդիարյանի կյանքի մի շրջանի վրա, որի վերաբերյալ քիչ տվյալներ և փաստաթղթեր են պահպանվել»³⁶: Այդ յոթ նամակները, որոնք Ք. Գրիգորյանը հայտնաբերել էր Մոսկվայում՝ ՍՍՀՄ երաժշտական կուլտուրայի կենտրոնական թանգարանում³⁷, ընդգրկում են 1893-1894 թվականները:

Այսպիսով, Ք. Գրիգորյանը ոչ միայն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Սպենդիարյանի հարուստ նամականու Էբերլեյան էջը, այլև նկատեց. «Ծանոթանալով այս նամակներին, մենք տեսնում ենք, որ դեռևս երիտասարդական շրջանում դրսևորվել են կոմպոզիտորի ինքնուրույնությունը արվեստի երևույթների գնահատման հարցում, նրա նուրբ ճաշակը, էսթետիկական հստակ դիրքավորումները և մարդկային հոգու թանկագին հատկությունները՝ անկեղծությունը, անմիջականությունը, ջերմ սերը»³⁸:

Ալ. Սպենդիարյանի նամականու հայտնաբերման, ուսումնասիրության և հրատարակման հետ կապված աշխատանքը Ք. Գրիգորյանը շարունակեց նաև հետագայում: Դրա հանրագումարը դարձավ ՀՍՍՀ ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ 1962 թվականին ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության լույս ընծայած Ալ. Սպենդիարյանի գրական ժառանգության երկրորդ հատորը՝ Սպենդիարյանի Նամականին, որը, բնականաբար, կազմել ու ծանոթագրել էր Քնարիկ Գրիգորյանը: Նա նաև առաջաբանի հեղինակն էր:

Իր բեղմնավոր գործունեության ողջ ընթացքում կոմպոզիտորը նամակագրության մեջ է եղել հայ և ռուս մշակույթի ականավոր գործիչների՝ կոմպոզիտորներ Ն. Ռիմսկի-Կորսակովի, Ա. Գլազունովի, Ա. Լյադովի, Ա. Արենսկու, Ֆ. Բլումենֆելդի, Ս. Վասիլենկոյի, Ն. Տիգրանյանի, Ռ. Մելիքյանի, ջութակահար Հ. Նալբանդյանի, երգչուհիներ Ե. Զբրուևայի, Ե. Մրավինայի,

³⁴ Քնարիկ Գրիգորյանի վերոհիշյալ հոդվածի մասին տե՛ս **Ասատրյան Ա.**, Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական սպենդիարյանագիտության ձևավորումն ու զարգացումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2021, № 1, էջ 178-181:

³⁵ **Գրիգորյան Ք.**, Ա. Սպենդիարյանի նորահայտ նամակները, էջ 103:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Հետագայում՝ 1962 թ., այս նամակների բնագրերը հրատարակվեցին կոմպոզիտորի Նամականիում, որը կազմեց Ք. Գրիգորյանը:

³⁸ **Գրիգորյան Ք.**, Ա. Սպենդիարյանի նորահայտ նամակները, էջ 106:

Հ. Դանիելյանի և Վ. Էբերլեի, դիրիժորներ Վ. Անդրեևի և Ա. Օռլովի, երաժշտագետներ Ն. Ֆինդեյզենի և Ա. Օստովսկու, բալետմայստեր Մ. Ֆոկի-նի, նկարիչ Վ. Սուրենյանցի ու քանդակագործ Ս. Մերկուրովի հետ:

Նամականին, որն ընդգրկում էր 1880-1927 թվականները, բաղկացած է երկու ծավալուն բաժնից՝ «Ա. Սպենդիարովի նամակները» և «Նամակներ Ա. Սպենդիարովին»: Կազմողն ընտրել է այն նամակները, որոնք այս կամ այն չափով լուսաբանում են կոմպոզիտորի ստեղծագործական և երաժշտական-հասարակական գործունեությունը, բացահայտում բացառիկ զգայուն հոգու տեր մարդու բարոյական բարձր նկարագիրը: Հատորում ընդգրկված նամակներն ընթերցողին ծանոթացնում են Սպենդիարյանի գեղագիտական հայացքներին, բնութագրում նրան որպես արվեստագետ-քաղաքացու և երաժշտական-հասարակական խոշոր գործչի, բացահայտում նրա աշխարհայացքի դեմոկրատիզմն ու հումանիզմը:

Գիտական նստաշրջանների կազմակերպում (1951, 1971, 2021)

Նշենք, որ 1948-54 թթ. ընթացքում ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորի կազմակերպած գիտական երեք նստաշրջանից մեկը Ալ. Սպենդիարյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտական նստաշրջանն էր, որը տեղի ունեցավ 1951-ի նոյեմբերի 5-ին, և որը կազմակերպվել էր Երևանի պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ (մյուսները՝ 1949-ի հոկտեմբերի 4-ին Երևանի արվեստի աշխատողների տանը ՀՍՍՌ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համատեղ գումարած՝ Կոմիտասի 80-ամյակի շրջանակներում հրավիրված ու նրան նվիրված առաջին գիտական սեսիան էր³⁹ և 1950-ին գումարված՝ արվեստի բնագավառում Սովետական Հայաստանի ունեցած 60-ամյա նվաճումներին նվիրված գիտաժողովը):

1971 թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ կոմպոզիտորի 100-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջանը: Բացման խոսքում արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը տվել է Սպենդիարյանի ստեղծագործության հակիրճ բնութագիրը և ընդգծել այն խոշոր նշանակությունը, որ նա ունեցել է հայ դասական երաժշտության զարգացման գործում: Արվեստագիտության թեկնածու Նիկողոս Թահմիզյանը «Ալ. Սպենդիարյանի երաժշտական լեզվամտածողության զարգացումը» բանախոսության մեջ ցույց է տվել այն էվոլյուցիան, որին ենթարկվել է կոմպոզիտորի երաժշտական ոճը՝ ընդհանուր եվրոպականից դեպի նոր արևելյան: «Ալմաստ» օպերայի ժանրային հատկանիշների բնութագրության հարցերին էր նվիրված Գևորգ Գյոդակյանի զեկուցումը: Նա «Ալմաստը» բնութագրեց որպես դրամատիկական, խոր հոգեբանական օպերա, որի մեջ առկա է նաև հայրենասիրական թեման⁴⁰:

³⁹ Տե՛ս **Կիրակոսյան Մ.**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները, Երևան, 2021, էջ 30-31:

⁴⁰ Տե՛ս **Մուրադյան Մ.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Ալ. Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1971, № 4, էջ 291:

«Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմումը և հրատարակումը (կազմող՝ Ալ. Թադևոսյան, 1960)

1960-ին լույս տեսավ «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուն, որը կազմել էր Ալեքսանդր Թադևոսյանը: Նա նաև հայերեն էր թարգմանել ռուսերեն հուշագրությունները: Ժողովածուում ընդգրկվեցին Ա. Գլազունովի, Ս. Վասիլենկոյի, Մ. Գնեսինի, Մ. Շտեյնբերգի, Ա. Օստվակու հիշողությունները, որոնք ճանաչում էին կոմպոզիտորին դեռևս ուսանողական նստարանից, Բ. Ասաֆևի, Ն. Տիգրանյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Մ. Միրզոյանի, Ռ. Ստեփանյանի հուշագրությունները: «Ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում Մ. Սարյանի, Ավ. Իսահակյանի, Ա. Թամանյանի, Նվարդ Թումանյանի՝ ժողովածուում զետեղված հիշողությունները, - կարդում ենք ժողովածուի առաջաբանում, որը հեղինակել է Գևորգ Տիգրանյանը, - նշված հիշողությունները, մասնավորապես, բովանդակում են արժեքավոր տեղեկություններ «Ալմաստի» վրա Սպենդիարյանի կատարած աշխատանքի, Հ. Թումանյանի հետ նրա հանդիպումների, ժողովրդական երաժշտության նկատմամբ նրա վերաբերմունքի և, վերջապես, ստեղծագործական վերջին մտահղացումների մասին: Հետաքրքրությամբ կկարդացվեն Սպենդիարյանի աղջկա՝ Մարինա Սպենդիարովայի և կոմպոզիտորի մանկության ընկեր Գ. Մելիկենցևի շատ աշխույժ գրված հուշերը»⁴¹:

Եզրակացություններ

Այսպիսով՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում Սպենդիարյանի ժառանգության ուսումնասիրությանը հորեյանից հորեյան չի իրականացվում: Այն ինստիտուտի երաժշտագետների մշտական գիտական հետաքրքրությունների կենտրոնում է:

Սպենդիարյանագիտության ասպարեզում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատանքներն ընթացել են հետևյալ ուղղություններով՝ Ալեքսանդր Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով (1951-1988), գիտական ուսումնասիրություններ (Քնարիկ Գրիգորյան՝ «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը», 1952, «Александр Спендиаров. Статьи и исследования» գիտական հոդվածների ժողովածու (կազմող՝ Գևորգ Գյոդակյան, 1973), կոմպոզիտորին առնչվող արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի հրապարակում (Գեորգի Տիգրանով՝ «А. Спендиаров. По материалам писем и воспоминаний», 1953), կոմպոզիտորի գրական ժառանգության՝ Նամականու հրատարակում (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան, 1962), կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում (կազմող՝ Մարինա Սպենդիարովա, 1975), հորեյանական գիտական նստաշրջանների կազմակերպում (1951, 1971, 2021), «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմում և հրատարակում (կազմող՝ Ալ. Թադևոսյան, 1960) և այլն:

⁴¹ Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին, Երևան, 1960, էջ 7-8:

Հորեյանական տարում՝ 2021 թվականին, սպենդիարյանագիտական միջոցառումները դառնում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական գործունեության առանցքը: Դրանց հանրագումարը կդառնա 2021 թ. դեկտեմբերի 14-16-ը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի՝ Սպենդիարյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ կազմակերպվող «Ալեքսանդր Սպենդիարյան – 150» միջազգային եռօրյա գիտական նստաշրջանը, որի աշխատանքներին մասնակցելու են ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Նիդեռլանդների և Շվեդիայի ներկայացուցիչները: Միջգիտակարգային գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու են ինչպես երաժշտագետներ ու երաժիշտներ, այնպես էլ արվեստաբաններ, գրականագետներ, մշակութաբաններ: Գիտական նստաշրջանի արդյունքները, որոնք ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ կիրատարակվեն 2022 թվականի սկզբին, կարտացոլեն միջազգային սպենդիարյանագիտության արդի վիճակը և, վստահ ենք, կարևոր ներդրում կդառնան ակադեմիական սպենդիարյանագիտության մեջ:

ВКЛАД ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА В СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ АКАДЕМИЧЕСКОГО СПЕНДИАРЯНОВЕДЕНИЯ

АННА АСАТРЯН

Неоценим вклад Института искусств НАН РА в изучение и издание творческого наследия выдающегося представителя армянской классической музыки, основоположника основы армянской симфонической музыки, композитора, дирижера и музыкально-общественного деятеля Александра Спендиаряна (1871-1928), иными словами – в становление и развитие академического спендиаряноведения. Исследования в области спендиаряноведения в Институте искусств проводились в следующих направлениях: академическое издание полного собрания сочинений Александра Спендиаряна в 11-ти томах (1951-1984), научные изыскания (Кнарик Григорян – «Александр Спендиаров (жизнь и творчество» (1952)), Георгий Тигранов – «Александр Спендиаров. По материалам писем и воспоминаний» (1953), «Спендиаров Александр: Статьи и исследования» (сборник научных статей, 1973), а также множество научных статей, издание литературного наследия композитора, в частности, писем (Кнарик Григорян, 1962), подготовка к изданию летописи жизни и творчества композитора (составитель – Мария Спендиарова, 1975), организация юбилейных научных конференций (1951, 1971, 2021), публикация сборника «Современники об А. Спендиаряне» (составитель – Александр Тадевосян, 1960) и т.д.

Ключевые слова – Институт искусств НАН РА, Александр Спендиарян, спендиаряноведение, академическое издание полного собрания сочинений Александра Спендиаряна в 11-ти томах, научные исследования, литературное

наследие композитора – издание писем, подготовка к изданию летописи жизни и творчества композитора.

THE CONTRIBUTION OF NAS RA INSTITUTE OF ARTS TO FORMATION AND DEVELOPMENT OF ACADEMIC SPENDIARYAN STUDIES

ANNA ASATRYAN

The contribution of NAS RA Institute of Arts to the formation and development of academic Spendiaryan Studies is outstanding. It includes publication and research of the creative legacy of the prominent representative of Armenian classical music, the founder of Armenian symphonic music, the composer, conductor and musical-and-public figure Alexander Spendiaryan (1871-1928).

In the field of Spendiaryan Studies, NAS RA Institute of Arts carried out its works in the following directions: academic publication of complete “Collected Works of Alexander Spendiaryan” in 11 volumes (1951-1988); scholarly research: Knarik Grigoryan’s “Alexander Spendiaryan. Life and Oeuvre” (1952), Georgi Tigranov’s “Alexander Spendiaryan. Based on Letters and Recollections” (in Rus., 1953), collected scholarly papers “Alexander Spendiaryan. Articles and Researches” (in Rus., compiled by Gevorg Geodakian, 1973), and many other scholarly papers; publication of the composer’s literary legacy: “Collection of Letters” (compiled by Knarik Grigoryan, 1962); compilation and publication of the chronicle of the composer’s life and oeuvre (compiled by Maria Spendiaryanova, 1975); organization of anniversary academic conferences (1951, 1971, 2021); compilation and publication of the collection “Contemporaries about Al. Spendiaryan” (compiled by Alexander Tadevosyan, 1960), etc.

Key words – NAS RA Institute of Arts, Alexander Spendiaryan, academic Spendiaryan Studies, academic publication of complete “Collected Works of Alexander Spendiaryan” in 11 volumes, scholarly research, publication of the composer’s literary legacy: “Collection of Letters”, compilation and publication of the chronicle of the composer’s life and oeuvre.

ՀՏԴ : 929:781(479.25) Սպենդիարյան + 929:891.981Թումանյան + 781(479.25) + 891.981

<https://doi.org/10.52853/25792830-2021.2-33>

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ «ԱԼՄԱՍՏ» ՕՊԵՐԱՅԻ ԼԻԲՐԵՏՈՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԹՄԿԱԲԵՐՂԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԸ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ*

Ալեքսանդր Սպենդիարյանին հուզել է «Թմկաբերդի առումը» պոեմը, որը քննում էր չարի ու բարու հավերժական պայքարի մեջ գտնվող խնդիրը: Մարդու լավագույն գործի անմահության գաղափարը, դավաճանության դատապարտումը, որը գալիս է դարերի խորքից և կա նաև քրիստոնեական սրբազան մատյաններում, հուզել են և՛ Թումանյանին, և՛ Սպենդիարյանին: Թեպետ Թումանյանը գերզբաղվածության պատճառով չի կարողացել գրել «Ալմաստ» օպերայի լիբրետոն, սակայն բանավոր ձևով ներշնչել է կոմպոզիտորին: Լիբրետոյի հեղինակ Սոֆյա Պարնոկը «Ալմաստ» օպերան գրելիս ծանոթ է եղել Նադիր Շահի պատմական կերպարին և Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ռուսերեն թարգմանություններին:

«Ալմաստ» օպերայում տեղ են գտել հասվածներ, որոնք Պարնոկը քաղել է «Անուշ» օպերայից:

Օպերայի լիբրետոյի հայերեն թարգմանիչ Տիգրան Հախումյանը լիբրետոյի ռուսերեն բնագիրը թարգմանելիս հարազատ է մնացել Թումանյանի լեզվին ու ոճին:

«Ալմաստ» օպերայի և «Թմկաբերդի առումը» պոեմի հիմքում ընկած հերոսին դավաճանող կնոջ կերպարը թափառիկ սյուժե է և առկա է այլ ժողովուրդների բանահյուսության ու գրականության մեջ:

Թե՛ Թումանյանին և թե՛ Սպենդիարյանին ոգեշնչել է դավաճանին պատժված տեսնելու իրողությունը և նրա սև գործի նկատմամբ դարերով չմոռացվող անարգանքը:

Բանայի բառեր՝ «Թմկաբերդի առումը», «Ալմաստ», Ալեքսանդր Սպենդիարյան, պոեմ, լիբրետո, հայրենասիրություն, դավաճանություն:

Ներածություն

Վաղուց արդեն բազմաթիվ հետազոտություններ են գրվել Ալեքսանդր Սպենդիարյանի կյանքի, կոմպոզիտորական, մանկավարժական, հասարակական գործունեության ու նամակագրության վերաբերյալ:

Ինչ-որ առումով նրա կյանքը համընկել է հասարակական մեծ հեղաբեկումների ժամանակաշրջանին, որոնք իրենց խոր հետքն են թողել արվեստագետի ստեղծագործության և կենսապայմանների վրա: Մեծ կոմպոզիտորի նամակներից պարզ է դառնում, թե ինչպես 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նրա ապահով ու բարեկեցիկ կյանքը Ղրիմի իր ամառանոցում, որը գտնվում էր Յալթայի մոտ, այն աստիճան վատթարանում է, որ

* Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, aelita.dolukhanyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 30.10.2021, գրախոսելու օրը՝ 06.11.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

նա քաղցած օրեր է անցկացնում և ստիպված թողնում է բնակավայրը և մեկնում Թեոդոսիա: 1924-ին, ի թիվս մյուս հայրենասեր մտավորականների՝ Մ. Սարյան, Հ. Մանանդյան, Թ. Թորամանյան, Հր. Աճառյան և ուրիշներ, Ալ. Սպենդիարյանը հաստատվում է Երևանում՝ իր նպաստը բերելով 1915 թվականի ցեղասպանության ազգակործան հետևանքները ամոքող Հայաստանի մշակութային կյանքին: Չնայած «Ալմաստ» օպերան գրելու մտահղացումը ծագել է 1916-ին, սակայն այն իրականացվել է, երբ Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր:

«Թմկաբերդի առումը» պոեմի ներշնչող ուժը

Գրականագիտությանը հայտնի է, թե ինչի հիման վրա է գրվել «Թմկաբերդի առումը» էպիկական պոեմը, որը հաստատապես հայտնի է ամեն մի հայի: Ավելին, պոեմի «Նախերգանքում» արտահայտված մտքերը մանուկ հասակից սովորեցնում են յուրաքանչյուր հայ երեխայի.

Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
 Մեր ծնընդյան փուչ օրից,
 Հերթով գալիս, անց ենք կենում
 Էս անցավոր աշխարհից:
 ... Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
 Անե՛ծք նըրա չար գործին,
 Որդիդ լինի, թե հերն ու մեր,
 Թե մուրազով սիրած կին¹:

«Ալմաստ» օպերան ստեղծվել է «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա: Օպերայի լիբրետոյի և պոեմի բովանդակային առնչություններին եղել են մի շարք անդրադարձեր: Դրա մասին խոսել է մեծագույն թումանյանագետ Էդվարդ Զրբաշյանը, խնդրին հատուկ հոդված է նվիրել Լիլի Տեր-Մինասյանը²:

Հայ կնոջ դավաճան լինելու փաստը խորթ է մեր ազգային հոգեբանությանը: Դրա առհավատչյան հայ առաջին ժողովրդական վեպն է, որը սկսվում է «Հայկ և Բել» առասպելով ու ավարտվում «Արտաշես և Արտավազդ» ճյուղով: Այդ վեպի «Տիգրան և Աժդահակ» հատվածի Տիգրանուհու կերպարը հայ առաջին հայրենասեր կնոջ կերպարն է. վերջինս, վտանգելով իր կյանքը, ապահովում է Հայաստանի պետականության գոյությունը, երբորը՝ Տիգրան Երվանդյանին, հատուկ գաղտնի սուրհանդակով հաղորդելով թշնամու հարձակման մասին: Հենց այդ հայրենասիրական անձնագրի փաստն էլ ի նկատի ունենալով՝ պատմահայրը նրան բնութագրում է որպես «խորագետ գեղեցկուհի»³:

¹ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ տասը հատորով, հ. IV, Երևան, 2020, էջ 61-62:

² Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 52-53, Լ. Տեր-Մինասյան, «Պոեմից մինչև օպերա» (տե՛ս «Սովետական արվեստ», 1969, էջ 14-19):

³ **Մովսես Խորենացի**, «Հայոց պատմություն», Երևան, 1981, էջ 95:

Նույն ձևով անձնագրի քայլի է դիմում մեր ազգային երկրորդ վեպի հերոսուհին՝ Ծովինարը, որը գերադասում է ամուսնանալ կռապաշտ թագավորի հետ, միայն թե իր երկիրը չավերվի.

Ե՛ս մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,
Էն հազար-հազար հոգիք կորուսանին⁴:

Թումանյանն իր պոեմի նյութը քաղել է Երվանդ Լալայանի «Ջավախքի բուրմունք» ժողովածուի երկրորդ գրքից⁵:

Էդ. Ջրբաշյանը փաստեր է բերում, ըստ որի կնոջ դավաճանությամբ հերոսի պարտությունը թափառիկ սյուժե է: Այն կա և՛ վրացական, և՛ հարավսլավական, և՛ պարսկական բանահյուսության մեջ:

Հետաքրքիր է, որ երևույթն իր դրսևորումն է ստացել տարբեր ժողովուրդների իմաստախոսությունների մեջ: Հայտնի է ֆրանսիական իմաստախոսությունը. «Cherchez la femme»- «Փնտրեցե՛ք կնոջը» նշանակում է «Կնոջ մատը խառն է», «Ищите женщину-в ней все дело»: Այս աֆորիզմը պատմությունը վերագրում է XVIII դարավերջի և XIX դարասկզբի նշանավոր ֆրանսիական պետական գործիչ Թալեյրանին⁶:

Ուշագրավ է, որ մեր ազգային հերոս զորավար Անդրանիկն էլ համակարծիք է եղել ժողովրդական իմաստության մտքին: Պատմաբան Մորուս Հասրաթյանն իր հուշերում, նվիրված Անդրանիկ զորավարին, ունի հետևյալ փաստը: Մեծ զորավարն ասում էր. «Ամուսնացած մարդիկ դյուրությամբ անձնագրի հայրենասերներ չեն կարող դառնալ»⁷:

Հայտնի է, թե ինչ պայմաններում է մտահղացել Սպենդիարյանը «Ալմաստ» օպերա գրելու գաղափարը: Այդ խնդրի վերաբերյալ կան բազմաթիվ վկայություններ: Կոմպոզիտոր Ազատ Մանուկյանը, որը ներկա է եղել 1916 թվականին Թիֆլիսում տեղի ունեցած Սպենդիարյանի համերգին, հիշում է, թե ինչպես, համերգից հետո տեղի ունեցած հյուրասիրության սեղանի մասնակիցներին դիմելով, կոմպոզիտորն ասել է. «Ես սիրում եմ հայ ժողովրդին, խոստանում եմ ուսումնասիրել հայկական երաժշտությունն ու գրականությունը և գրել մի օպերա: Արդեն ծանոթացել եմ Հովհաննես Թումանյանի բանաստեղծություններից մի քանիսին, կարդացել եմ «Թմկաբերդի առումը» և շատ հավանել եմ, որոշել եմ գրել օպերա և այստեղից մեկնելուց հետո անմիջապես կսկսեմ այդ աշխատանքը»⁸:

Սպենդիարյանն իր 1916-ի և հետագա տարիներին գրած նամակներում հաճախ է խոսել «Ալմաստ» օպերայի լիբրետոյի մասին՝ շեշտելով նաև,

⁴ «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 6:

⁵ **Հովհ. Թումանյան**, ԵԼԺ, հ. IV, էջ 716:

⁶ Французско-русский фразеологический словарь, Москва, 1963, с. 466.

⁷ **Մորուս Ս. Հասրաթյան**, Հուշաբեկորներ, Արձակ էջեր և..., Բեյրութ, 2007, էջ 31:

⁸ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2009, էջ 515:

թե արևելյան ու հայկական ժողովրդական երգերը պետք են իրեն «Ալմաստ» օպերայում դրվելու համար⁹:

1916 թվականի հոկտեմբերի 20-ին Հովհ. Թումանյանին իր ամառանոցից՝ Սուդակից, գրած նամակում Սպենդիարյանը Թումանյանին տեղեկացնում է, թե մեկ ամսից կամենում է կնոջ հետ գալ Թիֆլիս, տեսնելու, թե բանաստեղծը ինչ է արել իր սքանչելի պոեմը սցենարի վերածելու համար, հանդիպել ու հաճելի գրուցել Թումանյանի հետ: Լինելով շատ կրթված մարդ՝ նա նաև ավելացնում է. եթե Թումանյանը դեռ ոչինչ չի արել պոեմը սցենարի վերածելու գործում, ապա ինքը Թիֆլիսում կգրադվի նյութ հավաքելով¹⁰:

Իսկ 1916 թվականին Վառվառա Սպենդիարյանին ուղղված նամակում գրում է, թե օրվա մեծ մասն անցկացրել է Թումանյանի հետ, որն իր օպերայի համար գրել է հիանալի սցենար¹¹:

Այս նամակին կցված ծանոթագրությունը տեղեկացնում է, թե բանաստեղծի արխիվում «Ալմաստ» օպերայի լիբրետոն չի գտնվել: Հետագայում այդ օպերայի համար լիբրետո է գրել ռուս բանաստեղծուհի Սոֆյա Պարնոկը¹²:

1919-ի օգոստոսի 12-25-ին Սպենդիարյանը նամակ է ուղարկել Հայ երաժիշտների և տեսաբանների միության, որից իմանում ենք, որ կոմպոզիտորին հրավիրել են Երևան՝ դառնալու Հայաստանի առաջին նորաբաց կոնսերվատորիայի դիրեկտորը: Նա հրաժարվել է, ասելով, թե երիտասարդ չէ ու իր հետագա ողջ կյանքը նվիրելու է ստեղծագործելուն: Հայտնում է, թե Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի մոտիվներով 4 գործողությամբ օպերա է գրում¹³:

Բոլոր դեպքերում Նվարդ Թումանյանի հուշերից հայտնի է դառնում, որ օպերայի «Ալմաստ» անվանմանը Թումանյանը մասնակից է եղել: Նա առաջարկել է օպերայի խորագիրը դնել «Գոհար», սակայն քանի որ «Գոհարը» նույն Ալմաստն է, Սպենդիարյանը այն կոչել է «Ալմաստ»¹⁴:

1922 թ. հունվարի 16-ին Սոֆյա Պարնոկին գրած նամակում Սպենդիարյանը մանրամասն պատմում է, թե ինչ երաժշտությամբ է լինելու օպերան, և որոնք են Ալմաստի ու Թաթուլի երգերի մեղեդիները¹⁵:

Յալթայից 1925 թ. հուլիսի 6-ի նամակից իմանում ենք, որ «Ալմաստ» օպերայի երաժշտության համար օգտագործել է Նիկողայոս Տիգրանյանի ժողովրդական երգերի մշակումները¹⁶:

Գ. Տիգրանովի գրքից իմանում ենք, թե ինչ մեծ իրադարձություն է եղել «Ալմաստի» բեմադրությունը Մոսկվայում՝ Մեծ թատրոնում, Հայաս-

⁹ Спендиаров Ал. Письма, Ереван, 1962, с. 429.

¹⁰ Նույն տեղում, էջ 142-143:

¹¹ Նույն տեղում, էջ 144:

¹² Նույն տեղում, էջ 430:

¹³ Նույն տեղում, էջ 149:

¹⁴ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. IV, էջ 721:

¹⁵ Спендиаров Ал. с. 150.

¹⁶ Նույն տեղում, էջ 166:

տանի արվեստի տասնօրյակի ժամանակ, որին ներկա է եղել նաև Ի. Ստալինը¹⁷:

1948 թ. մարտին Մոսկվայում տեղի ունեցած ԽՍՀՄ կոմպոզիտորների միության առաջին համագումարում միության նախագահ Տիտոն Խրենիկովը շատ բարձր է գնահատել Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան և վերջինիս մի շարք ստեղծագործությունները՝ դրանք համարելով խորհրդային ժողովուրդների դասական երաժշտության մեջ մեծարժեք ներդրում¹⁸:

Բնականաբար, «Ալմաստ» օպերայի լիբրետոն պետք է տարբերվեր պոեմի բովանդակությունից: Այն հիմնված է բազմաթիվ երգվող երկխոսությունների վրա ու հարստացված է նոր կերպարներով:

Թումանյանը պոեմը գրելուց առաջ փորձել է պարզել ժողովրդական պատումի պատմականությունն ու այցելել է Թմուկ բերդի ավերակները: Մանավանդ այդ վայրերի հետ է կապվում նրա նաև մեկ ուրիշ հիանալի քերթվածը՝ «Փարվանա» լեգենդը: Պահպանված է լուսանկար, որում Թումանյանը հեռադիտակով նայում է բերդի ավերակներին:

«Ալմաստ» օպերայի՝ Պարնոկի գրած լիբրետոյի ուշադիր ընթերցումը պարզորոշ ներկայացնում է, որ բանաստեղծուհին ու կոմպոզիտորը խորհրդակցել են սցենարի խնդիրներում: Պարնոկը, անշուշտ, ծանոթ է եղել որոշակի պատմական աղբյուրների, որոնք ներկայացնում էին, թե ով է եղել Նադիր Շահը, ու ինչ ռազմական հաջողություններ է նա ունեցել:

Ըստ պատմաբան Լեոյի՝ «գողերի առաջնորդ» ավագակապետ ու դաժան Նադիրը եղել է կատարյալ բռնակալ, որից դողում էր Արևելքը: Նա իրեն համարում էր «երկրորդ Ալեքսանդր Մակեդոնացի»¹⁹:

Զարմանալիորեն այդ դաժան բռնակալը ջերմ հարաբերություններ է ունեցել Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացու հետ, որը և գրել է Նադիր շահի պատմությունը՝ «Պատմագրության անցիցն իւրոց և Նատր շահին Պարսից»²⁰: Պարսկաստանյան պատերազմների ժամանակ Աբրահամ Կրետացին իր աջակցությունն է հայտնել Պարսից շահին և, ի պատասխան դրա, Մայր Աթոռն ազատել է հարկերից, ընդարձակել է Ս. Էջմիածնի կալվածքները, շահից ստացել է 15-կիլոգրամանոց ոսկե ջահ, ազատել է ու հայրենիք վերադարձրել յոթ հազար հայ և վրացի գերիների:

Ռուս բանաստեղծուհու սցենարում էլ Նադիր շահը պատկերված է իր աշխարհակալական ձգտումներով:

«Ալմաստ» օպերայի լիբրետոն հայերեն է թարգմանել անվանի գրականագետ, Թումանյանին անձամբ ճանաչող²¹, մեծ բանաստեղծի մասին եզակի հուշեր թողած Տիգրան Հախումյանը:

Ըստ լիբրետոյի՝ Նադիր շահն իրեն համեմատում է Լենկ Թեմուրի հետ: Ահա թե ինչ է ասում նա իր մասին. «Կասպից ծովի ալիքն էլ ետ գնա,

¹⁷ **Тигранов Г.** По материалам писем и воспоминаний, Ереван, 1953, с. 99.

¹⁸ Նույն տեղում, էջ 101:

¹⁹ **Լեո**, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. V, Երևան, 1986, էջ 494:

²⁰ Ամենայն Հայոց կաթողիկոսներ, Խմբագրությամբ Պետրոս Հովհաննիսյանի, Երևան, 2001, էջ 224:

²¹ Տե՛ս **Հախումյան Տ.**, Հուշեր, Երևան, 1987, էջ 3-13:

հոգիս կայրի ցասման կրակը, թող բերդը պաշարեն զորքերն արագ, թող մահ տեսնի գյավուրն աչքի առաջ»²²:

Թումանյանի պոեմում ո՛չ Լենկ Թեմուրի անունը կա և ո՛չ էլ Կասպից ծովի տեղանունը:

Պոեմում չկան զորավարներ, սուրհանդակներ, դայակներ, սպարապետ, ծաղրածու, իշխանուհուն սպասարկող Գայանե և այլ կերպարներ:

Տիգրան Հախումյանը լիբրետոյի հայերեն տարբերակն ավելի է մոտեցրել Թումանյանի պոեմին: Ահա մի քանի հատվածների համեմատություններ:

«Թմկաբերդի առումը»

-Մի՛ պարծենա, **գոռոզ Նադիր**,
Պատասխանեց է՛ն հըսկան,
Գըլխովը շա՛տ ամպեր կանցնեն,
Սարը միշտ կա անսասան (էջ 62):

«Ալմաստ»

Ինչու՞ է զուր շտապում **գոռոզ Նադիրը**,
Ամուր են դեռ հայոց բերդի պատերը (էջ 43-44):

Թումանյանի պոեմում ոչ մի անգամ չի ասվում, թե Թմկա տիրուհին հայուհի է: «Ալմաստ» օպերայում շեշտվում է, այն էլ մի քանի անգամ, իշխանուհու հայ լինելը.

«Ալմաստ»

Դեմքը ասես ճերմակ է, քան Աբուլը,
Ծով են ու կրակ աչքերը վառ,
Վարդ են **հայուհու** այրող շուրթերը,
Թև կառնեն նրա սիրուց սրտերը:
...Այդ կնոջ սիրով աշուղն էլ քաջ է
Սազն առած կերթա մահվան առաջ էլ,
Այդ փերու գրկում առյուծ դառած
Հայ Թաթուլն է միշտ նետվում առաջ (էջ 48):

«Թմկաբերդի առումը»

Ծով են աչքերը Ջավախքի դըստեր,
Ու կորչում է մարդ նըրա հայացքում,
Ճակատը ճերմակ է՛ն ձյունից էլ դեռ,
Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:
Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
Նըրա սիրովն է հարբած է՛ն հըսկան,
Նըրա ժպիտն է քաջին ուժ տալի,

²² «Ալմաստ» օպերայի լիբրետոյի հատվածները բերվում են հետևյալ գրքից՝ Սպենդիարով Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու: Հատոր տասներորդ: Ալմաստ: Օպերա չորս գործողությամբ: /Խմբ.՝ Գ. Բուդաղյան/, Երևան, 1971, 295 էջ, նոտաներ, 1 թ. նկ.: Մեջբերման էջերը կնշվեն վերևում:

Որ դաշտն է իջնում առյուծի նըման (էջ 64):

Թումանյանն իր պոեմում հիշատակում է միջնադարի պարսիկ հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսու մի ասույթը քաջին կործանող գինու և կնոջ մասին.

Էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուբյուլը՝ անմահ Ֆիրդուսին.

Ի՞նչը կըհաղթի կյանքում հերոսին,
Թե չըլինին

Կինն ու գինին (էջ 65):

Պոեմի այս հատվածը մի քանի անգամ կրկնվում է օպերայի լիբրետոյում.

«Ալմաստ»

Այդպես է ասել հընուց այդ մասին

Բլբուլը ֆարսի՝ անմահ Ֆիրդուսին,

Անհաղթ հերոսին ի՞նչ կարող է հաղթել,

Թե չլինի կինն ու գինին (էջ 50-51):

Թե՛ պոեմում և թե՛ օպերայում Թմկա տիրուհուն իր ամուսնու նկատմամբ ունեցած սիրուց ճակատագրորեն շեղում է թագուհի դառնալու փառքի հեռանկարը: Այդ պահն առավել խորացված է օպերայում, որում Ալմաստի տվայտանքները նրան հանգիստ չեն տալիս: Օպերայի սկզբում նա ամուսնուն անկեղծ սիրող գեղանի կին է, որը շարունակ երազում է նրա սերը, տագնապում սիրեցյալ ամուսնու կյանքի և իր նկատմամբ ունեցած սիրո համար: Այս հատվածները ռուս բանաստեղծուհին քաղել է Վալերի Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուում եղած «Անուշ» պոեմի բրյուսովյան թարգմանությունից.

«Ալմաստ»

Բարձր սարից ջուրն է իջնում,

Երգն է գնգում խոր ձորում,

Մի խեղճ աղջիկ մորմոքում է

Սիրտն է յարի ցավն այրում (էջ 81):

«Անուշ»

Ամպի տակից ջուր է գալի,

Դոշ է տալի, փըրփրում,

Էն ո՞ւմ յարն է նըստած լալի

Հոնգուր-հոնգուր էն սարում²³:

Տիգրանովի գրքում հաստատուն ձևով կրկնվում է այն միտքը, թե Կոմիտասը պատգամում էր գնալ ու սովորել մեծագույն արարչից՝ ժողովրդից²⁴:

²³ Հովի. Թումանյան, ԵԼԺ, հ. III, Երևան, 2019, էջ 85:

Սպենդիարյանն «Ալմաստ» օպերայում հետևել է Կոմիտասի այդ պատգամին, միաժամանակ հավատարիմ է մնացել Թումանյանի ստեղծագործությունների ժողովրդական ոգուն: Օպերայում հայտնվում են Համբարձման տոնի տեսարաններ: Դրանք իսպառ բացակայում են «Թմկաբերդի առումը» պոեմում, սակայն առկա են «Անուշ» պոեմում և Կոմիտասի ու Մանուկ Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանում, որը լույս էր տեսել Վաղարշապատում 1905-ին, և որը ժողովրդական երգերն օգտագործելու առումով հիանալի ուղեցույց էր Սպենդիարյանի համար:

«Ալմաստ»

Ա՛խ, ո՞ր ես, ո՞ր ես, իմ յար,
Դու աչքիս վառ լույս,
Ա՛խ, կռվի դաշտում, յա՛ր,
Դու ընկար անհույս՝ վայ լե՛, լե՛...

«Լե՛, լե՛» ձայնարկությունները հաճախ են կրկնվում «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանում:

Ա՛յ հևա՛, հևա՛ սիրտըս,
Վա՛յ, յա՛ր, լե՛,
...Քան պուտը կարմիր չըկա,
Վա՛յ, յա՛ր, լե՛,
Բաց անեմ սև ա սիրտըս...²⁵:

Պոեմի ավարտը և «Ալմաստ» օպերայի վերջին գործողությունը փոքր-ինչ տարբեր են իրենց հանգուցալուծմամբ: «Թմկաբերդի առումը» պոեմում Նադիր շահն անմիջապես պատժում է բերդի տիրուհուն՝ հիշեցնելով վերջինիս դավաճանության աններելի լինելը:

-Պատասխան տուր ինձ, մատնիչ սևաջյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...(էջ 72):

Այս հարցմանն ի պատասխան՝ շփոթահար, ամոթահար, իր դավաճանությունից խենթացած տիրուհին հանդուգն ձևով բացահայտում է իր ամուսնու առավելությունը թագավորական գահ ունեցող բռնապետից:

-Քաջ էր ու սիրուն քեզնից առավել,
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբերա...(էջ 72):

²⁴ **Тигранов Г.** Спендиаров А., с. 120.

²⁵ «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան, Խմբագրեցին Կոմիտաս և Մ. Աբեղյան, Երևան, 1969, էջ 27:

Պոեմում իր նենգությամբ ու խաբեությամբ հաղթանակի հասած բռնակալը միանգամից պատժում է իշխանուհուն, և չարը հաղթանակում է:

Օպերայում Ալմաստը հասկանում է, որ դառնալու է շահի հարեմի սովորական կանանցից մեկը և ոչ թե թագուհի, նա հասկանում է իր խաբված լինելը և վրեժի զգացմունքով լեցուն՝ գոտուց հանում է դաշույնը, որպեսզի սպանի շահին: Սակայն շահի թիկնապահները նրա ձեռքից խլում են դաշույնը, ու շահի հրամանով հայտնվում է դահիճը:

Նա պատվիրում է պիղծ կնոջը շներին որպես լափ տալ, կուրացնել նրա աչքերը, տանջամահ անել, խաչել: Պատճառը մեկն է. իշխանուհին մատնիչ է, դավաճան, իսկ մատնիչներն ու դավաճանները լոկ գործիքներ են, որոնք ներում չունեն:

Փաստորեն թե՛ Թումանյանին և թե՛ Սպենդիարյանին հուզել է նույն խնդիրը. ինչո՞ւ է մարդը դառնում մատնիչ և դավաճան: Չէ՞ որ դավաճանները պատժվում են, և նրանց փառասիրական գայթակղությունը փոխվում է ամոթալի խայտառակության: Չէ՞ որ ժամանակի ընթացքում ամեն չար գործ բացահայտվում է: Ե՛վ Թումանյանը, և՛ Սպենդիարյանը եղել են հայրենասերներ, մեծ անհատականություններ, որոնք ապրել են աստվածաշնչային պատվիրաններին համահունչ: Այդ են վկայում նրանց մասին պատմող ժամանակակիցների հուշերը: Դրանցից մեկը պատկանում է «Ալպիական մանուշակի» անմահ հեղինակին՝ Ակսել Բակունցին, որը Սպենդիարյանի մասին ասել է. «Մի նայիր այս մարդու դեմքին ու քայլելուն, կարծես երկնային դրախտից իջած մոմեղեն կերտվածք լինի, իսկ ոտքերն էլ կարծես գետնին չեն դիպչում»²⁶:

Եզրակացություններ

Ալեքսանդր Սպենդիարյանին հուզել է «Թմկաբերդի առումը» պոեմը, որը քննում էր չարի ու բարու հավերժական պայքարի մեջ եղող խնդիրը: Մարդու լավագույն գործի անմահության գաղափարը, դավաճանության դատապարտումը, որ գալիս են դարերի խորքից, և կան նաև քրիստոնեական սրբազան մատյաններում, հուզել են և՛ Թումանյանին, և՛ Սպենդիարյանին: Թեպետ Թումանյանը գերզբաղվածության պատճառով չի կարողացել գրել «Ալմաստ» օպերայի լիբրետոն, սակայն բանավոր ձևով ներշնչել է կոմպոզիտորին: Լիբրետոյի հեղինակ Սոֆյա Պարնոկը «Ալմաստ» օպերան գրելիս ծանոթ է եղել Նադիր Շահի պատմական կերպարին և Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ոռուերեն թարգմանություններին:

«Ալմաստ» օպերայում տեղ են գտել հատվածներ, որոնք Պարնոկը քաղել է «Անուշ» օպերայից:

Օպերայի լիբրետոյի հայերեն թարգմանիչ Տիգրան Հախումյանը լիբրետոյի ոռուերեն բնագիրը թարգմանելիս հարազատ է մնացել Թումանյանի լեզվին ու ոճին:

²⁶ Մորուս Ս. Հասրաթյան, Հուշաբեկորներ..., էջ 46:

«Ալմաստ» օպերայի և «Թմկաբերդի առումը» պոեմի հիմքում ընկած հերոսին դավաճանող կնոջ կերպարը թափառիկ սյուժե է և առկա է այլ ժողովուրդների բանահյուսության ու գրականության մեջ:

Թե՛ Թումանյանին և թե՛ Սպենդիարյանին ոգեշնչել է դավաճանին պատժված տեսնելու իրողությունը և նրա սև գործի նկատմամբ դարերով չմոռացվող անարգանքը:

ЛИБРЕТТО ОПЕРЫ «АЛМАСТ» АЛЕКСАНДРА СПЕНДИАРЯНА И ПОЭМА «ВЗЯТИЕ ТМКАБЕРДА» ОВАНЕСА ТУМАНЯНА

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

В творчестве Ованеса Туманяна Александр Спендиарян особо выделял поэму «Взятие Тмкаберда», в которой поэт обращался к теме вечной борьбы добра и зла. Идея бессмертия творений и свершений человека, осуждение предательства как нарушения постулатов морали, идущее из глубины веков и нашедшее отражение в священных христианских книгах, в равной степени волновали как Туманяна, так и Спендиаряна. В силу чрезмерной занятости Туманян не смог написать либретто к опере «Алмаст», автором либретто стала София Парнок, которая была знакома с творчеством Туманяна благодаря русским переводам, ей был знаком также исторический образ Надиршаха. Армянский переводчик либретто Тигран Ахумян остался верен языку и стилю поэта. Образ героини оперы «Алмаст» и поэмы «Взятие Тмкаберда», являющийся собой образ предательницы, присутствует также в фольклоре и литературе других народов.

В либретто вошли также отрывки, заимствованные Софией Парнок из поэмы Туманяна «Ануш».

Ключевые слова – «Взятие Тмкаберда», «Алмаст», Александр Спендиарян, поэма, либретто, патриотизм, предательство.

THE LIBRETTO OF ALEXANDER SPENDIARYAN'S OPERA *ALMAST* AND THE POEM "THE SEIZURE OF TMKABERD" OF HOVHANNES TUMANYAN

AELITA DOLUKHANYAN

Among the works of Hovhannes Tumanyan, Alexander Spendiaryan singled out the poem "The Seizure of Tmkaberd", in which the poet reflects on the eternal issues of struggle between good and evil, immortality of human deeds and accomplishments, condemnation of betrayal as violation of moral principles – concepts, coming from time immemorial and reflected in sacred Christian books, thoughts, preoccupying both the poet and the composer. Tumanyan, due to his intense busyness, failed to write the libretto for Spendiaryan's opera *Almast*. Sofia Parnok wrote it. She was familiar with not only Tumanyan's works in

Russian translation, but also the historical image of Nadir Shah. The translator Tigran Hakhumyan, however, in translating the libretto into Armenian, remained faithful to the language and style of Tumanyan's text. The main female personage in both the opera *Almast* and the poem "The Seizure of Tmkaberd" is a betrayer – a character, also present in the folklore and literature of other peoples.

The libretto includes excerpts borrowed by Sofia Parnok from Tumanyan's poem "Anush".

Key words – "The Seizure of Tmkaberd", *Almast*, Alexander Spendaryan, poem, libretto, patriotism, betrayal.

ИНТЕРПРЕТАЦИИ «ХАЙТАРМЫ» АЛЕКСАНДРА СПЕНДИАРЯНА В ТВОРЧЕСТВЕ СОВРЕМЕННЫХ ИСПОЛНИТЕЛЕЙ РЕСПУБЛИКИ ТАТАРСТАН

ЛИЛИЯ БОРОДОВСКАЯ* (РФ, Республика Татарстан, Казань)

В статье представлены два музыкальных переложения «Хайтармы» из сюиты А. Спендиаряна «Крымские эскизы» (ч. 1), сделанные казанскими музыкантами и композиторами – Р.Э. Ильясовым для оркестра народных инструментов «Казан нуры» и Р.Ю. Абязовым для струнного камерного оркестра «La Primavera». Дана краткая историческая справка о творчестве А. Спендиаряна, связанном с крымско-татарской музыкой, а также представлен материал об особенностях крымско-татарского народного танца «хайтарма», о его разных нотных вариантах. Данная работа будет полезна как для широкого круга музыкантов-профессионалов, так и исследователей крымско-татарской народной музыки.

Ключевые слова – крымские татары, народная пляска «Хайтарма», армянский композитор А. Спендиарян, Республика Татарстан, «Крымские эскизы», Расим Ильясов, Рустем Абязов.

Творчество талантливого армянского композитора А. Спендиаряна (А. Спендиарова) известно и любимо в Республике Татарстан. Особенно популярны его «Крымские эскизы», в которых звучат крымско-татарские напевы. Музыкантами Татарстана сделано несколько переложений «Хайтармы» для разных типов оркестра, а хореографические коллективы с удовольствием ставят композиции на мотивы народных танцев крымских татар. Хотя и народная музыка казанских (поволжских) татар по своим музыкальным особенностям радикально отличается от фольклора крымских татар, последняя неизменно остается привлекательной для казанских музыкантов и слушателей. Этнические группы татар России широко представлены по всей территории страны – это мишаре, кряшены, нагайбаки, астраханские и сибирские татары, разнообразная народная музыка которых становится источником вдохновения для казанских музыкантов и творческих коллективов.

⁵ **Արևշատյան Ա.**, Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված Տիգրան Մանսուրյանի երկերը, «Արվեստագիտական հանդես», 2021, № 1, էջ 22:

⁶ Տե՛ս **Գրիգորյան Ն.**, Հայոց մեծ եղեռնը Վարդան Աճեմյանի երաժշտության մեջ, Հայոց ցեղասպանություն – 100. ճանաչումից՝ հատուցում, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 533-544:

տության դոկտորներ Աննա Արևշատյանի, Մարգարիտա Ռուխկյանի, Սվետլանա Սարգսյանի, արվեստագիտության թեկնածու Նաիրա Գրիգորյանի և այլոց հետազոտությունները:

Մեր նպատակն է ներկայացնել Հայոց մեծ եղեռնի արձագանքները Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Արամ Սաթյանի ստեղծագործության մեջ, որը մինչ օրս չի արժանացել հայ երաժշտագիտության ուշադրությանը: Նկատենք, որ Արամ Սաթյանը հեղինակել է ՀՀ ԳԱԱ հիմնը (2013), իսկ 2014-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է:

«Չինար ես»՝ դուդուկի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար

Հայոց մեծ եղեռնի թեմային Արամ Սաթյանն անդրադարձավ XXI դարում՝ ստեղծելով «Չինար ես»-ը՝ դուդուկի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար և «1915»-ը՝ դուդուկի, կամերային նվագախմբի և լիտավրների համար:

Դուդուկի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար, գրված «Չինար ես»-ն առանձնանում է խոր դրամատիզմով և համակված է ողբերգական տրամադրությամբ: Այստեղ ևս, ինչպես Սաթյանի մյուս ստեղծագործություններում, ռիթմը մեծ դեր է կատարում: Ասես քարավանի ռիթմի ուղեկցությամբ մարդիկ բարձրանում են դեպի Գողգոթա: Այդ շարժման գագաթնակետում հնչում է «Չինար ես» երգի մեղեդին, ու հնչողությունն աստիճանաբար մարում է:

Ինչպես հայտնի է, «Չինար ես» ժողովրդական երգն իր ժանրային պատկանելությամբ քնարական երգ է՝

Չինար ես, կեռանա՛լ մի,

Յա՛ր, յա՛ր, յա՛ր

Մեր դռնեն հեռանալ մի,

Յա՛ր, յա՛ր, յա՛ր.

Յար, նա նայ, նայ, նայ, նայ,

նայ, նայ, նայ, նայ⁷:

Ավելորդ չենք համարում նշել, որ 1936 թվականի մայիսի 28-ին Հայկանուշ Դանիելյանի կատարմամբ «Չինար ես»-ի հնչյունների ուղեկցությամբ Կոմիտասի աճյունն ամփոփվեց Երևանի՝ հետագայում Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում՝ Ռոմանոս Մելիքյանի գերեզմանի հարևանությամբ:

Եվ, այդուամենայնիվ, Արամ Սաթյանը սիմֆոնիկ երկում իր նվագախմբային մտածողության շնորհիվ երգի մեղեդին հասցնում է ողբերգական հնչողության:

«Չինար ես»-ն առաջին անգամ հնչել է տաղանդավոր դիրիժոր Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ, այնուհետև կատարվել Գերմանիայում, Ֆրանսիայում, Յակուտիայում, Կանադայում և այլուր: Ընդամենը հինգ րոպե տևողությամբ «Չինար ես»-ը Կանադայում արժանացել է 10 րոպե ծափահարությունների⁸:

⁷ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Մեներգեր, Երևան, 1960, էջ 82:

⁸ Տե՛ս **Ասատրյան Ա.**, Արամ Սաթյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2017, էջ 129:

«1915»-ը՝ դուդուկի, կամերային նվագախմբի և լիտավրների համար

Տարիներ անց՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ, կանադահայ կլաննետահար-դուդուկահար Համբարձում Ճապուրյանի առաջարկությամբ Արամ Սաթյանը ստեղծում է «1915»-ը՝ կամերային նվագախմբի, դուդուկի և լիտավրների համար: Իր ստեղծագործությունը կոմպոզիտորը կառուցել է հայ ժողովրդական երկու երգերի կիրառման վրա: Կոմպոզիտորն ընտրել է ժողովրդական «Հով արեք» և «Երկինքն ամպել է» երգերը:

Ինչո՞ւ է կոմպոզիտորի ընտրությունը կանգ առել հենց այս երգերի վրա: Բանն այն է, որ հայ ժողովրդական «Հով արեք» երգի մեղեդիում կոմպոզիտորը որսացել է Dies Irae-ի ինտոնացիաները⁹: Մյուս կողմից՝ «Հով արեք» երգի բանաստեղծական տեքստում առավելագույնս դրսևորվել է հայ ժողովրդական բանահյուսության, հետագայում նաև՝ հայ պոեզիայի բնորոշ առանձնահատկություններից մեկը՝ անտրոպոմորֆիզմը: Այն է՝ բանաստեղծության, տվյալ դեպքում՝ երգի քնարական հերոսը մարդկային հատկություններով է օժտում բնության երևույթներին՝ դիմում է սարերին և խնդրում, որ նրանք իրեն հով անեն ու դարդին դարման անեն: Այնուհետև սարերից նեղանում է, որ իրեն հով չեն անում, իր դարդին դարման չեն անում:

Այս ստեղծագործության մեջ սարերի անտարբերությունը կարելի է ընկալել որպես հայ ժողովրդի ողբերգությանն անհաղորդ աշխարհի կերպարը:

Իսկ «Երկինքն ամպել է» երգի մեղեդին պատկերում է հայ ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ կյանքը:

Թեև ստեղծագործությունը կոնկրետ ծրագիր չունի, սակայն ինչպես Սաթյանի սիմֆոնիկ ստեղծագործություններն առհասարակ, սրանում ևս երաժշտությունը տեսանելի է:

Դրամատիզմն արդեն իսկ առկա է նախաբանում: Լիտավրների հարվածներն ու դրանց ի պատասխան՝ նվագախմբի ff հնչողությամբ հարվածները, որոնք հիշեցնում են «Հով արեք» երգի վարընթաց սեկունդա ինտոնացիայի եռակի կրկնությունը՝ փոխակերպված դիթամական պատկերով, ունկնդրին ներկայացնում են ստեղծագործության հիմնական կոնֆլիկտը՝ գուժելով նրա ողբերգական բովանդակությունը:

Ուշագրավ է տոնայնական կառուցվածքը՝ ստեղծագործությունը սկսվում է d-moll տոնայնության մեջ, որը Մոցարտի Ռեքվիեմի տոնայնությունն է՝ ողբերգականության խորհրդանիշը: Նախաբանի վերջում տեղի է ունենում մոդուլյացիա համանուն Ռե մաժոր, որտեղ առաջին ջութակների նվագամասում հնչում է «Երկինքն ամպել ա» երգի մեղեդու սկզբնամասը: Դրան ի պատասխան՝ թավջութակների նվագամասում անցնում է հատված «Հով արեք, սարեր ջան»-ից՝ արդեն սի մինորում: Եվ սի մինորում էլ հանդես է գալիս մենակատար դուդուկը:

Ի դեպ, օրիգինալ է հեղինակի մտահղացումը, «1915»-ում կոմպոզիտորը, որպես Հայոց մեծ եղեռնի նահատակների հիշատակի ռեքվիեմ, կոլմինացիայի պահին վարպետորեն զուգորդել է հայկական ժողովրդական «Հով արեք, սարեր ջան» երգի մեղեդին և Dies irae սեկվենցիան: Ավելորդ չենք

⁹ Կոմպոզիտորի հետ անձնական զրոյցից, 16 սեպտեմբերի, 2021 թ.:

համարում նշել, որ Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված ստեղծագործության մեջ Արամ Սաթյանը շարունակում է իր հանճարեղ անվանակցի՝ Արամ Խաչատրյանի ավանդույթը. բանն այն է, որ վերջինիս հռչակավոր Երկրորդ սիմֆոնիայի երրորդ մասում (Andante), որտեղ կոմպոզիտորը դիմել էր ռեքվիեմի ժանրին, Dies irae սեկվենցիան կոնտրապունկտով ուղեկցվում է հայ ժողովրդական «Որսկան ախպեր» երգի մեղեդու հետ՝ որպես Հայրենական մեծ պատերազմում ընկած հերոսների հիշատակին ծոնված Ռեքվիեմ:

Մի հետաքրքիր դիտարկում՝ Արամ Խաչատրյանը 1943 թվականին իր սիմֆոնիան եզրափակեց լավատեսական ֆինալով. որպես ժամանակից առաջ անցած մեծ արվեստագետ՝ նա զգաց ապագան: Ու այդպես էլ եղավ՝ 1945-ին խորհրդային բանակը ֆաշիստական Գերմանիային պարտադրեց անվերապահ կապիտուլյացիա:

Արամ Սաթյանի ստեղծագործությունն ավարտվում է ողջ նվագախմբի նվագամասում պահված դամի՝ ձայնառության ֆոնի վրա երկրորդ ջութակների նվագամասում նախաբանի սկզբնական մոտիվի ունիսոն անցկացմամբ, որին պատասխանում է դուդուկը pp, և մարում է հնչողությունը ppp:

Թվում է, թե ստեղծագործության վերջում հայ ժողովրդի ողբերգությանը պիտի հաջորդեր վերածնության գաղափարը, մահվանը հակադրվեր կյանքը, և ավարտվեր ստեղծագործությունը «Երկինքն ամպել ա» երգի կենտուրախ ինտոնացիաներով: Բայց ո՛չ: Կոմպոզիտորն ասես դեռևս տարիներ առաջ կանխազգացել է 2020 թ. 44-օրյա պատերազմը, երբ աշխարհը կրկին անհաղորդ մնաց հայոց մեծ վշտին:

«1915»-ն առաջին անգամ հնչել է Ռուբեն Ասատրյանի և դուդուկահար Համբարձում Ճապուրյանի կատարմամբ: Ստեղծագործությունն արդեն մեծ հետաքրքրություն է առաջացրել դուդուկահարների շրջանում, որոնք սիրով են կատարում այն: «1915»-ն արդեն հնչել է Ռուսաստանում, Ֆրանսիայում, Հունաստանում, ԱՄՆ-ում և Բուլղարիայում՝ հայ և օտարազգի երաժիշտների մեկնաբանությամբ:

«1915»-ի լավագույն մեկնաբանը դիրիժոր Ռուբեն Ասատրյանն է: Նրա կատարմամբ միայն 2015 թվականին երկը հնչել է Հունաստանում՝ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված մեծ համերգի ընթացքում, հույն երաժիշտների ու հույն դուդուկահարի կատարմամբ, Յակուտիայի օպերային թատրոնում՝ յակուտական դասական երաժշտության հիմնադիր՝ հայազգի Հրանտ Գրիգորյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված համերգի ժամանակ՝ Յակուտիայի օպերային թատրոնի նվագախմբի և երիտասարդ դուդուկահար Հարություն Չկոյանի կատարմամբ, Երևանում՝ հայֆրանսիական երիտասարդական նվագախմբի կատարմամբ, և միշտ էլ արժանացել ունկնդրի ջերմ ընդունելությանն ու բարձր գնահատականին:

«1915»-ը մեծ հաջողությամբ հնչեց Հայ ժամանակակից երաժշտության II փառատոնի առաջին համերգին՝ 2015 թ. հոկտեմբերի 20-ին, Արամ Խաչատրյանի համերգասրահում դուդուկահար Գևորգ Դաբադյանի և Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ, Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Հայոց մեծ եղեռնի թեման մարմնավորվեց Արամ Սաթյանի երկու ստեղծագործություններում. դրանք են՝ «Չինար ես»-ը՝ դուդուկի և մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար, և «1915»-ը՝ դուդուկի, կամերային նվագախմբի և լիտավրների համար: Երկու դեպքում էլ կոմպոզիտորը որպես մենակատար ընտրել է հայ ժողովրդական նվագարանի՝ դուդուկի տեմբրը՝ այն վարպետորեն միահյուսելով առաջինում՝ մեծ սիմֆոնիկ նվագախմբի, մյուսում՝ կամերային նվագախմբի և լիտավրների հնչողության հետ:

Նկատենք, որ նախկինում իր ստեղծագործության մեջ կոմպոզիտորը նման հետաքրքրություն հանդես չէր բերել դուդուկի տեմբրի հանդեպ: Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ կոմպոզիտորի տեմբրային դրամատուրգիայում դուդուկը զուգորդվում է Հայոց մեծ եղեռնի, հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերի ու տառապանքների հետ: «1915»-ն ավարտելով ոչ թե «Երկինքն ամպել է» երգի կենսուրախ ինտոնացիաներով, որոնք ստեղծագործության մեջ մարմնավորում են հայ ժողովրդի ստեղծագործ ու խաղաղ կյանքը, այլ «Հով արեք» երգի ինտոնացիաներով (մեր կարծիքով՝ այս ստեղծագործության մեջ սարերի անտարբերությունը կարելի է ընկալել որպես հայ ժողովրդի ողբերգությանն անհաղորդ մնացած աշխարհի կերպար), Ա. Սաթյանը դեռևս տարիներ առաջ ասես կանխազգացել է 2020 թ. 44-օրյա պատերազմը, երբ աշխարհը կրկին անհաղորդ մնաց հայոց վշտին:

Հ.Գ.

Օգտվելով առիթից՝ առաջին անգամ «Արվեստագիտական հանդեսի» էջերում տպագրում ենք Արամ Սաթյանի «1915»-ի պարտիտուրը՝ առաջին անգամ շրջանառության մեջ դնելով այն: Համակարգչային շարվածքը՝ Ռուբեն Ասատրյանի:

ОТЗВУКИ ГЕНОЦИДА АРМЯН В ТВОРЧЕСТВЕ КОМПОЗИТОРА АРАМА САТЯНА

АННА АСАТРЯН

К теме Геноцида армян Арам Сатян обратился в XXI веке, создав два произведения: «Чинар ес» – для дудука и симфонического оркестра и «1915» – для дудука, камерного оркестра и литавров. В обоих сочинениях композитор в качестве солирующего выбрал тембр дудука как армянского народного инструмента, в одном случае мастерски вписав его в звучание симфонического оркестра, а в другом соединив с камерным оркестром и литаврами. Отметим, что до этого в своем творчестве он не проявлял интереса к тембру дудука. Отсюда можно заключить, что в тембровой драматургии композитора дудук ассоциируется с Геноцидом армян, с трагическими страницами истории армянского народа.

Завершив свое сочинение «1915» не жизнерадостными интонациями песни «Երկինքն ամպել է» (в этом произведении данные интонации олицет-

воряют созидательную мирную жизнь армянского народа), а интонациями песни «Ов арек» (на наш взгляд, «безразличие» гор в этом сочинении можно воспринимать как образ мира, оставшегося безучастным к трагедии армян), А. Сатян задолго до произошедших событий словно предугадал 44-дневную войну 2020 г., когда мир вновь проявил равнодушие к скорби армянского народа. Посему наша статья посвящена немеркнувшей памяти героев 44-дневной войны.

Ключевые слова – Геноцид армян, Арам Сатян, «Чинар ес» для дудука и большого симфонического оркестра, «1915» для дудука, камерного оркестра и литавров, «Ов арек», «Еркинкн ампел э», Рубен Асатрян.

ECHOES OF THE ARMENIAN GENOCIDE IN THE OEUVRE OF COMPOSER ARAM SATIAN

ANNA ASATRYAN

Aram Satian addressed the issue of the Armenian Genocide in the 21st century by composing “Chinar es[Slim Like a Poplar]” for duduk and symphony orchestra, and “1915” for duduk, chamber orchestra and kettledrums. Both pieces feature the duduk as soloist. The composer intertwined in a masterly manner the timbre of the Armenian folk instrument with the sound of a symphony orchestra, in one case, and a chamber orchestra with kettledrums – in another. Incidentally, the composer had not shown any interest in duduk in his earlier works. Obviously, in the timbre dramaturgy of the composer, duduk associates with the Armenian Genocide, with the suffering and tragic pages in the history of the Armenian people. By concluding his “1915” with the intonations of “Hovareq [Cast a Shade]” (in our opinion, in the lyrics of the song, the ‘indifference’ of the mountains may be perceived as the lack of empathy the world community had shown toward the tragedy of Armenians), rather than with the lively intonations of “Yerkingn ampel e [The Skies Are Overcast]”, communicating the idea of inventive and peaceful nature of the Armenian people, A. Satian must have had the presentiment of the 44-Day War of 2020, when the world once again remained unresponsive to the woes of Armenians. Therefore, we dedicate this article to the 44-Day War heroes, the memories of whom will never fade.

Key words – Armenian Genocide, Aram Satian, “Chinar es [Slim Like a Poplar]” for duduk and symphony orchestra, “1915” for duduk, chamber orchestra and kettledrums, “Hov areq [Cast a Shade]”, “Yerkingn ampel e [The Skies Are Overcast]”, Ruben Asatryan.

"1915"

Aram Satian

Adagio ♩ = 72

Duduk in A

Timpani

Violin I

Violin II

Viola

Violoncello

Contrabass

6 1

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Ch.

2

12

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

mf

p

ff

dim.

p

sul G

rit.

19

2

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

pp

pp

pizz.

arco

24 **Piu mosso** ♩ = 80

A Dud.
Timp.
Vln. I
Vln. II
Vla.
Vc.
Cb.

29

A Dud.
Timp.
Vln. I
Vln. II
Vla.
Vc.
Cb.

4

34

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

p

pizz.

p

p

p

39

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

f

arco

p

mf

mf

pp

pp

4

44

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

ponticello

ord.

pizz.

p

49

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

ponticello

mp

p

pizz.

p

arco

pizz.

p

6

54

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

5

ord.

pizz.

p

arco

non vib.

pp

non vib.

pp

non vib.

pp

59

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

64

A Dud. *mp*

Timp.

Vln. I *p*

Vln. II *pizz.* *mp* *arco* *p*

Vla. *pizz.* *p* *mp* *arco* *p*

Vc. *pizz.* *p* *mp* *arco* *p*

Cb. *pizz.* *p* *mp* *arco* *p*

Detailed description: This block contains the musical score for measures 64 through 68. The score is for a string quartet and a double bass. The double bass part (A Dud.) has a melodic line starting in measure 64 with a mezzo-piano (*mp*) dynamic. The violin and viola parts feature a mix of pizzicato (*pizz.*) and arco (bowed) passages. Dynamics range from piano (*p*) to mezzo-piano (*mp*). The cello part also has pizzicato and arco sections.

69 6

A Dud.

Timp.

Vln. I *arco* *mf*

Vln. II *pizz.* *mf* *arco*

Vla. *pizz.* *mf* *arco*

Vc. *pizz.* *p* *mf* *arco*

Cb. *mf* *arco* *mf*

Detailed description: This block contains the musical score for measures 69 through 73. Measure 69 is marked with a box containing the number 6. The double bass part (A Dud.) has a melodic line. The violin and viola parts feature pizzicato (*pizz.*) and arco (bowed) passages. Dynamics range from piano (*p*) to mezzo-forte (*mf*). The cello part also has pizzicato and arco sections.

8

74 *rall.* 7 *a tempo*

A Dud. *f*

Timp.

Vln. I *f*

Vln. II *f*

Vla. *f*

Vc. *f*

Cb. *f*

79

A Dud.

Timp.

Vln. I *pp* *p*

Vln. II

Vla.

Vc. *pizz.* *f*

Cb. *pizz.* *f*

84

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

pizz.

p

pizz.

p

p

89

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

p

f

arco

f

arco

f

arco

mp

f

mf

f

8

10

94 *mouv.* *recitativo* *a tempo*

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

99 *mouv.*

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

104 9

A Dud. *pp*

Timp. *pp*

Vln. I *ff* *ff* *ff*

Vln. II *ff* *s.p.* *p* *div. a3*

Vla. *ff* *s.p.* *p* *div. a3*

Vc. *ff* *s.p.* *p* *pizz.* *div. a3*

Cb. *p* *pizz.*

109

A Dud. *p*

Timp.

Vln. I *ff* *ff* *mp cresc.*

Vln. II *cresc.*

Vla. *cresc.*

Vc. *Unis.* *div. a3* *s.p.* *cresc.*

Cb. *arco* *cresc.*

12

114 10

A Dud. *p*

Timp. *ff*

Vln. I *non div. ff*

Vln. II *non div. ff*

Vla. *non div. ff*

Vc. *arco non div. ff*

Cb. *ff*

119 rit. **Piu mosso**

A Dud. *ff* *p* *arco*

Timp. *ff*

Vln. I *ff* *pizz. p* *arco p*

Vln. II *ff* *pizz. p* *arco p*

Vla. *ff* *pizz. p*

Vc. *ff* *arco p*

Cb. *ff* *pizz. p*

124

A Dud. 11

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

129

A Dud.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

14

134 morendo

A Dud. morendo

Timp.

Vln. I

Vln. II *arco*

Vla.

Vc.

Cb.

139 rit.

A Dud. rit.

Timp.

Vln. I

Vln. II

Vla.

Vc.

Cb.

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՔՈՒՇՆԱՐՅԱՆ՝ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԸ

ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ*

Բազմավաստակ գիտնական, կոմպոզիտոր և մանկավարժ Քրիստափոր Քուշնարյանի ուշադրության կենտրոնում են եղել Մերձավոր Արևելքի ժողովուրդների ավանդական դասական երաժշտության ժանրերը՝ մուղամներն ու դաստգահները, աշուղական և սազանդարական արվեստը: «Հայկական մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերը» մենագրության մեջ առաջադրված դրույթները և սկզբունքային ելակետերը՝ մշակութային փոխազդեցությունների, հայկական միջավայրում խոր արմատներ ունեցող և լայնորեն կենցաղավարող համաարևելյան երևույթների ծագումնաբանական հիմքերի, ձայնակարգային համակարգերում առկա ընդհանրությունների և այս ասպարեզում հայ երաժիշտների պատմական առաքելության վերաբերյալ, ինչպես նաև բազմաթիվ այլ խնդիրների քննական ուրվագծերը վկայում են գիտնականի անուրանալի վաստակը երաժշտական արևելագիտության մեջ: Դրանք արևելագետ-երաժշտագետների հետազոտական աշխատանքների արժեքավոր ուղեցույցներն են:

Բանալի բառեր՝ Քուշնարյան, արևելագիտություն, մոնոդիա, ձայնակարգեր, տեսություն, երաժշտական փոխազդեցություններ, «Շահնամե»:

Ներածություն

Բազմավաստակ գիտնական, կոմպոզիտոր և մանկավարժ Քրիստափոր Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերը» կապիտալ աշխատանքը կարևորվել և արժևորվել է թե՛ հայ, թե՛ խորհրդային ընդարձակ տարածքի ամենատարբեր երաժշտական մշակույթներին ու ավանդույթներին առնչվող հետազոտություններում: Երաժշտագիտական ամենաբարձր հղումներ և բազմաբնույթ գրքերում պատմատեսական անդրադարձներ ստացած այս անանց գիտական նշանակություն ունեցող աշխատության մեջ ընդգրկված թեմաների լայն շրջանակներն ու հարցադրումները, տեսական համակարգի ընձեռած վերլուծական ու համեմատական քննության հնարավորությունները միջժանրային և միջմշակութային ոլորտներում աշխատանքին նաև գիտական շտեմարանի արժեք են հավելում: Այդ շտեմարան են դիմել և դրա առանձին բաղադրիչները հետազոտել տարբեր մասնագիտական հետաքրքրություններ ունեցող երաժշտագետներ:

Հիմնական նյութի շարադրանք

Աշխատանքը Արևելքի մոնոդիկ երաժշտության ավանդական ձայնակարգային համակարգերի ուսումնասիրության ասպարեզում հիմնարար

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, lilitjernjakyant@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 02.11.2021, գրախոսելու օրը՝ 05.11.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

նշանակություն ունի և համանման երևույթների համեմատական քննությամբ ուղիներ է նշել նոր հետազոտությունների համար, թեև առ այսօր այս կարևոր դիտակետը դեռևս բավարար չափով չի զարգացել հայ երաժշտագիտության մեջ:

Թերևս առանց բացառության հայ երաժշտագետներն իրենց մասնագիտական առաջընթացի տարբեր փուլերում յուրացրել, իմաստավորել և կիրառել են այս աշխատության մեջ շարադրված կարևոր դրույթները: Աշխատություն, որտեղ գիտնականն ընդգրկել է հայկական մոնոդիայի բոլոր ճյուղերը, ի տարբերություն իր նախորդների՝ դրանց փոխադարձ կապերի և ծագումնաբանական հիմքերի խորաթափանց քննությամբ, ինչպես նաև Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի երաժշտական մշակույթներին բնորոշ իրողությունների համադրությամբ և փոխազդեցությունների անհրաժեշտ շեշտադրումներով. այն է՝ Կոմիտասի գիտահետազոտական և հավաքչական գործունեության մեջ կիրառված սկզբունքների արդյունավետության գիտակցումով:

Այս լայն երաժշտամշակութային համատեքստում պրոֆեսոր Քուշնարյանի առաջադրած գիտական դրույթները՝ մոնոդիկ երաժշտության ծագման և զարգացման ընթացքի, հայկական մոնոդիայի ծայնակարգային տեսության և ամբողջական հանրագումարային հնչյունաշարի և հնչյունաշարային կազմավորումների սկզբունքների, ինտոնացիայի որոշարկումների, ծայնակարգերի առանձին տարրերի իմաստային արտահայտչականության, լադային զարտուղությանն ու բազում այլ հարցերի առնչվող տեսական հիմնավորումների շարադրումով և դրանց շաղկապումով ժամանակակից կոմպոզիտորական ստեղծագործությանը, պատմականության, ավանդույթի ժառանգորդության և երևույթների հեռանկարային վերաիմաստավորման գիտական կարևոր չափացույցերով են բնութագրում աշխատությունը:

Երկու՝ պոլիֆոնիկ և մոնոդիկ, մտածողական կերպերի ու երաժշտական հյուսվածքների նկատմամբ ունեցած նրա ստեղծագործական ու գիտական հետաքրքրություններով են բնորոշվում նաև տեսական հայեցակարգի հիմնավորումները՝ «խիստ ոճում» մելոդիկայի դրսևորման սկզբունքների և մոնոդիկ ոճի ներունակ բազմաձայնության ինքնատիպ հնարավորությունների վերաբերյալ, կամրջելով Քուշնարյան-պոլիֆոնիստին և Քուշնարյան-մոնոդիստին: Դրանց գործնական կիրառությունները ցուցադրելու նպատակով, որպես լավագույն և ուսանելի օրինակներ, Քուշնարյանն իր մենագրության վերջաբանում վերլուծում է Կոմիտասի խմբերգերում և Պատարագում հայկական ձայնակարգերի երկձայն օկտավային կանոնի և այլ պոլիֆոնիկ ձևերի սկզբունքները՝ հավաստելով Կոմիտասի արվեստագիտական-տեսական դիրքորոշումների իրավացիությունը: Պատահական չէ, որ ոչ միայն հայ, այլև տարբեր արևելյան մշակույթներում մոնոդիկ ձայնակարգերի և գերակշռորեն պոլիֆոնիկ ձևերի ստեղծագործական փոխկապակցման ընձեռած հնարավորությունները լայնորեն արտացոլվել են ժամանակակից կոմպոզիտորական արվեստում, և այս առումով Կոմիտասը XX դարի երաժշտական արվեստում մոնոդիկ նյութի ստեղծագործական իմաստավորման առաջատար և ապագայամետ արվեստագետներից է:

Այս համապարփակ ուսումնասիրության մեջ քննարկված խնդիրները, վերլուծական մեթոդներն ու տեսական համակարգերը արժևորվել և կիրառվել են թե՛ հայ, թե՛ Մերձավոր Արևելքի մոնոդիկ մշակույթների տեսական խնդիրներին նվիրված տարբեր հետազոտություններում: Այսպես կոչված «տարրական» կամ ինքնատիպ մոնոդիկ բազմաձայնության դրսևորումների՝ պահված հնչյունի, պեղալի, դամի, բուրդոնային բազմաձայնության և շատ ու շատ այլ երևույթների, դրանց ծագման սոցիալական արմատների, մեղեդային հիմքի և ինտերվալային հարաբերությունների տրամաբանական զարգացումների տեսական դատողություններում անվանի երաժշտագետներ Ռ. Գրուբերի, Բ. Ասաֆևի մտքերին համադրվում և կարևորվում են Քուշնարյանի նկատառումները տոնիկական կենտրոնի կայունության, օժանդակ հենակետերի, տոնի՝ որպես ֆունկցիայի կրողի և միջանցիկ հիմնաձայնի, ընդհանուր առմամբ երաժշտական կառույցի հիմքի վերաբերյալ: Մերձավոր Արևելքի մոնոդիկ համակարգերը երաժշտական մտածողության բարձր աստիճան համարելու հարցում, Գրուբերին զուգահեռ, վկայակոչվում է «ճանաչված գիտնականի՝ Քուշնարյան-տեսաբանի դիրքորոշումը»: Իսկ մոնոդիայի ֆենոմենի բազմաթիվ բնութագրերում մասնագետների կարծիքով առավել ընդունելի են համարվում Քուշնարյանի ձևակերպումն ու ըմբռնումը, համաձայն որի՝ մոնոդիայում մեղեդային սկիզբն ինքնին առաջնային է, սակայն ոչ միակը¹:

Անցյալ դարի 70–80-ական թթ. երաժշտատեսական աշխատություններում (Մ. Խառլապ, Յու. Եվդոկիմովա, Ի. Ժորդանիա, Ս. Գալիցկայա, Ն. Շահնազարովա) մոնոդիայի կամ պոլիֆոնիայի առաջնության խնդրահարույց քննարկումները հետին պլան են մղվում՝ իրենց տեղը զիջելով գենետիկորեն տարբեր երկու երաժշտամտածողական տիպերի գոյության դրույթին, դրանց ծագման և զարգացման առանձնահատկությունների հետազոտության հարցերին: Արևելքի մոնոդիկ երաժշտության խորքային հատկանիշների՝ կանոնիմարովիզացիա, ստեղծագործող-կատարող կատեգորիաների երկմիասնական հիմքը կարևորելիս, դարձյալ ի հաստատումն Քուշնարյանի առաջադրած տեսակետների, մեջբերվում են նաև անվանի արաբ, հնդիկ և այլ արևելքի երաժիշտ-կատարողների և գիտնականների (օրինակ՝ Ռավի Շանկարի) մտքերը: Հաճախ են նշվում նաև Քուշնարյանի լուսաբանումները հայկական մոնոդիայի հնագույն նմուշներում տոնիկական կենտրոնի կարևորության և դրա շրջագարդման սկզբունքների վերաբերյալ, որ գիտնականը հաստատում էր նաև Մերձավոր Արևելքի տարբեր մշակույթներում կրկնակի հորոյի լայն կենցաղավարման փաստով:

Նման կարծիքները, հղումներն ու մեկնությունները բազմաթիվ են, և Քուշնարյանի տեսությամբ և հիմնարար դրույթներով ներշնչված արևելագետ-երաժշտագետների հետազոտությունների քննությունը կարող է առանձին ուսումնասիրության նյութ դառնալ:

Ամեն մի հետազոտող իր ասելիքը շարադրելիս, «իրեն վիճակված» գիտական խնդիրները լուծելիս խորանում է դրանց հիմքերի, նախապատմութե-

¹ Տե՛ս **Ульмасов Ф.** О некоторых современных аспектах теории таджикской традиционной музыки (Борбад, Эпоха и традиции культуры, Душанбе, 1989, с. 192–196):

յան, փաստագրական տվյալների ու հարակից ոլորտներին առնչվող նյութերի մեջ և փնտրում այն կոմպանները, որոնց հիմքով կառուցվում է հետազոտությունը: Այդպիսի կոմպաններից են եղել, նաև ինձ համար, Քուչնարյանի աշխատանքներում և մասնավորապես նրա մենագրության մեջ բարձրացված մի շարք հիմնարար դրույթներ, որոնք վերաբերում են տարբեր ժողովուրդների մոնոդիկ երաժշտական մտածողությանն ու դրանց առնչակցություններին, մուղամաթին՝ իբրև մշակութային փոխազդեցությունները խորհրդանշող ժանրի, ինչպես նաև հայ երաժիշտների՝ մուղամաթի արվեստում ունեցած նշանակալի ավանդին ու դրա տարածման և զարգացման պատմական առաքելության խնդիրներին: Առանձնահատուկ կարևորություն են ունեցել հայ աշուղական երգարվեստի ձայնակարգային հիմքերի և հայկական մոնոդիայի մյուս ճյուղերի հետ դրանց ունեցած ծագումնաբանական ընդհանրությունների թեզերը: Մշակութաբանական հարթության վրա՝ Արևելյան մեկնակերպի և ազգային տարբերակների հարաբերության առումով, ուղենշային են դարձել աշուղական սիրավեպերի և հերոսական ասքերի երաժշտաբանաստեղծական դրվագների մեղեդիական, ձայնակարգային սերտ առնչությունները հայ ժողովրդական, ընդհուպ գեղջկական երգի հետ²: Հավասարապես կարևոր են զարտուղի ձայնեղանակների, ալտերացված ձայնակարգերի հետևողական կիրառության և արմատավորման երևույթը հայ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության տարբեր ժանրերում, հատկապես աշուղական արվեստում³:

Անշուշտ, մենագրության որոշ բաժիններում, հատկապես Կովկասի և Առաջավոր Ասիայի մշակութային փոխառնչություններին ուղղված նկատառումներում, տեղ են գտել մտքեր և դատողություններ, որոնք լիովին չեն բավարարում մերօրյա գիտական փաստարկումները: Ասվածն առնչվում է չափազանցված դասակարգային թեքումով՝ արիստոկրատական և դեմոկրատական բնութագրումներով առանձնացված մուղամաթի արվեստի երկու ճյուղերին, Նիզամի Գյանջևիին և ադրբեջանական մշակույթին տրված որոշ բնութագրերի⁴: Մասնավորապես, Անիի պեղումների հիման վրա մշակույթի տարբեր ոլորտներին վերաբերող փաստերն ու եզրահանգումները հարաբերելով նաև երաժշտությանը՝ գիտնականը համոզված է, որ հայկական արիստոկրատիայի պալատներում նույնպես սկսել են ծաղկել և զարգանալ մահմեդական իշխանավորների ճաշակին ու բարքերին հարիր մուղամաթի արվեստի ճոխ ձևերը⁵:

Անիի թագավորության շրջանի մուղամաթի արվեստի ենթադրյալ փարթամ ձևերը որևէ արևելյան մշակույթի՝ իրանական թե արաբական, դեռևս հայտնի չեն: Ներկայիս մուղամաթի արվեստի լայնածաված շարքերը ուշ ավանդույթին պատկանող երևույթներ են՝ XVIII դարի վերջ – XIX դարի

² **Երնջակյան Լ.**, Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Երևան, 2009, էջ 34:

³ **Кушнарев Х.** Вопросы истории и теории армянской монодической музыки, Ленинград, 1958, с. 209.

⁴ Նույն տեղում, էջ 255-258:

⁵ Նույն տեղում, էջ 148:

սկիզբ, տերմինաբանական բազմաթիվ անհամապատասխանություններով և տարընթերցումներով, հսկայածավալ շարքերի կառուցվածքային ու դարձվածքային համակարգերի կազմավորման սկզբունքների ակնհայտ տարբերություններով՝ միջնադարյան տրակտատներում մեկնաբանված երաժշտատեսական, գործնական-կատարողական և գեղագիտական հարցերի համեմատությամբ:

Բնականաբար, հիմնվելով խորհրդային շրջանի ռուսական արևելագիտության մեջ շրջանառվող տեսակետների և ադրբեջանցի երաժշտագետ Կ. Կասիմովի տվյալների վրա, Քուշնարյանը XII–XIII դարերին միջնադարյան Արևելքի երաժշտական իրողությունները հիմնականում վերագրում է ադրբեջանական մշակույթին: Ժամանակի գաղափարախոսությունն իր դրոշմն է դրել այս հարցադրումների և տեսակետների վրա, սակայն կարևորն այն է, որ Քուշնարյանն ինքն է նշել դրանց հետագա ճշգրտման, վերանայման և քննական մոտեցման անհրաժեշտությունը: Հասկանալի է, որ Քուշնարյանը, ինչպես և Կոմիտասը, անդրադառնալով օտարամոլության և օտար ազդեցությունների հարցերին, նկատի ուներ նախ և առաջ մասնագիտացված քաղաքային երաժշտարվեստի՝ հոգևոր թե ժողովրդական ճյուղերի անհամեմատ լայն հունով ընթացող միջմշակութային շփումների հանգամանքը, ի տարբերություն ժողովրդական-գեղջկականի: Ասվածն առանձնապես էական է ընդհանուր արևելյան երևույթների՝ աշուղական արվեստի և մուղամաթի պարագայում: Հարցի լուսաբանման նպատակով գիտնականը համեմատական դաշտ է բերում առաջին հայացքից անհամատեղելի հայկական հոգևոր մոնոդիաները և այսպես կոչված անդրկովկասյան մուղամները (ժամանակի ոգուն համապատասխան մի եզր, որ կիրառել է Քուշնարյանը): Տվյալ ժամանակափուլի համատեքստում նման հարցադրումների առաջադրումն ու դրանց իրավացիությունը, թեկուզ և փոքրաքանակ փաստական և վերլուծական ապացույցներով հաստատելու գաղափարն ինքնին համարձակ նախածնությունն էր:

Քուշնարյանի ուսումնասիրություններում Արևելքի ժողովրդապրոֆեսիոնալ ժանրերին և հատկապես մուղամաթի արվեստին առնչվող գրեթե բոլոր խնդիրները լուսաբանված են ընդհանուր ուրվագծերով, և միանգամայն օրինաչափ է, որ արդեն նրա մասնագիտական դասարանում ուսանած անվանի երաժշտագետների՝ Ռ. Աթայանի, Մ. Բրուտյանի, Ն. Թահմիզյանի, Կ. Խուդաբաշյանի և այլոց հետազոտություններում հնչում է խնդիրների և հարցադրումների հետագա հստակեցման անհրաժեշտությունը՝ պատմական և փաստագրական նյութերի լայն ընդգրկումով, ինչպես նաև մուղամ կատեգորիայի պատմատեսական իմաստավորումով հայ իրականության մեջ, որոշակիորեն իրականացված «Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից» աշխատության մեջ⁶:

⁶ Երնջակյան Լ., Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1991: Գիտնականի աշխատանքներում արևելյան երաժշտությանն առնչվող խնդիրների ամփոփ ներկայացմանն է նվիրված Կարինե Խուդաբաշյանի «Музыка Востока в исследованиях Х.С. Кушнаряна» հոդվածը: Տե՛ս **Худабашиян К.** Армянская музыка в аспекте сравнительного музыкознания, Ереван, 2001, с. 117-121:

Ըստ էության, Քուշնարյանի ուսումնասիրություններում և առանձին գեկուցումներում շոշափված համաարևելյան կարգավիճակ ունեցող ժանրային ֆենոմենների՝ մուղամաթի, աշուղական արվեստի, սազանդարային կատարողական ավանդույթի, ընդհանուր առմամբ ժողովրդամասնագիտացված և քաղաքային երաժշտարվեստի բազմաբնույթ հարցերի շրջանակով է ամբողջանում և որոշարկվում երաժշտական արևելագիտությունը՝ գիտահետազոտական հիմքերով հարաբերվելով համեմատական երաժշտագիտությանը, երաժշտական անտրոպոլոգիային կամ էթնոերաժշտագիտությանը:

Քրիստափոր Քուշնարյանի գիտական դրույթները նոր և հեռանկարային փուլ են նշանավորել հայ-արևելյան երաժշտական փոխառնչությունների քննության, հայկական մոնոդիայի և Արևելքի դասական երաժշտության տարբեր ճյուղավորումներում առկա ձայնակարգային-ինտոնացիոն և դարձվածաբանական ընդհանրությունները լուսաբանելու տեսանկյունից:

Հայ երաժշտագիտության էջերում արևելյան հայրենասիրության բունկումներն անհամեմատ քիչ են եղել, հատկապես հետկոմիտայան շրջանում ձևավորված հասարակական մշակութային պատկերացումների պայմաններում, երբ ցանկացած հայ-արևելյան երևույթի կամ նյութի քննարկումը հանգեցնում էր արևելյան կաղապարի ժխտմանը կամ հակադրմանը բուն ազգային արժեքներին: 1920–30-ական թվականներին առաջ էին քաշվում սխալ տեսակետներ, տրվում էին վիճելի և հակասական գնահատականներ, որոնք հետագայում քննադատվեցին: Նշեմ միայն Ալ. Շահվերդյանի բազմիցս մեջբերված կարծիքը՝ ի հակակշիռ մուղամի ժանրի մահացման վուլգար-սոցիոլոգիական հայեցակետի: Անվանի երաժշտագետը գրել է, որ չի կարելի մուղամը ջնջել Հայաստանի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստից. «Նման միտումը հենվում է մուղամը իբրև արաբաիրանական մշակույթի միահեծան պատկանելություն դիտելու սխալ տեսանկյունի վրա, այն դեպքում, երբ մուղամի ամենից ավելի կենսական և արժեքավոր օրինակները 19–20-րդ դարերի ընթացքում ստեղծվում, մշակվում, ձայնագրվում և ուսումնասիրվում են Ադրբեջանում, Հայաստանում և Միջին Ասիայում»⁷: Իր «Անդրկովկասյան մուղամների հարցի շուրջը» հոդվածում Քուշնարյանն ընդունում է մուղամների արաբա-իրանական ծագման վարկածը, սակայն թերևս համեմատական նյութերի անհասանելիության պատճառով կենտրոնանում է անդրկովկասյան և միջինասիական տարբերակների վրա:

Թեև հայ երաժշտության մեջ մուղամներն ուսումնասիրելու հարցը վաղուց է ծագել, և այս ասպարեզի ձեռքբերումների նշանակությունը ակնհայտորեն դուրս է գալիս հայ երաժշտության սահմաններից և կարևորվում Մերձավոր Արևելքի գեղարվեստական ավանդույթում, այսուհանդերձ, խնդրի քննությունը մշակութաբանական, դավանաբանական և գեղագիտական դիտակետերից մշտապես առաջադրում է ենթատեքստ, հարանշանակություններ և վերապահումներ՝ համապատասխան մեկնաբանություններով: Չխորանալով մուղամ և հայ երաժշտական իրականություն, մուղամ և հայ պրոֆեսիոնալ երաժշտություն բազմաբնույթ հարաբերություններում՝ նշեմ միայն

⁷ Шавердян А. Очерки по истории армянской музыки, XIX–XX вв., Москва, 1955, с. 127.

այն ոլորտները, որոնք Քուշնարյանի բազմահարուստ գիտահետազոտական կենսագրության մեջ նրան բնութագրում են նաև որպես երաժիշտ-արևելագետի: Դրանք ընդգրկում են և՛ գործնական միջոցառումների ու համերգների կազմակերպում՝ հայ գործիքահար մուղամաթահարների մասնակցությամբ, և՛ դաշտային գիտահավաքչական աշխատանքներ, և՛ կոմպոզիտորական ստեղծագործություն, և՛ բուն հետազոտական աշխատանք, արտացոլված ինչպես կապիտալ մենագրության մեջ, այնպես էլ առանձին զեկուցումներում՝ նվիրված հայ և տարբեր արևելյան մշակույթների պատմատեսական ու կատարողական խնդիրներին:

Հումանիտար լայն գիտելիքն ու մտահորիզոնը, ստեղծագործական մտածողությունը, գիտական բարեխղճությունն ու նվիրվածությունը հատկապես ազգային երաժշտական մշակույթին, իրենց դրոշմն են թողել Ք. Քուշնարյանի բոլոր ձեռնարկումներում, նորարարական մտահղացումներում և գիտական խնդիրների համարձակ հարցադրումներում: Այդպիսի ձեռնարկումներից էին 1927–29 թթ. Քուշնարյանի կազմակերպած անդրկովկասյան երեք արշավախմբերը՝ Ե. Գիպպիուսի և Ջ. Էվալդի մասնակցությամբ, որոնց նյութերում ընդգրկված մուղամները, ի շարս անցյալ դարի տարբեր ժամանակափուլերում կատարված այլ արժեքավոր ձայնագրությունների, հիմք դարձան «Искусство мугамата в аспекте армяно-иранских музыкальных связей» թեմայով գրված իմ թեկնածուական դիսերտացիայի համար (Տաշքենդ, 1982): Պատմական մեծ արժեք ունեցող այդ նյութերից երեք ամբողջական մուղամների՝ Ռաստի, Հիջազի ու Շուշթարի առաջին վերծանությունները (ձայնագրված Թիֆլիսում 1927 թ.) որ կատարեցի՝ հաղթահարելով տեխնիկական-մեխանիկական դժվարություններ՝ գործիքային հանկարծաբան հոսքին և զարդանախշերին համարժեք և ցանկալի ճշգրտության տեքստ ստանալու իմաստով, իսկապես մի բարդ դպրոց էր, որ ես անցա, օգտվելով երաժշտագետ-ֆոլկլորագետ Ալինա Փահլևանյանի հմուտ խորհուրդներից⁸: Քուշնարյանի արշավախմբերի աշխարհագրությունն ու ժանրային ընդգրկումները, թերևս, անգերազանցելի են, իսկ դրանց գիտաճանաչողական արժեքը՝ անգնահատելի:

Անցյալ դարասկզբին հաստատագրված նյութն իր ողջ էթնիկ-լեզվական և ժանրային բազմազանությամբ պատկերացում է տալիս դարերի խորքից մեզ հասած և բանավոր ավանդույթով կենցաղավարած ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստի տարբեր ճյուղերի, մոնոդիկ մտածողության ընդերքում բյուրեղացած երաժշտական սեռերի ու տեսակների, ժողովրդի կենցաղում արմատացած կատարողական ոճերի, գեղարվեստական ճաշակի և նախասիրությունների մասին:

Քուշնարյանի կազմակերպած արշավախումբը 1927 թ. 47 օրվա ընթացքում եղել է Լենինականի, Նոր Բայազետի շրջաններում, Երևանում և Թբիլիսիում՝ հավաքելով 250-ից ավելի գեղջկական և հոգևոր երգեր՝ ժողովրդական կատարումներով:

⁸ Տե՛ս Երնջակյան Լ., Հայ-իրանական..., Հավելված, էջ 152–166:

1928-ին Քուչնարյանը մենակ է մեկնել Ջանգեզուրի (Գորիս, Սիսիան) և Դարալագյազի (Եղեգնաձոր) շրջաններ և դարձյալ Երևանում ու Թբիլիսիում ձայնագրել 150 նմուշներ՝ գերակշռորեն հոռովելիներ, գործիքային մուղամներ, աշուղական երաժշտություն, հայկական, քրդական, ադրբեջանական և թուրքական ֆոլկլորի տարածանք օրինակներ:

1929 թ. արշավախմբի աշխատանքներում նրան միացել են նաև Լենինգրադի կոնսերվատորիայի ուսանող-կոմպոզիտորներ Հարո Ստեփանյանն ու Տիգրան Տեր-Մարտիրոսյանը, ինչպես նաև Յուրի Տյուլինը: Այս անգամ նրանք եղել են Շիրակի գյուղերում, Շուկավերում (Վրացական ՍՍՀ) և դժվար կլիմայական, կենցաղային պայմաններում հավաքել 150 երգ⁹: Ընդհանուր առմամբ, երեք էքսպեդիցիաների ընթացքում հավաքվել է ավելի քան 500 նմուշ, որոնք այժմ պահվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա. Քուչնարյանի անվան ձայնադարանում և ժողովրդական երաժշտության բաժնի աշխատակիցների ջանքերով համակարգվում, վերծանվում և մասնագիտական բարձր չափանիշներով, մեկնաբանություններով ու ծանոթագրություններով հանձնվում հրատարակության:

Արշավախմբերին հաջորդել են Քուչնարյանի կազմակերպած համերգները, առանձին ունկնդրումները և հանդիպումները՝ ռուս հանրությանը մոտոդիկ երաժշտական մշակույթի բարձրարվեստ նմուշներն ի մոտո ծանոթացնելու նպատակով: Ավելի չշեղվելով իմ խոսքի հիմնական առանցքից՝ նշեմ միայն, որ ռուս երաժշտագետների և կոմպոզիտորների տված արժեքավոր գնահատումներում, մոտոդիայի խորքային ըմբռնումով առանձնանում է Գլազունովի հետաքրքիր և արտառոց կարծիքը՝ կարևորված Գայանե Չերտարյանի կողմից. լսելով հայ դուդուկահարների կատարումները՝ նա ասել է. «Հիմա ես հասկանում եմ, թե ինչու են հայերն այդքան լավ Բախ նվագում»¹⁰:

Քուչնարյանի «արևելյան» հետաքրքրությունները գործնական-ստեղծագործական մարմնավորում են ստացել նաև նրա կոմպոզիտորական գործունեության մեջ: Ինքնատիպ պոլիֆոնիկ ստեղծագործություններից, ժողովրդական թեմաներով գրված խմբերգերից բացի, նա անդրադարձել է նաև Արևելքի գրական-էպիկական խոշոր հուշարձաններից մեկին՝ Շահնամին, Իրանի քաղաքակրթության և մշակույթի հայելուն, միջնադարյան Արևելքի երաժշտական արվեստի հանրագիտարանին: 1935 թ. նա Մկրտիչ Ջանանի «Շահնամե» պիեսի բեմականացման առիթով երաժշտություն է գրել մեծ սիմֆոնիկ նվագախմբի համար՝ դիոլի մասնակցությամբ, որ բեմադրվել է Լենինգրադի Մեծ դրամատիկական թատրոնում¹¹: Փաստորեն, սա ազգային

⁹ Տվյալները վերցված են **Чеботарян Г. Х.С.** Кушнарев, Очерк жизни и творчества (Ленинград, 1990, с. 17–18) գրքից՝ հիմնված Քուչնարյանի հաշվետվությունների վրա, որոնք պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

¹⁰ **Չերտարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 19:

¹¹ Նույն տեղում, էջ 21: Դերասան, ռեժիսոր և դրամատուրգ Մ. Ջանանի «Շահնամե» պիեսը, արժանանալով Համամիութենական մրցանակի, բեմադրվել է Երևանում, Բաքվում, Նախիջևանում և այլ քաղաքներում, թարգմանվել ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ուզբեկերեն, տաջիկերեն և լայն արձագանք ստացել ժամանակի մշակութային կյանքում:

նվագարանը՝ դիոլը, էպիկական ոճով գրված սիմֆոնիկ երաժշտության մեջ կիրառելու առաջին փորձերից է, որ հետագայում գեղարվեստական, գեղագիտական ընդհանրացումների և լուծումների նոր մարմնավորումներով հաստատվեց հայ և արևելյան տարբեր կոմպոզիտորական դպրոցների ստեղծագործական ավանդույթներում: Քուշնարյանի մտահղացման առիթով կարող եմ միայն ենթադրել, որ եթե գիտելիքը չէ, ապա արվեստագիտական խոր ինտուիցիան է նրան հուշել «Շահնամեի» երաժշտական կերպավորման մեջ կիրառել հարվածային գործիք: Իրանական էպոսի հաստատուն կենցաղավարման վայրերից մեկի՝ Ջուրխանայի (Սպորտի դպրոց) երաժշտակատարողական ավանդույթում «Շահնամեն» բացառապես երգվում և ասերգվում է զարբի՝ դիոլի կամ թմբուկի նման հարվածային գործիքի ուղեկցությամբ¹²:

«Արևելյան» մեկ այլ օրինակ է նաև 1936 թ. գրված Սոնատ սոլո-թավջութակի համար ծավալուն երկը, որի երրորդ մասում հնչում են Սայթ-Նովայի «Դուն էն գլխեն» երգին կամ արևելյան չարգահին բնորոշ ինտոնացիաները: Գայանե Չերտարյանը, բնութագրելով այս մասը որպես աշուղական երգ, միաժամանակ ընդգծում է Սոնատում եվրոպական դասական ավանդույթի, մասնավորապես Բախի մենանվագ սոնատների և հայկական ժողովրդապարոֆեսիոնալ երաժշտությանը բնորոշ սկզբունքների ներդաշնակ կիրառությունը¹³:

Քուշնարյանի ժողովրդական երգերի բազմաթիվ խմբերգային մշակումներից, որոնց մի մասը կորել է Լենինգրադի շրջափակման ժամանակ, պահպանվել են երկուսը: Դրանցից մեկը կրում է «Քյոռոլլի գերության մեջ» խորագիրը, որ հանրահայտ արևելյան ասքի դրվագներից մեկի անվանումն է: Հայ կոմպոզիտորներից և երաժշտագետներից շատերն են անդրադարձել Արևելքի վիպասանական արվեստի հերոսական սյուժեներից մեկի՝ Քյոռոլլու պատմությանը, ձայնագրել, մշակել, ներդաշնակել և հրատարակել են հայտնի և տարածված մեղեդիները: Լայն ժողովրդականություն վայելելով հայոց միջավայրում՝ այն դարեր շարունակ երգվել ու պատմվել, հաստատուն տեղ է գրավել ժողովրդապարոֆեսիոնալ երգիչների և աշուղների երկացանկում՝ խարսխված և՛ հայ ժողովրդական գուսանաաշուղական մեղեդային մտածողության, և՛ ընդհանուր արևելյան երաժշտական արվեստի կանոնակարգված հիմքի վրա: Պատահական չէ, որ Կոմիտասի, Սպ. Մելիքյանի, Ա. Քոչարյանի, Մ. Մազմանյանի, Ա. Խաչատրյանի ուշադրությունից չվրիպած այդ ինքնատիպ երաժշտաբանաստեղծական կառույցի շուրջը համախմբված մեղեդիները հետաքրքրել են նաև Քուշնարյան կոմպոզիտորին¹⁴: Դեռևս 1927 թվականի արշավախմբի ժամանակ նա ձայնագրել է Քյոռոլլու մի քանի նմուշ, տարբեր բանասացների երգածից, որոնք և հիմք են դարձել համանուն խմբերգի ստեղծման համար:

¹² **Ернджакян Л.** О бытовании иранских эпических мотивов в Армении и музыкальной традиции исполнения «Шахнаме», Традиции и современность, Вопросы армянской музыки, книга 2, Ереван, 1996, с. 68–77.

¹³ **Չերտարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 47–48:

¹⁴ **Տե՛ս Երնջակյան Լ.**, Աշուղական սիրավեպը..., էջ 98–165:

Որքան որ բազմաբնույթ են Քուչնարյանի գիտական հետաքրքրությունները պատմության և տեսության, երաժշտական ոճերի ու գեղարվեստական մտածողության ոլորտներում, հետաքրքիր և թարմ դատողությունները՝ արևմտյան և արևելյան Վերածնունդների, եկեղեցական երաժշտության ու ծիսարարողական իրողությունների, էպոսի և գուսանական արվեստի և այլապես հարցերի լուսաբանումներում, նույնքան ուշագրավ և բազմազան են Արևելքի ավանդական երաժշտությանը, մասնավորապես մուղամաթի արվեստին վերաբերող հարցադրումներն ու ընդհանրացումները:

Քուչնարյանի և՛ հրատարակած հոդվածներում, և՛ կարդացած զեկուցումներում, և՛ նրա մենագրության տարբեր բաժիններում կարևոր տեղ է հատկացված մուղամաթի արվեստին: Դրանցում ուրվագծվում են երկու առանցքներ՝ մուղամը հայ իրականության մեջ և մուղամը որպես ժանր՝ Արևելքի տարբեր երաժշտարվեստներում, ավելի հստակ՝ Միջին Ասիայի և Անդրկովկասի մոնոդիկ մշակութային տարածքներում:

Հայկական Արևելքին առնչվող անդրանիկ ուսումնասիրություններից է «Գումրեցի» խորագրով գրքում զետեղված «Ն.Ֆ. Տիգրանովը և Արևելքի երաժշտությունը» վերլուծական հոդվածը¹⁵: Քուչնարյանին է պատկանում Տիգրանյանի դաշնամուրային փոխադրությունների ձևակառուցվածքային և ձայնակարգային-արտահայտչական հատկանիշների վերլուծության հիման վրա առաջադրած հետաքրքիր թեզերի առաջնությունը. այն է՝ արևելյան մուղամային և եվրոպական դասական երաժշտական ձևերի՝ վարիացիաների, չակոնայի, սոնատի միջև եղած ընդհանուր սկզբունքների առկայությունը, ցիկլայնությունը և անտիթեզի ներկայությունը, միաձայն մտածողությամբ խոշոր կառույցներ ստեղծելու ինքնատիպ դրսևորումներն ու ստեղծագործ միտումները, որոնցով արևելցի կոմպոզիտորներն առաջ են անցել եվրոպայից:

Դժվար է գերազնահատել 1941 թ. Տաշքենդում կարդացած «Անդրկովկասյան մուղամների հարցի շուրջ» զեկուցման պատմական նշանակությունը: Համեմատական կտրվածքով քննելով իրանական դասագահների, միջինասիական շաշմակոմի, հնդկական ռազաների և այլ ազգային ժանրային կազմավորումների առանձնահատկությունները, շոշափելով մուղամային ձայնակարգերի, մեղեդային, ռիթմական, ձևակառուցվածքային հատկանիշների, վոկալի և գործիքային նվագակցության, անսամբլային կատարումների մի ամբողջ հարցերի խումբ՝ Քուչնարյանը հանգում է դրանց հետագա խորացված ուսումնասիրության և պալեոնոտոլոգիական շերտերի ճշգրտման անհրաժեշտությանը:

Կարճ ժամանակում խորանալով ուզբեկական երաժշտության մեջ, ազգային պարերի և մուղամների պարային դրվագների ռիթմական դարձվածքները համեմատելով արաբական, թուրքական և տաջիկական ռիթմերի՝ ուսույնների համակարգերի հետ՝ Քուչնարյանը հանգամանալից զեկուցում է կարդացել Տաշքենդում, հետազոտական մեթոդներ մշակել ուզբեկական ժողովրդական երաժշտագիտության և պարարվեստի ուսումնասիրության հա-

¹⁵ Гумреци, Николай Фаддеевич Тигранов и музыка Востока, Ленинград, 1927, с. 30.

մար: Իր լայնածավալ գիտակազմակերպչական գործունեությամբ, անվանի արևելագետներ Վ. Բեյլակի, Բ. Ուպենսկու, Ա. Յակուբովսկու, Կ. Տրեվերի հետ, որոնք նույնպես էվակուացվել էին Տաշքենդ, նպաստել է ուզբեկական մշակույթի աննախադեպ առաջընթացին՝ արժանանալով Ուզբեկստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը:

Քրիստափոր Քուչնարյանի գիտական տեսադաշտում ընդգրկված մշակութային իրողությունների, գեղարվեստական երևույթների և ստեղծագործական ոճերի հետազոտական չափանիշները, դրանց իմաստային արտահայտչական, կառուցվածքային հատկանիշների մեկնություններն ու ելակետերը մեծապես պայմանավորված են լայնախոհ գիտնականի չկաղապարված մտածելակերպով, նրբակիրթ գեղագիտական ճաշակով, քրիստոնեական-մահմեդական, հոգևոր-աշխարհիկ, ազգային-համամարդկային հակամիասնական փոխհարաբերությունների ու կապերի ներդաշնակ ըմբռնումներով:

Կարծում եմ՝ գիտնականի վաստակը, հետազոտական փորձն ու երաժշտագիտական-ստեղծագործական ժառանգությունը կարևորելու և արժանին մատուցելու լավագույն եղանակը նրա գիտական դրույթներում և վարկածներում, տեսական համակարգերի ու մեթոդական ծրագրերի նորարարական խիզախումներում ընդգրկված գաղափարների լուսաբանումը, վերաիմաստավորումն ու կիրառումն են արդի երաժշտագիտական մտքի համատեքստում:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Քրիստափոր Քուչնարյանի բազմածավալ գիտահետազոտական, գիտամանկավարժական և ստեղծագործական գործունեության բոլոր ոլորտներում ակնառու են արվեստագետ-գիտնականի վառ անհատականությունը, տեսական և ստեղծագործ մտքի ներդաշնակ միությամբ պայմանավորված գեղարվեստական երևույթների մեկնաբանման ինքնատիպությունը, քննական լայն համատեքստի խորիմացությունը: Մոնոդիկ և պոլիֆոնիկ մշակույթների մեծ գիտակի ուշադրության կենտրոնում են եղել նաև Մերձավոր Արևելքի ժողովուրդների ավանդական դասական երաժշտության ժանրերը՝ մուղամներն ու դաստգահները, աշուղական և սազանդարական արվեստը: «Հայկական մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցերը» մենագրության մեջ առաջադրված դրույթները և սկզբունքային ելակետները՝ մշակութային փոխազդեցությունների, հայկական միջավայրում խոր արմատներ ունեցող և լայնորեն կենցաղավարող համաարևելյան երևույթների ծագումնաբանական հիմքերի, ծայնակարգային համակարգերում առկա ընդհանրությունների և այս ասպարեզում հայ երաժիշտների պատմական առաքելության վերաբերյալ, ինչպես նաև բազմաթիվ այլ խնդիրների քննական ուրվագծերը վկայում են գիտնականի անուրանալի վաստակը երաժշտական արևելագիտության մեջ: Դրանք արևելագետ-երաժշտագետների հետազոտական աշխատանքների արժեքավոր ուղեցույցներն են:

ХРИСТОФОР КУШНАРЯН – ВОСТОКОВЕД

ЛИЛИТ ЕРНДЖАКЯН

В центре внимания признанного ученого, композитора и педагога Христофора Кушнаряна были жанры традиционной классической музыки народов Ближнего Востока – мугамы и дастгяхи, искусство ашугов и сазандаров. Выдвинутые в его монографии «Вопросы истории и теории армянской монодической музыки» идеи и принципиальные положения относительно культурного взаимовлияния, генетических основ общевосточных явлений, имеющих глубокие корни и широко бытующих в армянской среде, общности в ладовых системах, исторической миссии армянских музыкантов в этой области, а также аналитический многих других проблем свидетельствуют о неоспоримых заслугах ученого в музыкальном востоковедении и являются ценным руководством для музыкантов-востоковедов в их исследовательских работах.

Ключевые слова – Кушнарян, востоковедение, монодия, лады, теория, музыкальные взаимосвязи, «Шахнаме».

KRISTAPOR KUSHNARYAN – THE ORIENTALIST

LILIT YERNJAKYAN

The renowned scholar, composer and pedagogue Kristapor Kushnaryan paid a particular attention to the genres of traditional classical music of the peoples of the Middle East. The ideas and significant assumptions in his monograph refer to the mutual cultural influences, the genetic basis and origins of the phenomena, generally peculiar to the East, deeply rooted and widespread among the Armenian populace. The commonality in the modal systems, Armenian musicians' historical mission in the field as well as analytical outlines regarding many other issues, are indicative of the scholar's merits in Oriental musical studies; they serve as a worthwhile guidance for orientalist musicians in their research still nowadays.

Key words – Kushnaryan, Eastern Studies, monodic music, modal system, theory, musical interrelations, "Shahname".

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆԸ. ՊԵՏՐՈՍ ԱԼԱՀԱՅՏՈՅԱՆ

ԱՆԻ ՀԱԿՈՐՅԱՆ*

Հոդվածում ներկայացված են հայ ազգային երաժշտության մեծ նվիրյալ, բանահավաք-երաժշտագետ, խմբավար, հասարակական գործիչ Պետրոս Ալահայտոյանի կյանքն ու գործունեությունը: Նա եղել է Բարսեղ Կանաչյանի սանը և մասնագիտանալով իբրև երաժշտագետ՝ աշխատել է Բոյունելի պետական ռադիոյում: Ալահայտոյանը Ցեղասպանության 70-րդ և Կոմիտասի մահվան 50-րդ տարելիցների կապակցությամբ լծվում է ազգանպաստ մնայուն աշխատանքի. 1985 թվականից, թողնելով մշտական աշխատանքն ու բնակության վայրը, այցելում է Եվրոպայի, Արևելքի և ԱՄՆ-ի հայկական համայնքներ, ծերանոցներ՝ ձայնագրելով անչափ կարևոր ազգագրական և փաստագրական նյութեր: Հսկայածավալ նյութը՝ 430 տուփ մագնիսոֆոնային ձայնագրություն և 125 տուփ մագնիսոֆոնային ժապավեն, նվիրաբերում է մեզ, որն այսօր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարան-արխիվում է: Թվայնացման և անձնագրավորման փուլերից հետո մեծ երախտագիտությամբ պարտավորված ենք կազմել և հրատարակել ժողովածուներ:

Բանայի բառեր՝ Պետրոս Ալահայտոյան, երաժշտություն, ավանդական, բանահավաք, ձայնագրություն, բանասաց, ժողովածու:

Ներածություն

Երաժշտագետ, բանահավաք, խմբավար ու հասարակական գործիչ Պետրոս Ալահայտոյանը հայ ժողովրդի համար բեկումնային ժամանակահատվածում որոշում կայացրեց անել մի բան, որը մինչ այդ նման ծավալով իրականացնել հաջողվել էր միայն հայ ազգային մշակույթին մեծագույն ծառայություն մատուցած Միհրան Թումանյանին: Ի դեպ, այս երկու գործիչները մի քանի կարևոր առումներով զուգադրելի են, ըստ այդմ էլ մեր ժամանակակից Պետրոս Ալահայտոյանը մեծ հպարտության զգացումով է համակվում:

Նախ ընդգծենք վերն ակնարկված այն հանգամանքը, որ XX դարի հատկապես 2-րդ կեսին բուռն զարգացում ապրած երաժշտական բանահավաքչական աշխատանքները հիմնականում անցկացվում էին Խորհրդային Հայաստանի տարածքում, իսկ Մ. Թումանյանն ու Պ. Ալահայտոյանն իրենց «հունձքը» կատարեցին դրա սահմաններից դուրս՝ բավական լայն աշխարհագրական ընդգրկմամբ:

Մյուս և ամենաէական զուգահեռն այն է, որ երկուսի համար էլ ուղենիշ են եղել Կոմիտասն ու իր գործունեությունը: Այսպես, Մ. Թումանյանի պարագայում՝ իբրև անմիջական ուսուցիչ, մյուսի դեպքում՝ հոգևոր հայր, դեռ պատանի Պետրոսին երաժշտության աշխարհի առաջնորդող Բարսեղ Կանաչյանի ուսուցիչ: Անհատական գրույցներից մեկի ժամանակ Պ. Ալահայտոյանն

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, anifolkmusicologist@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 08.10.2021, գրախոսելու օրը՝ 15.10.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

ասաց. «Մենք մեր չնչին գործունեությամբ փշրանքներ ենք Կոմիտասի կերպարի ու արած գործի առաջ, ում անունն իսկ հնչեցնելն արդեն մեծ պատիվ է ցանկացածիս համար»: Եվ այս համեստ խոսքերն արտաբերում է մի մարդ, որը, հոգսաշատ այս դարաշրջանում, թողնելով մշտական աշխատանքը, սեփական սուղ միջոցներով ու բուլրովին միայնակ շրջել է Արևելքի, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների, քաղաքների հայաշատ համայնքներով ու ծերանոցներով, ծայնագրել ու, փաստորեն, փրկել ցեղասպանություն ապրած վերջին սերնդի հիշողության ծայքերում ամբարված ազգագրական արժեք ներկայացնող պատմություններ, վկայություններ, ավանդություններ, ծեսեր, երգեր... Նորից ընդգծենք, որ հենց այս առումով Պ. Ալահայտոյանի բանահավաքչական գործունեությունն իր արժեքով բացառիկ է, քանի որ հանրապետության սահմանների ներսում փայլուն կրթություն ստացած երաժշտագետների մի աստղաբույլ կար, որը, սակայն, չունեց աշխարհասփյուռ հայության հետ շփվելու, նրանց հիշողության մեջ «էրգրից» պահպանված ավանդաբար փոխանցված գիտելիքն ու հենց ցեղասպանությանն առնչվող վկայությունները նման ծավալներով ծայնագրելու հնարավորություն:

Հիմնական նյութի շարադրանք

теристикой высшего света и его представителей – баронессы Штраль, Шприха, князя Звездича. Противопоставляются ей в балете музыкальная группа «Романс» и «Ноктюрн», интерпретируемые как «иллюзии Арбенина о счастье с Ниной», т.е. сфера, куда по мнению героя не может проникнуть ложь. Здесь небезынтересно обратить внимание на то обстоятельство, что Нина как самостоятельный характер в балете не фигурирует (как, собственно говоря, по нашему мнению, и в драме Лермонтова). Мы видим Нину в мечтах и размышлениях Арбенина, рядом с ним, но вне Арбенина Нина не имеет самостоятельной характеристики. В качестве дополнительного аргумента можно указать на сцены, где Нина появляется без Арбенина – скажем, «Утро в Петербурге» и «Салон баронессы Штраль» (II акт). Присутствие Нины здесь никак не влияет на характер музыки, связанной с образом высшего света. И это не случайность. Вспомним реплику из «Маскарада» – «Что ныне женщина? Создание без воли, игрушка для страстей и прихотей других!». Да, Нина оказывается игрушкой или, точнее, игровой картой и в игре высшего света, и в руках Арбенина, картой, на которую он поставил и проиграл.

Вторая смысловая функция «Вальса» противостоит первой.

«Вальс» дополняет фрагмент из музыки к драме «Лермонтов», который получил в балете значение «сомнения, подозрения, страдания Арбенина». Музыка эта подобрана Оганесяном очень точно и по единству настроения, и по музыкальному «интонационному» сходству (щмящие, скорбные, секундовые интонации кажутся производными из темы вальса).

Третья смысловая функция «Вальса» – маскарад как игра, как символ одного из видов игры, лежащих в основе конфликта. В этом случае антитезой вальса становится фрагмент, построенный на темах сонаты-монолога для виолончели – solo – «картежная игра». Мы видим это противопоставление наглядно № 4 – № 6 – сцена «Маскарад», где господствует вальс, № 7 – «Воспоминания Арбенина» о том, как он обесчестил Незнакомца. Причем эта сцена не только и не столько характеристика Незнакомца, сколько экспозиция образа Арбенина как игрока, демонстрация приемов арбенинской игры (не только игры в карты, но и игры, которую Арбенин ведет с жизнью). Эту мысль подтверждает то обстоятельство, что в эпизоде, где Арбенин обнаруживает пропажу браслета и обвиняет Нину в измене, т.е. «в нечистой игре», звучит этот же, указанный выше музыкальный фрагмент. Почему же Оганесян в качестве музыкального образа карточной игры избрал тему из сонаты-монолога? Потому, что она, во-первых, противостоит вальсу и по фактуре, и тональной неустойчивостью, и, во-вторых, что очень важно, начальная тема этого фрагмента обнаруживает сходство с темой вальса, данной как бы в искаженном виде, а другая экспонирующая здесь тема сходна с «Dies irae». Обе темы, как уже упоминалось, связаны и с образом Незнакомца – полуреальным-полусимволическим. Он то как тень сопутствует Арбенину, то противостоит ему, но в этом случае уже символизирует рок, судьбу и связывается с лейттемами, обобщающими образы «мести» и «смерти», о которых речь пойдет ниже.

Наконец, «Вальс» несет обобщающую смысловую функцию – Жизнь как игра, как бал, как маскарад. Противостоит ему в этом случае «Dies irae». «Вальс» – жизнь – игра и «Dies irae», возмездие, смерть, являются главными движущими силами, направляющими музыкальную драматургию балета. «Вальс» – центробежная сила, от которой отталкивается музыкальное развитие; «Dies irae» – центростремительная, к которой оно стягивается. «Вальс» – жизнь диктует – стремительность, блеск, легкость. «Dies irae» – затормаживает, диктует остигатный ритм, мрачный колорит. Развитие идет по линии притяжения вальса к «Dies irae». «Dies irae» – это хорал – и первый отпечаток его на «Вальсе» мы слышим в сцене № 6, где к оркестровому проведению вальса присоединяется хор. Далее процесс модуляции из «Вальса» в «Dies irae» происходит следующим образом. Большая сцена «Утро в Петербурге» (II акт) открывается игровым, задорным «Галопом» – это веселье толпы, жизнь, не более. Такой же легкостью, игривостью, блеском отмечен и последующий «Вальс» (Сцена «Салон баронессы Штраль»). Лишь позже раскрывается второе значение этого второго «Вальса» (вальс из драмы «Лермонтов») и «Галопа». Модификация «Галопа», кстати, тоже вполне в духе эпохи романтизма. Галоп как жанр обретает, по меткому замечанию Асафьева, особое значение. «Формула галопа, – пишет он, – находит многоликое и красочно-выразительное, доходящее порой до зловещего мефистофельского сарказма претворение в могучем творчестве Листа»¹¹. Оганесян также применяет этот прием романтической школы. В сцене «Клевета» ритм галопа и вычленение из него мотива обретают зловещую, мефистофельскую окраску. Здесь впервые проявляется принцип остигато (многократное повторение в музыкальном произведении какого-либо мелодического или ритмического оборота), диктуемый «Dies irae». Самой темы хорала пока нет, но она уже, как видим, дает знать о себе. Заметим, что принцип остигато играет очень большую роль в творчестве Э. Оганесяна. В частности, в «Вечном идоле» остигатный ритм создает, как пишет Г. Тигранов, «ощущение замкнутого круга, predeterminedности, подавляющей власти... ритуалов, обычаев, приобретающих силу непреложных законов»¹².

Фразу эту можно вполне применить и к соответствующим эпизодам в «Маскараде». Остигато из «Салона Штраль» переносится в «Игорный дом», где Арбенин обвиняет Звездича в шулерстве. Эта сцена как будто напоминает сцену с Незнакомцем (кстати, в хореографии эта параллель проводится), но подтекст ее иной. Там еще был выход из положения для Арбенина, теперь круг замкнулся и выхода нет. С начала III акта принцип остигато возобновляется. На сей раз Оганесян вводит бесконечно повторяющуюся ритмическую фигуру полонеза, под влиянием которой происходит жанровая модуляция обоих «Вальсов» в зловещий полонез и, таким образом, вальс максимально сближается с «Dies irae», которое и появляется в сцене бала и сопровождает всю сцену смерти Нины, после чего ритм полонеза возобнов-

¹¹ Асафьев Б. Избранные труды, т. 2, Москва, 1954, с. 179.

¹² Тигранов Г. Балеты Эдгара Оганесяна, Ереван, 1981, с. 26.

ляется («Прощание света с Ниной»). Единственный светлый эпизод в этом контексте – «Романс» Нины, включающий вокализацию, что можно понимать буквально – единственный человеческий голос. Итак, вслед за «вальсом-жизнью» и «игрой-балом-маскарадом» наступает возмездие и смерть – таков смысл последовательности «Вальс» – «Dies irae». Именно теперь мы понимаем, что тезис этот был дан уже во вступлении к балету. Ведь открывающие его «удары» оркестра есть не что иное, как трансформированный аккомпанемент вальса. А вслед за ним мы слышим сразу «Dies irae». Предпоследняя сцена балета – сцена сумасшествия Арбенина (перед его глазами витает тень Нины), возвращает постепенно в сферу вальса. Это – повторение «Ноктюрна», который чередуется с мотивами из «Вальса» (кстати, здесь впервые становится явным сходство мелодических оборотов этих двух номеров). Наконец, в конце возобновляется «Вальс» в своем первоначальном виде. Здесь как нельзя кстати можно повторить слова Манна о том, что в финале драмы «Маскарад» реализована некоторая замкнутость судьбы Арбенина¹³.

Выводы данного исследования и перспективы дальнейшего развития в этом направлении

Определение жанра хореографического спектакля, как его музыкального, так и хореографического компонентов, безусловно, нуждается в четкой терминологической дефиниции. В настоящей статье мы на конкретном примере представили жанр парафраза. Недавно была опубликована наша статья, в которой представлен жанр портрета в балете¹⁴. Разработка жанровой классификации хореографических спектаклей будет продолжена, поскольку выявляет более четко их форму-структуру и форму-содержание.

ՊԱՐԱՖՐԱԶԻ ԺԱՆՐԸ ԲԱԼԵՏՈՒՄ

(Արամ Խաչատրյանի և Էդգար Հովհաննիսյանի «Դիմակահանդեսի» օրինակով)

ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

«Դիմակահանդես» բալետի պարտիտուրը ստեղծել է Էդգար Հովհաննիսյանը՝ հիմք ընդունելով Արամ Խաչատրյանի երաժշտությունը՝ Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Բ. Լավրենևի «Լերմոնտով» դրամատիկական ներկայացումների և թավջութակի համար գրված սոնատ-մենսխոսության թեմաներով: «Դիմակահանդեսը» թատերական երաժշտության վրա կառուցված **բալետ-պարաֆրազ** է՝ «Դիմակահանդես» դրամայի մոտիվներով: Լերմոնտովի դրաման և բալետի պարտիտուրը համեմատելիս բացահայտվում է, որ դրանք համընկնում են գործողության զարգացման հնարքով՝ «շղթայա-

¹³ Манн Ю. Игровые моменты в «Маскараде» Лермонтова, с. 37.

¹⁴ См. Саргсян Н. Жанр портрета в творчестве хореографа Рудольфа Харатьяна. Танцювальні студії. Науковий журнал, т. 4, № 1. Київ Видовничий центр КНУКіМ. 2021, Dancestudies. Scientificjournal, Vol. 4, N 1. Kyiv KNUKI Mpublishing, 2021, с. 40-50.

կան հեքիաթի» օրինակով, որի հիմնական գեղարվեստական սկզբունքն է միևնույն գործողությունների կամ տարրերի կրկնությունը՝ ընդհուպ այս եղանակով ստեղծված շրթայի ընդհատումը: Նույնիսկ «Դիմակահանդես» դրամայի մակերեսային ընթերցումը կարող է բացահայտել լայտմոտիվը: Սա առարկա է, և այս առարկան նշող բառն «ապարանջանն» է: Ամբողջ դրաման պարունակում է 56 մուտք, որից 26-ի դեպքում գործողության շարժիչ ուժը «ապարանջանն է»: Բալետում «ապարանջանի» մոտիվը փոխարինվում է «Վալսով», որից էլ բխում է երաժշտական հորինվածքի և դրամատուրգիայի ողջ կառուցվածքը: Մնացած երաժշտական հատվածները դրսևորվում են «Վալսին» զուգահեռ: «Վալսը» նաև մի քանի իմաստային գործառույթներ կրող է:

Բանալի բաներ՝ բալետ-պարաֆրազ, թատերական երաժշտություն, դրամա «Դիմակահանդես», շրթայական հեքիաթ, Միխայիլ Լերմոնտով, Արամ Խաչատրյան, Էդգար Հովհաննիսյան:

THE GENRE OF PARAPHRASE IN BALLET

(exemplified by “Masquerade” of Aram Khachaturyan-Edgar Hovhannisyán)

NAZENIK SARGSYAN

The score of “Masquerade” is created by Edgar Hovhannisyán based on Aram Khachaturyan’s music to stage productions of Mikhail Lermontov’s “Masquerade”, Boris Lavrenév’s “Lermontov”, and the theme of sonata-monologue for cello solo. “Masquerade” is a **ballet paraphrase**, basing on music for theater, predominantly attached to the play “Masquerade”. The juxtaposition of the plot of Lermontov’s play and the score of the ballet reveals that the action develops according to the principle of a “cumulative fairy tale”, whose fundamental artistic technique is multiple repetition of one and the same action or element until the chain, thus created, interrupts. Even at a cursory reading of the play, one grasps its leitmotif, the object and the word, naming that object – *bracelet*. The whole play consists of 56 entrees, in 26 of which the action is stimulated by and turns around the *bracelet*, whereas in the ballet, the motif of the *bracelet* is superseded by that of *Waltz*, on which the entire structure of musical composition and musical dramaturgy is built. The remaining pieces of music are determined in their relation to *Waltz*, the latter concurrently being a bearer of several semantic functions.

Key words – ballet paraphrase, music for theater, play “Masquerade”, cumulative fairy tale, Mikhail Lermontov, Aram Khachaturyan, Edgar Hovhannisyán.

ԱՐՑԱԽՅԱՆ ՀՈՌՈՎԵԼՆԵՐ

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ, ԼԻՆԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ*

Երկրագործական երգերը հայ ժողովրդական երաժշտական բանահյուսության ամենահին շերտերից են: Ներկա աշխատանքը նվիրված է Արցախի հոռովելներին և միտված է լուսաբանելու այդ տարածաշրջանի երաժշտական լեզվամտածողությանը բնորոշ առանձնահատկությունները: Կոմիտասն իր բանահավաքչական գործունեության ընթացքում հատուկ ուշադրությամբ գրի է առել արցախյան հոռովելները (20 ձայնագրած հոռովելներից 10-ը արցախյան են): Մեր ուսումնասիրության համար հիմք ենք ընդունել Կոմիտաս Վարդապետի, Ռոբերտ Աթայանի և Մաթևոս Մուրադյանի գրառումները, որտեղ գերիշխում են Վարանդայի տարածաշրջանի (ներկայիս Մարտունու շրջանը) հոռովելները: Դեռևս քրիստոնեության արշալույսին Արցախը Հայոց աշխարհի հոգևոր կենտրոններից էր՝ խիստ ինքնատիպ բարբառով, հնագույն բանահյուսությամբ և ավանդական երգամտածողությամբ: Համեմատական վերլուծական աշխատանքների շնորհիվ հանգել ենք այն մտքին, որ այդ տարածաշրջանի գրեթե բոլոր հոռովելներն ունեն մեղեդային և տաղաչափական ինքնատիպ բանաձևային դրսևորումներ, և նրանց ճնշող մեծամասնությունը զարգանում է տերցիային հիմք ունեցող փոյուզիական ձայնակարգում: Հոդվածում առաջին անգամ հրապարակվում է Ռ. Աթայանի 1957 թ. Արցախ կատարած գիտարշավի ժամանակ ձայնագրված հոռովելը:

Բանայի բառեր՝ Արցախ, հոռովել, Կոմիտաս, Վարանդայի շրջան, Ռ. Աթայան, Մ. Մուրադյան, տերցիային հենքով փոյուզիական միաձայնակարգ:

Ներածություն

Արցախը պատմական Հայաստանի անբաժան մասն է, այն հարուստ է հինավուրց կոթողներով, առանձնահատուկ բարբառով, մշակույթով, ավանդույթներով: Ունենալով յուրահատուկ աշխարհագրական դիրք, ինքնատիպ սովորույթներ ու դրանցով պայմանավորված մտածողություն ու հոգեբանություն՝ պատմական Արցախի ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է սեփական մշակույթ¹: Այն պատմականորեն զբաղեցնում է Մեծ Հայքի Արցախ նահանգի գրեթե ամբողջ տարածքը, ինչպես նաև Սյունիք և Ուտիք նահանգների փոքր մասը: Սկզբնաղբյուրներում երկրամասը կոչվել է *Արծախ*, *Ծավդեհից աշխարհ*, *Փոքր Սյունիք*, իսկ Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում՝ «*Արդախ*», «*Ուրդեխե*», «*Արախունի*» անուն-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժին, ավագ գիտաաշխատող, ԵՊԿ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, tigranyan.marianna@mail.ru, ԵՊԿ, երաժշտագիտություն, բակալավր, III կուրս, linda.sargsyan31@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 10.11.2021, գրախոսելու օրը՝ 11.11.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

¹ Տե՛ս Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան, Երևան, 1978, էջ 3-4:

ներով²: Լեոն Արցախն արդարացիորեն համեմատել է «*հսկայական միջնաբերդի*» հետ, առանց որի «*անհնար է երևակայել Հայաստանի սրբի, այն է՝ Արարապյան երկրի պաշտպանությունը*»³:

Հին հույն պատմիչ Քսենոփոնի վկայությամբ (մ.թ.ա. IV-V դդ.)՝ Հայաստանն «*ընդարձակ ու հարուստ երկիր*» էր, որտեղ բարձր մակարդակի վրա էին «*երկրագործական մշակույթը, հացազգիների աճեցումը, խաղողի շապրեսակներ... քունջութ, ցորեն, գարի, բանջարեղեն և գարու գինի* (նկատի ունի գարեջուրը), *անուշաբույր գինիներ և պիֆոսներ*»⁴, իսկ հայերին պատմաբանն անվանում էր «*խաղաղ, հարուստ, հյուրընկալ ժողովուրդ*»⁵: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում, հին ժամանակներից ի վեր տարածված էր հողագործությունը: Դարեր շարունակ այստեղ հողը վարել են փայտե հերկով՝ *արորով* (երկաթե խոփով), լծելով երկու զույգ եզներ, զոմեշներ կամ ցլեր: Հովտային տարածքում հողը վարում էին ծանր գութանով՝ 6-11 զույգ լծկաններով, կախված վարելահողի չափից և տարածքի պայմաններից⁶:

Երկրագործական աշխատանքներն ուղեկցվել են երգերով. դրանք ծիսական և էպիկական երգերի հետ մեկտեղ հայ ժողովրդական երաժշտական բանահյուսության ամենահին շերտն են: Ժողովրդական բանահյուսական նյութերի հավաքման և ուսումնասիրման գործընթացը նկատվում է XIX դարի երկրորդ կեսից: Արցախում ազգագրական նյութերի հավաքման գործում ներգրավված են եղել ականավոր ազգագրագետներ, լեզվաբաններ, գրականագետներ՝ Բահատրյան եղբայրները⁷, Խաչիկ Դադյանը⁸, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան)⁹, որոնց ուսումնասիրությունների զգալի մասը դեռ չի հրատարակվել: Արցախի բանահյուսությունն

² Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, խմբ.՝ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ա., Բարսեղյան Ա., Երևան, 1986, էջ 506:

³ Տե՛ս Լեոն, «Հայոց պատմություն», Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1973, էջ 32-33:

⁴ Պիֆոս՝ մեծ կերամիկական անոթ մթերք՝ ցորեն, գինի, ձեյթանի յուղ պահելու համար:

⁵ Տե՛ս Կсенофонт, Киропедия, пер. Борухович В., ред. Утченко С., Москва, 1976, (IV), (V).

⁶ Տե՛ս Բրդյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, 1972, էջ 17-26:

⁷ Բահաթրյանների ընտանիքից Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները 1860 թ. Շուշի քաղաքում բնակիչներից գրի են առել հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Դրանք ոչ միայն Արցախի, այլև առհասարակ հայ ժողովրդական բանահյուսության մեջ հեքիաթի ժանրի մեզ հայտնի ամենավաղ գրառումներն են («Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. VI, Երևան, 1973), տե՛ս Դազիյան Ա., Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, Երևան, 1983, էջ 5:

⁸ Բանահավաք, հնագետ, արցախյան ֆոլկլորի փայլուն գիտակ Խ. Վարդապետ Դադյանի արժեքավոր հրատարակումներից էր 1895-ին «Արարատ» ամսագրում լույս տեսած նրա «Ղարաբաղի ջրօրինյաց երգերից» խորագրով համառոտ ուսումնասիրությունը, տե՛ս Դադյան Ա., Վարանդայի բանաւոր գրականութիւնից, «Ազգագրական հանդես», գ. XVII, Թ., 1908, էջ 37-48, գ. XVIII, էջ 25-32, գ. XIX, 1910, էջ 85-89:

⁹ Տմբլաչի Խաչանն առաջիններից էր, որ հրատարակեց ժողովրդական կենդանի ոճով գրված զրույցները և բարբառով համեմված առած-ասացվածքները, տե՛ս Մելիք-Շահնազարյան Վ., Առակներ Ղարաբաղի բարբառով, «Հանդես ամսօրյա», 1930, էջ 359-360:

իրենց աշխատություններում ներկայացրել են Մակար Բարխուդարյանը¹⁰, Երվանդ Լալայանը¹¹, Ստեփան Լիսիցյանը¹², Ալվարդ Ղազիյանը¹³, Լևոն Հարությունյանը¹⁴, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանը¹⁵ և շատ ուրիշներ: Հետագայում հավաքված նյութերը հրատարակվել են տարբեր գիտական հանդեսներում, ամսագրերում և պարբերականներում, ինչպես նաև առանձին մենագրությունների և ուսումնասիրությունների տեսքով:

Հոռովելի ժանրը

Երկրագործական աշխատանքային երգերը, որոնք ժողովրդի մեջ ավելի տարածված են *«հոռովել»* անվամբ, հայ գեղջկական երգարվեստի հնագույն տեսակին են պատկանում: Հավատարիմ մնալով կոմիտասյան սկզբունքներին՝ ներկա հոդվածում հիմք ենք ընդունել բառի ուղղագրության *«հոռովել»* ձևը, թեև արդի երաժշտագիտության մեջ այդ տերմինն օգտագործվում է նաև փափուկ <ր>-ի ուղղագրությամբ՝ *«հորովել»*: Աշխատանքային երգերը Կոմիտասն անվանում էր *«բնութեան յերգեր»* և համարում էր *«ամենագունագեղներն ու հեղաքրքրականները»*¹⁶: Այդ երգերն արտացոլում են գեղջուկի երկրագործական բազմապիսի աշխատանքները՝ վար, ցանք, կալ, հունձք, հաշան, խոտ խրձել, սայլ բարձել, հետևապես, յուրաքանչյուր գութաներգ վերնագրվել է թվարկված գործընթացներին համապատասխան՝ *«Սայլի հոռովել»*, *«Կալի հոռովել»* և այլն:

Պատահական չէ, որ իր վերակազմած ժողովածուի թեմային-ժանրային դասակարգումը (մինչև 1904 թ. գրառված շուրջ 300 նմուշ) Կոմիտաս Վարդապետը սկսել էր հենց *«շինականի»* երգերից՝ ի սկզբանե բաժանելով դրանք երկու խմբի.

ա) *դաշտի կամ բնության՝* գութանի (վարի), սայլի, կալի, քաղհանի և չանաքի երգեր.

բ) *առտինի՝* սանդի (ծավարծեծի), սանդերքի (բուրդ գգելու), ճախարակի և իլիկի (մանելու) և այլն:

Հոռովել բառը ծագում է *«հո»* բացականչությունից և *«առավել»* բառից, որը նշանակում է *«շատ, ավելի»*: Խոսքը վերաբերում է երկու հարակից վարելահողերի միջև ընկած ազատ տարածքին, որը սահմանի դեր է կատարել և չի մշակվել: Բացականչելով *«հո՛»*՝ գյուղացին դիմում էր լծկան կենդանուն՝ ուղղելով նրան դեպի *«առավել»*: Հոռովելը հայ գյուղացու ավանդական երգն

¹⁰ Տե՛ս **Մակար Եպիսկոպ Բարխուդարյան**, Արցախ, Ամարաս, Երևան, 2018, էջ 406-420:

¹¹ Տե՛ս **Լալայան Ե.**, Վարանդա, Ազգագրական հանդես, հ. 3, Թիֆլիս, 1898, էջ 17-56:

¹² Տե՛ս **Լիսիցյան Ս.**, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Երևան, 1981, էջ 68-94:

¹³ Տե՛ս **Ղազիյան Ա.**, Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Երևան, 1983, էջ 156-164:

¹⁴ Տե՛ս **Հարությունյան Լ.**, Արցախյան ֆոլկլոր, Երևան, 1991, էջ 320-325:

¹⁵ Տե՛ս **Գրիգորյան-Սպանդարյան Մ.**, Լեռնային Ղարաբաղի ֆոլկլոր, Երևան, 1971, էջ 5-7:

¹⁶ Տե՛ս **Կոմիտաս**, Հայ ժողովրդական ել եկեղեցական երգերը, «Մշակ», Թիֆլիս, 1905, №№ 65 և 66:

է, որը ներկայացնում է երկրագործական աշխատանքների ընթացքը: Մ. Բրուտյանն այս առիթով նշում է.

«Աշխատանքի ազատ բնույթը պայմանավորել է հորովելների ստեղծագործման ինքնաբույս ու իմպրովիզացիոն բնույթը, իսկ վերջինս էլ՝ նրանց ազատ կառուցվածքը: Հորովելների բանաստեղծական տեքստի ազատ կառուցվածքի հետ մեկտեղ որոշ փարրեր համարյա թե բոլոր հորովելներում պարտադիր ձևով առկա են: Դրանք են բացականչությունները՝ «հո՛», «հոլել՛», «հո՛ն» և այլն, որոնք կերպարային մեծ ինքնատիպություն են հաղորդում երգին, կրկնակը, այսինքն՝ լծկանին ուղղված խոսքերը՝ «ջան ախպեր», «սիրուն», «ծաղիկ», «ծիրան», «գոմեշ ջան» և այլն, որոնք խորացնում ու ջերմացնում են երգի բովանդակության զգացմունքային կողմը, և բառը, որը ներկայացնում է հորովելի բուն բովանդակությունը, աշխատանքի կոնկրետ պրոցեսը՝ «հաշանը դարման արա», «ես գութանն եմ, հերկերս կվարեմ» և այլն»¹⁷:

Արցախյան հոռովելները Կոմիտաս Վարդապետի գրառումներում

Արցախի երաժշտական ֆոլկլորի անդրանիկ ձայնագրությունները պատկանում են Կոմիտաս Վարդապետին: Նա առաջինն էր, որ ուշադրություն դարձրեց երկրագործական աշխատանքային երգերի բովանդակային, կառուցվածքային, տաղաչափական, մետրաոճիմական և երաժշտական լեզվի առանձնահատկություններին. Լոռվա շրջանի Վարդաբլուր գյուղի ոճով ձայնագրված գութաներգին նվիրված իր հայտնի հոդվածում նա մանրակրկիտ վերլուծություն է կատարել՝ բացահայտելով այդ ժանրին բնորոշ բացառիկ ինքնատիպությունը¹⁸: Ռ. Աթայանը իրավացիորեն նշում է.

«Հայ գեղջկական երկրագործական երգերի եղանակների հայտնաբերման պատիվն անվերապահորեն պատկանում է Կոմիտասին: Հայտնաբերումն այս դեպքում ընդգրկել է նախ՝ գործի վայրում, «բնական» պայմաններում հնչող արտասանություն-երգեցողությունը որպես «երգ» լսել-նկատելը և դրա գեղագիտական արժեքը զգալ-հասկանալը, ապա նոր՝ երգերը հավաքել-գրի առնելը: Մասնավոր դժվարությունն այն էր, որ հատկապես գութաներգը կամ այլ կերպ՝ հոռովելը, իսկապես, ամբողջացած երգ չէ այդ անվանման բուն, երաժշտա-ձևային հասկացությամբ, այլ է, գլխավորապես վարի ընթացքում աշխատանքի բոլոր պահերի փոխգործակցությունից գոյացող խոսքային-մեղեդիական մի հանպարաստից ստեղծագործություն»¹⁹:

Իր բանահավաքչական աշխատանքներում Կոմիտասին հաջողվել է գրի առնել 20 հոռովել, որից 10-ը արցախյան են: Դրանք են.

1. «Զիգ տու, քաշի»	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 9, N. 91, էջ 109
2. «Հրեն, հրեն, թումբումը»	Արցախ, Ջրաբերդ, Մարտակերտ	ԿԵԺ, հ. 10, N. 2, էջ 47
3. «Դե, ձիգ տու, քաշի»	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 10, N. 3, էջ 48
4. «Ա կութան»	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 10, N. 4, էջ 48

¹⁷ Տե՛ս **Բրուտյան Մ.**, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, 2004, էջ 100:

¹⁸ Տե՛ս **Կոմիտաս**, Լոռվա գութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով, «Նավասարդ», Կոնստանտինոպոլ, 1914, էջ 312-336:

¹⁹ Տե՛ս **Կոմիտաս**, ԵԺ, հ. 10, Երևան, 2000, էջ 12-13:

5. «Ձիգ տու, քաշի»	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 11, N. 33, էջ 33
6. «Հոռոլո, լո, լո»	Արցախ	ԿԵԺ, հ. 11, N. 34, էջ 34
7. «Հո, հոլեյ, հոլեյ»	Ղազախի սայլերգ	ԿԵԺ, հ. 11, N. 81, էջ 49
8. «Հոյ արա գնանք»	Ղազախի կայի երգ	ԿԵԺ, հ. 11, N. 82, էջ 49
9. «Ձիգ տու, քաշի»	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 11, N. 280, էջ 113
10. «Հո, հո, եզնր ջան»	Արցախ	ԿԵԺ, հ. 12, N. 187, էջ 89

Ինչպես կարելի է նկատել, Կոմիտասի արցախյան գրառումներում գերիշխում են Վարանդա տարածաշրջանի հոռովելները: Վարանդան (հնում՝ Հաբանդ գավառ) ներկայիս Մարտունու շրջանն է, որը դեռևս քրիստոնեության արշալույսին դարձել է Հայոց աշխարհի հոգևոր կենտրոններից մեկը: Վարանդայում է Գրիգոր Լուսավորիչը հիմնադրել Ամարասի վանքը (IV դ. սկիզբ), որը վաղ միջնադարում նշանավոր եպիսկոպոսանիստ դարձավ: Գրեթե գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը հենց Ամարասում է բացել Արցախի առաջին դպրոցը և հիմք դրել հայերի դպրությանը²⁰: Վարանդայի շրջանը ներկայացնող ձայնագրած հոռովելների զգալի թիվը հաստատում է այն, որ այդ տարածաշրջանում զարգացած էին անասնապահությունն ու հողագործությունը: Տոնական օրերին պահպանված մի շարք ծիսական արարողակարգեր հաստատում են այն, որ վարանդացիները մեծ ակնածանք են ունեցել դեպի հողը, պաշտել և «պատրիվներ» են մատուցել: Այսպես, օրինակ, Համբարձման տոնին բոլոր տներում կաթնապուր են եփել և որպես զոհաբերություն բաժանել. «...Մի քանի տներ էլ փանում արտերի մօտ են եփում այս կաթնապուրը և մի քանի շերեփ շաղ փալիս արտի շուրջը, որպեսզի նախ հունձը լաւ լինի և երկրորդ՝ կարկուտը չխփի, մորեխը չկտրի և այլն»²¹: Համբարձումից հետո՝ ամառվա ամենատաք ժամանակ, երբ գյուղացիները սաստիկ զբաղված էին հունձ անելով, վարանդացիները «Լուսավորչի պաս» են պահել, որը տեղացիները կոչել են «պառաւի պաս». «...պատրում են, թէ ժամանակով մի պառաւ, այդ շաբթին պաս է պահել, որպեսզի Աստուած հով եղանակ փայ, որ որդին հեշտությանը կարողանար հունձ անել»²²:

Ռ. Աթայանի կարծիքով՝ Կոմիտասը երբեք չի եղել Արցախում և պետք է ենթադրել, որ այդ հոռովելները նա ձայնագրել է Էջմիածնում (Թիֆլիսում կամ շրջակա այլ տարածքներում) իրեն հանդիպած արցախցիներից: Կոմիտասի արցախյան հոռովելների անդրանիկ գրառումը կատարվեց 1885 թվականին «Ձվարթնոցը պեղող Խաչիկ վարդապետ» Դադյանից²³:

²⁰ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 211-212:

²¹ Տե՛ս **Լալայան Ե.**, Վարանդա. նշանաւոր տօներ, Ազգագրական հանդէս, հ. 3, Թիֆլիս, 1898, էջ 347:

²² Մեկ այլ ավանդության համաձայն՝ այդ պասը պահվում էր ի պատիվ այն պանակի, որ օրական մի հաց ձգելով հոր Վիրապի մեջ՝ կերակրել է Գ. Լուսավորչին [տե՛ս **Լալայան Ե.**, նույն տեղում, էջ 348]:

²³ **Խաչիկ Դադյան (1863-1936)** - արցախցի անվանի ազգագրագետ, գրականագետ, հնագետ: Հավաքել և ուսումնասիրել է Արցախի բանահյուսությունը: Նա առաջինն էր պեղումներ կատարել պատմական Ազոխայի քարանձավում, որն իր տեսակի մեջ համարվում է աշխարհում հայտնի ամենահին քարանձավներից մեկը (մ.թ.ա. II հազարամյակ): 1904-ին, Խ. Դադյանի ջանքերի շնորհիվ, աշխարհը ճանաչեց վաղ

ՁԻԳ ՏՈՒ, ՔԱՇԻ

[Աշխուժ, Vivace] [Վարանդա]

Ձիգ տու, քաշի, այ և - զը, ա-րա հո՛,
 հո՛, ա՛յ լու-ծրդ մա - շի, այ և - զը, ա-րա
 հո՛,
 ա-րա հո՛, ա-րա հո՛:

Ինչպես հայտնի է, Կոմիտասը մեծ ուշադրություն է դարձրել իր գրած երգերի տարբերակայնությանը, և ստորև ներկայացված գութաներգը բացառություն չէ: Կոմիտասի «Ձիգ տու, քաշի»-ն ունի ևս 5 տարբերակ (տարբեր տարիների և տարբեր կատարողներից գրառված), որն ապացուցում է Արցախ-Վարանդա աշխարհում գոյություն ունեցող ավանդական երգամտածողության մասին, ինչպես նաև հնարավորություն է տալիս բացահայտելու տվյալ տարածաշրջանի երգարվեստի համար տիպական դարձած բնորոշ տարրեր:

Ռ. Աթայանի գրի առած հոռովելը

Առաջին գիտարշավը դեպի Ղարաբաղ կազմակերպվեց 1957 թվականին, երբ Արցախը Ադրբեջանի կազմում էր: Խորհրդային Հայաստանի ԳԱ-ի հովանավորած գիտարշավը գլխավորեց անվանի երաժշտագետ և կոմիտասագետ Ռ. Աթայանը՝ արմատներով Արցախի Մեծ Թաղեր (Մեծ Թաղարար) գյուղից: Ռ. Աթայանին հաջողվեց գրի առնել 19 ազգային, աշուղական երգեր և գործիքային մեղեդիներ²⁴: Ստորև ներկայացվող օրինակն այդ գիտարշավի միակ հոռովելն է, որը հրապարակվում է առաջին անգամ²⁵:

միջնադարի հայկական ճարտարապետության գլուխգործոցը՝ Չվարթնոց տաճարը (հայերեն՝ «Արթուն հրեշտակների տաճար», 625 թ.): Տաճարի հետագա պեղումներն իրականացրել է հայտնի ճարտարապետ Թորոս Թորամանյանը:

²⁴ Երաժշտական ձայնագրությունները պահվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում /Ֆոնդ N. 554 (653)/:

²⁵ Նոտային և տեքստային վերծանությունը մերն է: 2020 թ. առաջին կիսամյակում, ուսումնական ծրագրի շրջանակներում, կատարել ենք այդ գիտարշավի բոլոր ձայնագրյալ նյութերի վերծանությունները:

Ինչպես որ ժամանակին Կոմիտասն էր հետաքրքրված Վարանդայի հոռովելիների և դրանց տարբերակների գրառմամբ, այսպես էլ Ռ. Աթայանը չէր դադարում արցախյան գույթաներգերի որոնումները: Պատահական չէ, որ «ոչ պաշտոնական այցով»²⁶ նա հաճախ էր մեկնում Ղարաբաղ (1976, 1986, 1988) և Ադրբեջանի իշխանության ստեղծած զանազան խոչընդոտներ հաղթահարելով՝ նպատակային փնտրում էր գույթանավորի հնագույն երգերի օրինակներ: Ցավոք, մեր ձեռքի տակ եղած տվյալների համաձայն, վերը ներկայացված և մեր վերծանած գույթաներգը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ձայնագրարանում պահվող՝ Ռ. Աթայանի ձայնագրած արցախյան հոռովելի միակ օրինակն է: Հնարավոր է, որ երաժշտագետի անձնական արխիվում, որը կենտրոնացած է ԳԱԹ-ում, բայց դեռ վերջնական համակարգված չէ, լինեն արցախյան հոռովելիների այլ ձայնագրություններ²⁷:

Արցախյան հոռովելները Մ. Մուրադյանի գրառումներում

Խորհրդային շրջանում դեպի Արցախ իրագործված երկրորդ գիտարշավը կայացավ մեկ տարի անց՝ 1958 թվականին Մաթևոս Մուրադյանի ղեկավարությամբ, որի ընթացքում հաջողվեց գրառել ևս երկու հոռովել (ձայնագրություններն արվել են Մարտունու շրջանում): Տարիներ անց այդ նյութերի վերծանություններն իրականացրեց Մ. Մուրադյանի որդին՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող Աշոտ Մուրադյանը: Հետագայում դրանք զետեղվեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի բազմահատոր մատենաշարի IV պրակում²⁸: Նշված հատորը երկրագործական երգերի համահավաք է, որտեղ ներկայացված են պատմական Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջանների գույթանավորի երգերը: Այդ պրակի բովանդակությունն ըստ էության նույն ինստիտուտի վաստակաշատ երաժշտագետ Զավեն Թագակչյանի թեկնածուական ատենախոսության նյութն էր, որի տարբեր բաժինները, հոդվածների տեսքով, մասամբ հրապարակվել են գիտական պարբերականներում²⁹: Ինչպես Ռ. Աթայանի, այնպես էլ Մ. Մուրադյանի խիստ արժեքավոր ձայնագրությունները պահվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնագրարանում³⁰:

²⁶ Նկատի ունենք, որ այդ գործուղումները ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կողմից հաստատված գիտարշավներ չեն եղել, այլ անձնական միջոցներով և սեփական որոշումով պայմանավորված այցեր:

²⁷ Ռ. Աթայանի գիտական ժառանգությունն ուսումնասիրման փուլում է, որն իրականացնում է ԵՊԿ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, երաժշտության պատմության ամբիոնի վարիչ Լուսինե Սահակյանը, տե՛ս **Սահակյան Լ.**, Ռ. Աթայան, Երևան, 2021, 352 էջ:

²⁸ Տե՛ս Հայ ավանդական երաժշտություն, պրակ IV (Մատենաշար), Հայ երկրագործի աշխատանքային երգեր, Կազմ.՝ Զ. Թագակչյան, Խմբ.՝ Կ. Խուրաբաշյան, Հ. Պիկիջյան, Երևան, 2009, № 2 «**Հո, հո, հո, հո, այ կյամ ա**», էջ 12 (գ. Ղզղալա, բանասաց՝ Իվան Առուստամյան) և № 14 «**Հոլել, հոլել, եզո**», էջ 17-18 (գ. Ներքին Հոռաթաղ, բանասաց՝ Սարգիս Աթաբեկյան):

²⁹ Տե՛ս **Թագակչյան Զ.**, Հայոց հոռովելների ձայնակարգային կառույցները, «Հայ արվեստի հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, հ. 2, Երևան, 2009:

³⁰ ՀՀ ԳԱԱ ԱԻՁ՝ Տուփ 204-205, № 1 և Տուփ 206 ա, № 2:

ԳՈՒԹԱՆԵՐԳ

<ճի, հո՛յ, թո՛ւ ա - թա, ե՛յ, չո՛ւ, հո՛ւ, հո՛ւ,
 <ը - թեն, ռան - կա - թա տու - նը հո՛ւ, հո՛ւ,
 Ճըբըլը - լը տու - վա՛վ, - հա՛վ - լա - վու, հո՛ւ, հո՛ւ,
 Ա - սեմ թո - լըղ - մա - շի, յա՛, հո՛ւ, հո՛ւ,
 Մը - շա - կուն կյա - խու - լա վո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛մ, է - թա, հայր մեր,
 <ը - թեն, ռանչ կա - լիս ա հո՛ւ, հո՛ւ, <ճի, հո՛յ, հե - տըղ - յա - լիս ա
 հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, է - թա, հայր - մեր,
 <ը - թեն, ռանչ կա - լիս ա հո՛ւ, հո՛ւ,
 <ճի, հո՛յ, հե - տըղ յա - լիս ա հո՛ւ, հո՛ւ,
 <ա - նի, կյա - նաչ ե՛յ, ե՛յ, ե՛յ, տո շան։

Արցախյան հոռովելների երաժշտական լեզվի առանձնահատկությունները

Կոմիտասի ծայնագրած գութաներգերի հետքերով գնալով՝ Ռ. Աթայանն առաջինն էր, որ անդրադարձավ արցախյան հոռովելներին³¹: Արցախաբնակ երաժշտագետ և կոմպոզիտոր Սերգեյ Մարկոսյանին³² ուղղված նամակներից մեկում Ռ. Աթայանը գրել է.

³¹ Տե՛ս **Աթայան Ռ.**, Ղարաբաղյան հոռովելները Կոմիտասի գրառումներում, «Սովետական Հայաստան», Երևան, 1976/23.VI, 1988/7.VII:


³² **Սերգեյ Մարկոսյան** (1946-2018) - հայ կոմպոզիտոր, երաժշտագետ-ֆոլկլորագետ: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երեք

«...Պեպք է աշխատել «դուրս քաշել» հայկական երգեր, ազգային ավանդական երգեր: Ճիշդ չէ, որ ասում են, թե Ղարաբաղում հայկական ժողովրդական երաժշտություն չկա: Հիշիր, որ Կոմիտասի «Ձիգ փուլ, քաշի»-ն կոչվում է «Գութաներգ Վարանդի» (էդպես էլ հայտարարել է իր ծրագրերում, թեև երգի խոսքերը բարբառի տեսակերից մի քիչ տուժել են), իսկ «Դե թուլ արա»-ն կոչվում է «Սայլերգ Ղազախ գավառի»: Պարտադիր չի, որ հոռովելներ գտնենք, հիմա դա իսկապես դժվար կլինի: Ամեն տեսակի երգ թող լինի: Միայն պեպք է կարողանալ խորքերից (այսինքն՝ մարդկային հոգու խորքերից) երգեր հանել փալ...»³³:

Երկա հողվածի ուսումնասիրության համար հիմք է ծառայել 16 արցախյան հոռովել, որոնց ցանկը ներկայացված է ստորև՝ աղյուսակի ձևով, որպես նոտային օրինակ ներկայացնելով դրանցից միայն երկուսը՝ Կոմիտասի և Ռ. Աթայանի հոռովելների անդրանիկ գրառումները: Մեր կատարած երաժշտական նյութի համեմատական վերլուծությունը հնարավորություն տվեց մատնանշելու արցախյան հոռովելների երաժշտական մտածողության մի շարք օրինաչափություններ ու կառուցվածքի տիպաբանական ընդհանուր առանձնահատկություններ:

Արցախյան հոռովելների ճնշող մեծամասնությունը զարգանում է տեղիային հիմք ունեցող փոյուզիական ձայնակարգում: Այս առիթով Ք. Քուշարյանը գրում է.

«Տերցիային օժանդակ հենքով փոյուզիական լադը հայկական մոնոդիկ երաժշտության ամենահին համակարգերից մեկն է: Այն օգտագործվում է իր բոլոր ճյուղերում: Ցուցաբերելով մեծ դիմացկունություն, հեփազա դարերի ընթացքում այն թափանցել է հայկական մոնոդիայի բոլոր շերտերը»³⁴:



Եզրակացություններ

• Չնայած այն փաստին, որ հողվածում ներկայացված հոռովելների գրառումների միջև տարբերությունն ավելի քան 70 տարի է, երկու նոտային օրինակում ակնհայտ են մեղեդիական գծի զարգացման և երաժշտական լեզվի կառուցման նույնատիպ սկզբունքները:

բաժինները՝ խմբավարական (1972 թ., Էլլա Չաքարյանի դասարան), երաժշտագիտական (1983 թ., Արմեն Բուդաղյանի դասարան) և կոմպոզիտորական (1984 թ., Էդվարդ Միրզոյանի դասարան):

³³ Տե՛ս **Մարկոսյան Ս.**, Արցախյան դեմքեր և դեպքեր, Երևան, 2012, էջ 119:

³⁴ Տե՛ս **Кущарян Х.** Вопросы истории и теории армянской монодической музыки, ред. Р. Атаян, Ленинград, 1958, с. 424-425:

• Մեր վերլուծած և աղյուսակում տեղ գտած արցախյան հոռովելների ճնշող մեծամասնության հիմքում տերցիային հենքով փոյուզիական միաձայնակարգ կառույցն է, որտեղ հստակ դրսևորվում է հարմոնիկ տետրաֆորդը:

• Հոռովելների երաժշտական լեզվի առանձնահատուկ գունեղությունն ապահովում են մեծացրած սեկունդան և մեծացրած կվարտան:

• Ինչպես ցանկացած երկրագործական երգի, այնպես էլ արցախյան հոռովելների համար բնորոշ են բացականչությունները՝ «հո~», «հոլել», «պոե~», «հոմ» և այլն, որոնք ձևակառուցողական կարևոր դեր ունեն և բանաստեղծական տեքստի ազատ կառուցվածքի պարտադիր պայմաններից են:

Մեր հետագա աշխատանքները միտված են լինելու խորացնելու և բացահայտելու ոչ միայն հոռովելների, այլև Արցախ աշխարհի ժողովրդական երգամտածությանը բնորոշ ընդհանրական տիպական առանձնահատկությունները:

Արցախյան երկրագործական երգերի ցանկ

N.	Երգի անվանում	Ձայնագրության հեղինակ	Երգի հայրենիքը	Ձայնագրման վայրը	Հրատարակություն	Լադ	Կատարող
1.	«Ձիզ տու, քաշի»	Կոմիտաս	Արցախ, Վարանդա	1885 թ. Էջմիածին	ԿԵԺ, հ. 9, N. 91, էջ 109	Փոյուզիական միաձայնակարգ կառույց	Խաչիկ Դադյան
2.	«Հրեն, հրեն, թոմբումը»	Կոմիտաս	Արցախ, Մարտակերտ	ԿԵԺ, հ. 10, N. 2, էջ 47	Փոյուզիական ձայնակարգով սկսվող բազմաձայնակարգ կառույց
3.	«Դե, ծիգ տո, քաշի»	Կոմիտաս	Արցախ, Վարանդա	1891-1895 Էջմիածին	ԿԵԺ, հ. 10, N. 3, էջ 48	Փոյուզիական ձայնակարգով սկսվող բազմաձայնակարգ կառույց
4.	«Ա կյութան»	Կոմիտաս	Արցախ, Վարանդա	1891-1895 Էջմիածին	ԿԵԺ, հ. 10, N. 4, էջ 48	Փոյուզիական ձայնակարգով սկսվող բազմաձայնակարգ կառույց
5.	«Ձիզ տու, քաշի»	Կոմիտաս	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 11, N. 33, էջ 33	Փոյուզիական միաձայնակարգ կառույց
6.	«Հոռոլ, լո, լո»	Կոմիտաս	Արցախ	ԿԵԺ, հ. 11, N. 34, էջ 34	Իոնական ձայնակարգով սկսվող կառույց
7.	«Հո, հոլել, հոլել»	Կոմիտաս	Արցախ	ԿԵԺ, հ. 11, N. 81, էջ 49	Հարմոնիկ ձայնակարգով սկսվող բազմաձայնակարգ կառույց

8.	«Հոլ արա գնանք»	Կոմիտաս	Արցախ	ԿԵԺ, հ. 11, N. 82, էջ 49	Էդվական ձայնակարգով սկսվող բազմաձայնակարգ կառույց
9.	«Ձիգ տու, քաշի»	Կոմիտաս	Արցախ, Վարանդա	ԿԵԺ, հ. 11, N. 280, էջ 113	Փոյուզիական միաձայնակարգ կառույց	Խաչիկ Դադյան
10.	«Հո, հո, եզնը ջան»	Կոմիտաս	Արցախ	Մեղրի	ԿԵԺ, հ. 12, N. 187, էջ 89	Իոնական ձայնակարգով սկսվող կառույց	Ստեփան Բախրյան
11.	«Գութաներգ»	Ստեփան Դեմուրյան	Արցախ, Վարանդա	1890 թ.	ՀԱԵՆ, հ. 9 Ե., «Ամրոց գրուպ» 2013, N 92, էջ 54
12.	«Գութաներգ»	Ռոբերտ Աթայան	Մարտակերտի շրջան, գ. Նորաթաղ	1957 թ. Մարտակերտի շրջան	Չիրատարակված	Փոյուզիական միաձայնակարգ կառույց	Սարգիս Աթաբեկյան
13.	«Այ կյամ ա, լի՛ կուտն ին»	Մաթևոս Մուրադյան	Հաղրուբի շրջան, գ. Մեծ Թաղար	1958 թ. Հաղրուբի շրջան	ՀԵԺ, հ. 4 Ե., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, N. 2, 2009, էջ 12	Փոյուզիական միաձայնակարգ կառույց	Իվան Առուստամյան
14.	«Հոլել, հոլել, եզո»	Մաթևոս Մուրադյան	Հաղրուբի շրջան, գ. Մեծ Թաղար	1958 թ. Հաղրուբի շրջան	ՀԵԺ, հ. 4 Ե., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, N. 14, 2009	Փոյուզիական միաձայնակարգ կառույց	Սարգիս Աթաբեկյան
15.	«Հոռովել»	ԵՊԿ	Արցախ	Կաբինետ 1981	Չիրատարակված	Հարմոնիկ միաձայնակարգ կառույց	Վաչե Սարուխանյան
16.	«Իրիկնակը տու ա եկալ»	ԵՊԿ	Արցախ	Կաբինետ 1988	Չիրատարակված	Հարմոնիկ միաձայնակարգ կառույց	Գուրգեն Գաբրիելյան

Հապավումների ցանկ

ԱԻ – արվեստի ինստիտուտ

ԳԱԹ – Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան

ԵՊԿ – Երևանի պետական կոնսերվատորիա

ԿԵԺ – Կոմիտաս, երկերի ժողովածու

ՀԱԵՆ – Հայ ազգային երգեր և նվագարաններ

ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

ՀԵԺ – Հայ ժողովրդական երաժշտություն

«НОРОВЕЛЫ» АРЦАХА

МАРИАННА ТИГРАНЯН, ЛИНДА САРГСЯН

Данная статья посвящена земледельческим песням – *հՕրовелам* Арцаха. Целью исследования является изучение особенностей музыкального языка этого региона. Трудовые песни являются одним из самых древних пластов армянского музыкального фольклора. Материалом для проведенного исследования послужили записи Комитаса, Роберта Атаяна и Матевоса Му-

радяна, среди которых преобладают *h*Оровелы области исторической Варанды (ныне – Мартунийский район). Ещё на заре христианства Арцах был одним из важнейших духовных центров армянского мира, с его фольклором, уникальным диалектом и традиционным песнетворчеством. Вероятно поэтому Комитас питал особый интерес к музыкальному фольклору Арцаха (10 из 20 записанных им земледельческих песен – это арцахские *h*Оровелы). Сравнительный анализ музыкального материала позволил нам выявить ряд типологических принципов строения и развития музыкального языка *h*Оровелов этого региона (наличие определённых метроритмических, интонационных и мелодических оборотов, доминирование фригийского лада с терцовой побочной опорой), что в свою очередь доказывает наличие традиционного модульного мышления в земледельческих песнях арцахцев.

В статье впервые публикуется *h*Оровел, записанный Р. Атаяном в 1957 году во время первой экспедиции в Карабах, когда исторический Арцах был в составе Азербайджанской ССР.

Ключевые слова – Арцах, *h*оровел, Комитас, область Варанда, Р. Атаян, М. Мурадян, фригийский лад с терцовой побочной опорой.

HOROVELS OF ARTSAKH

MARIANNA TIGRANYAN, LINDA SARGSYAN

The paper examines the peasant songs – horovels of Artsakh; it aims to cover the peculiarities of the musical linguistic language of the region. Work songs are one of the oldest layers of Armenian folk music. Our study is based on the notes made by Komitas Vardapet, Robert Atayan and Matevos Muradyan, in which horovels of the historical Varanda (present-day Martuni) region predominate. Back in the dawn of Christianity, Artsakh was one of the most important spiritual centers of the Armenian world with its folklore, unique dialect and song-making tradition. Presumably, this was the reason why Komitas Vardapet took a keen interest in music folklore of Artsakh (10 out of 20 peasant songs, recorded by him, are Artsakh horovels). As a result of comparative analysis of the musical material, we have identified several typological principles of structure and evolution of the musical language of horovels of the region under review (presence of metro-rhythmic, intonational and melodic patterns, prevalence of Phrygian scale with a tertiary secondary support). This, in turn, attests to the existence of traditional modular thinking in the peasant songs of Artsakh.

“Horovel”, recorded by R. Atayan during his first expedition to Karabakh in 1957, when historical Artsakh was part of the Azerbaijani SSR, is published in the article for the first time.

Key words – Artsakh, horovel, Komitas, Varanda region, R. Atayan, M. Muradyan, Phrygian scale with a tertiary secondary support.

ԴԱՏԱՐԿ ԿԱԴՐ

(նշանակությունը և իմաստը ֆիլմի համատեքստում)

ԱՐՍԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՈՎ*

Հոդվածում դիտարկվում են կինոստեղծագործության կառուցվածքին վերաբերող հարցեր: Խոսվում է կադրի՝ որպես ֆիլմի հիմնարար բաղադրիչի մասին: Էկրանի արտահայտիչ միջոցների շնորհիվ՝ կինոյում ծավալվում է կադրի հիմքի ձևավորում: Ընդ որում, իր ուրույն տեղն է զբաղեցնում նշանակության կատեգորիան, այն է՝ կադրը կառուցել այնպես, որ գործող անձինք խիստ անհրաժեշտության դեպքում «շփվեն» նյութական ու առարկայական աշխարհի հետ: Օրինակներն են բերվում Ս. Փարաջանովի «Նռան գույնը», Ա. Փելեշյանի «Մենք», Հ. Բեկնազարյանի «Պեպո» ֆիլմերից:

Բանալի բառեր՝ կադր, իմաստ, նշանակություն, ֆիլմ, կոմպոզիցիա, համատեքստ, գեղարվեստական ստեղծագործություն:

Ներածություն

Մենք կդիտենք ֆիլմը, եթե այն մեզ հետաքրքիր է: Ստեղծագործության հանդեպ հետաքրքրությունը գաղափարի հաջորդական զարգացման հետևանքն է՝ հասանելի գեղարվեստական բոլոր միջոցներով: Այդ իսկ պատճառով նշանակությունն ու իմաստը դառնում են ֆիլմի ընկալման և նրա գնահատման հիմնարար բաղադրիչները: Հենց այս թեմային էլ նվիրված է մեր հոդվածը:

Հիմնական նյութի շարադրանք

Ի՞նչն է մեզ ստիպում կինո դիտել: Իսկ եթե դա բարձր գեղարվեստական ստեղծագործություն է, ապա այդ պարագայում ինչպես վարվել՝ պահել այն ֆիլմադարանում և քանիցս վերադիտել: Իրադարձությունների փոխազդեցությունն էկրանի վրա տեղի է ունենում որոշակի կանոններով: Նախ և առաջ այն, ելնելով խելամտության սկզբունքից, դառնում է մի ամբողջականություն: Դիցուք, մեր նկարահանած ֆիլմի գործողությունը ծավալվում է ծովում: Մենք տեսախցիկով նկարահանել ենք նավամատուցի գեղատեսիլ տեսարանը: Ի՞նչ կստացվի: Մեզ շրջապատող իրականության գեղարվեստական պատկերը՝ նկարահանված տարածաժամանակային որոշակի հատվածում: Նույնիսկ եթե հանդիսատեսին ցուցադրենք նավը, տախտակամած բարձրացող մարդկանց, միևնույն է, իրադարձությունների նման հերթակա-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, հոդվածը ներկայացնելու օրը՝ 17.09.2021, գրախոսելու օրը՝ 22.09.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

նությունը ոչ մի առանձնահատուկ նշանակություն չի ունենա: Բայց ի՞նչ անել, եթե ֆիլմի սյուժեն էական դեր չի խաղում: Ասվածի վառ օրինակներից է Ս. Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմը (1968): Տվյալ ֆիլմում սյուժե չկա բառի բուն իմաստով, բայց կա ցուցադրվածի հաջորդականություն: Եվ խելամտության սկզբունքն այստեղ լիարժեք պահպանված է:

Օրինակ, եթե մեր ֆիլմում որևէ մեկը հայտնվի նավի վրա՝ տախտակամածի վրա ոչ թե աստիճաններով բարձրանալով, այլ օդում թռչելով, ապա ամենևին էլ չի նշանակի, որ գեղարվեստական ֆիլմում նման բան հնարավոր չէ: Հնարավոր է, որ ժամացույցը չունենա սլաքներ, ինչպես Բերգմանի «Մորու բացատը» հայտնի ստեղծագործության մեջ (1957): Կամ էլ երկու հոգի թենիս խաղան առանց գնդակի, ինչպես Մ. Անտոնիոնիի ոչ պակաս հայտնի «Բլու-ափ»-ում (1966): Հարցը վերաբերում է կադրի ու տեսարանի պայմանականությանը և նմանատիպ գործողության ծագման նախադրյալներին:

Կադրը ֆիլմի բջիջն է: Այն ունի շրջանակներ, որոնք ինչ-որ չափով սահմանափակում են գործողությունները, բայց հնարավորություն են տալիս տեսնելու դրա զարգացումը հետագա տեսարաններում և էպիզոդներում: Իրադարձությունը կադրի շրջանակներում բաժանվում է որոշակի հատվածների և առանձնանում ներկադրային և միջկադրային մոնտաժի օգնությամբ: Բավարար չէ, որ կադրը «ծանրաբեռնվի» թանկարժեք առարկաներով, իսկ հերոսները դրա տարածության մեջ հանդես գան որպես մուգ գույներով և տոներով առեղծվածային մարդիկ: Եթե իրադարձությունների փոխկապակցումը նրանում փաստարկված չէ, ապա այդպիսի կադրը կարելի է համարել «դատարկ»: «Դատարկ կադրը» այն կադրն է, որում չկա իմաստ: Ֆիլմը ստեղծելիս կարևոր է նկատի ունենալ ոչ միայն այն, ինչը կադրի տարածության մեջ է, այլև այն, թե ինչպես են մարդիկ, իրերն ու առարկաները փոխազդում պայմանականության շրջանակներում: Արվեստում և մասնավորապես կինոյում մեր առջև պարզապես գլխավոր կամ երկրորդային կերպարները, ավտոմեքենաները, շենքերը, գրիչներն ու տետրերը չեն, այլ նախ և առաջ իմաստային բաղադրիչն է, որն առաջանում է ֆիլմի պայմանականության շրջանակներում դրանց ի հայտ գալու պահից, տեղից և նշանակությունից: Տեսածից քաղած իմաստն է, որ մեզ հնարավորություն ընձեռում ընկալելու ֆիլմը, տեսածի նկատմամբ սեփական կարծիք ձևավորելու: Այստեղ հարկ է խոսել նաև նշանակության մասին, այս բաղադրիչն իր տեղն է զբաղեցնում նաև փիլիսոփայական գրականության մեջ: Նշանակության կատեգորիային անդրադարձել են մի շարք գիտնականներ՝ Ռ. Կարնափը, Ա. Տարսկին, Գ. Ֆրեգեն, Յու. Լոթմանը, Լ. Վիտգենշտեյնը և այլք: Խոսելով նշանակության մասին՝ զուգահեռ անցկացնենք լեզվի և մասնավորապես նախադասության հետ: Յուրաքանչյուր նախադասություն ունի կազմավորման կանոն: Այդ կանոնից դուրս նախադասությունը համարվում է անգրագետ կազմված: Կանոնի և նախադասության բոլոր բաղադրիչների համադրությունն է, որ շեշտում է հեղինակի միտքն ու ասվածի կամ էլ գրվածի նշանակությունը: Զուգահեռ անցկացնելով լեզվի և նախադասության հետ՝ ընդգծենք, որ կադրում և, ընդհանուր առմամբ, ֆիլմում անհրաժեշտ է բոլոր

բաղադրիչների հաջորդական և փաստարկված համադրություն, եթե նույնիսկ պլոժեն նրանում առաջատար դեր չունի: Հարցն այն է, թե ինչպես և որ սկզբունքով է գեղարվեստական ստեղծագործության պայմանականության շրջանակներում մարդկանց, իրերի և առարկաների միջև առաջանում փոխազդեցություն: Որքանո՞վ է անհրաժեշտ այդ փոխազդեցությունը, և ի՞նչ կապ ունի այն նյութական իրականության հետ: Խոսելով գեղարվեստական տեքստի մասին՝ Յու. Լոթմանը գրում է. «Նյութական սուբստանցիա են հանդիսանում ոչ թե «իրերը», այլ դրանց հարաբերությունները: Հետևաբար, դա արտահայտվում է նաև գեղարվեստական տեքստի խնդրի մեջ, որը կառուցվում է՝ որպես կազմակերպման ձև, այսինքն՝ այդ տեքստի բովանդակության մեջ մտնող նյութական միավորներից բաղկացած հարաբերությունների որոշակի համակարգ»¹: Խոսելով Լ. Վիտգենշտեյնի դիրքորոշման մասին՝ Մ. Կոզլովան շեշտում է ոչ միայն պարզապես հարաբերությունները, այլ ցանկացած լեզվով «անհրաժեշտ հարաբերությունները» բառերի և իրերի միջև²:

Այս «անհրաժեշտ հարաբերությունները» ծագում են կադրում պատկերվող իրերի և առարկաների միջև «մտերմության» շնորհիվ: Այս «մտերմությունը» գաղափարախոսական բնույթ է կրում, և դրա նախադրյալը առաջանում է ընկալման, իրի կամ առարկայի նկատմամբ գործող անձանց հետևողական վերաբերմունքի մակարդակի վրա: Սրանով է սահմանվում պատկերվողի նշանակությունն ու կադրի և տեսարանի իմաստային բովանդակությունը: Ֆիլմի կադրը բազմակողմ է: Կարելի է խոսել ոչ միայն կադրը պլանների ստորաբաժանելու, այլև իմաստային բովանդակության ընկալման մակարդակի մասին: Իմաստն ինքնաբերաբար չի ծագում, այլ իմաստական տարրերի ընդհանուր կոնֆիգուրացիայի մի մաս է: Ֆիլմում չպետք է լինեն չհիմնավորված կադրեր և տեսարաններ, որոնք ռեժիսորն ինքը չի հասկանում կամ էլ լիովին խորամուկ չի լինում դրանց բովանդակության մեջ: Կադրը կարող է դժվարըմբռնելի լինել, բայց այն չպետք է լինի իմաստազուրկ: Կադրի մեջ կարևոր է իմաստ և նշանակություն ձեռք բերող տարրերի փոխկապակցվածությունը՝ ելնելով գաղափարի ծավալից և գեղարվեստական ֆիլմում նյութականացված գաղափարի բովանդակությունից: Այս պլանում իր ուրույն տեղն է զբաղեցնում համատեքստը: Ֆիլմի համատեքստն են կազմում նրա տեսարաններն ու էպիզոդները: Բայց, մեր տեսանկյունից, տեղին է խոսել նաև կադրի համատեքստի մասին: Այս սահմանման ներքո հասկանում ենք պլանների համադրությունը, տարածությունը հատվածների բաժանող միջկադրային անցումները, մարդկանց և առարկաների տեղակայումը, ֆոնի կիրառումը, դերասանների տեղաշարժը և այլն: Որպես օրինակ՝ կարող ենք բերել Ա. Փելեշյանի «Մենք» (1969) ֆիլմը: «...20-ական թթ. մոնտաժային տեսությունները, - գրում է Փելեշյանը, - հիմնական ուշադրությունն են սևեռում հարևան կադրերի միջև հարաբերությունների վրա: Էյզենշտեյնը դա կոչում էր «մոնտաժային շղթայակցում», իսկ Վերտովը՝ «ինտերվալ»»: «Մենք» ֆիլմի վրա իմ աշխատանքային փորձից ելնելով՝ ես

¹ **Лотман Ю.** Структура художественного текста, Москва, 1970, с. 69-70.

² **Козлова М.** Философия и язык, Москва, 1972, с. 22.

համոզվեցի, որ ինձ այլ բան է հետաքրքրում... բուն էությունն ու մոնտաժային աշխատանքի հիմնական շեշտադրումն ինձ համար ոչ թե դրանց սոսնձման, շղթայակցման, այլ «երկփեղկման» մեջ է... Այսպիսի մոնտաժը ես անվանում էի հեռավար³: Մոնտաժ կատարելով հեռավորության վրա՝ հեղինակը կադրը համատեքստից դուրս չի թողնում: Հարկ է նշել, որ աղջկա մասնակցությամբ կադրին հաջորդում են ֆիլմի մակագրերը (տիտրերը): Եվ ֆիլմն իր բովանդակությամբ նախասահմանում է երկրորդ անգամ այդ կադրի ի հայտ գալը: Բայց կադրն արդեն ի սկզբանե բովանդակալից կերպով է հանդես գալիս՝ շնորհիվ իր համատեքստի. աղջիկը կադրում, խոշոր պլանը, նրա տոնայնությունը, աղջկա վզից կախված ուլունքները, երաժշտական նվագակցությունը, դեպի հեռուն սևեռված հայացքը և այլն: Փելեշյանը իմաստավորում է ոչ միայն կադրերի հեռավար փոխկապակցվածությունը, այլև հենց կադրը՝ որպես ֆիլմի միավոր:

Եվ կրկին նախադասության մասին: Դրա հիմքում բառն է, որը հանդես է գալիս որպես իր իսկ կազմած պարզ նախադասության միավոր: Որպես ավարտուն միտք՝ նախադասությունը կարող է կազմված լինել նաև մեկ բառից: Իսկ սա այն պատճառով, որ բառի հիմքում գաղափարն է: Բառի օգնությամբ մենք բնորոշում ենք առարկայի էական հատկանիշները՝ գաղափարին հաղորդելով որոշակի ձև: Այդ էական հատկանիշը, որը մեր մտածելակերպի շնորհիվ արտացոլվող մարդկային կերպարի կամ առարկայի միջոցով այս կամ այն երևույթի ընկալումն է, կադրի կառուցվածքի կենտրոնն է: Այն կարելի է կոչել նաև կադրի միջուկ, կենտրոն, որը գրավում է մեր ուշադրությունը, իմաստ է հաղորդում էկրանի վրա պատկերվածին՝ տեսածը իմաստավորվում է: Որպես օրինակ կարող ենք բերել Հ. Բեկնազարյանի «Պեպոյի» (1935) մուրհակի կորստի տեսարանը: Կադրն անշարժ է՝ բաժանված երեք պլանի: Իր տեղակայմամբ և սպիտակ վերնաշապիկով առանձնանում է տղան՝ Միխոն: Նա ուշագրավ է նրանով, որ մի երգից մեղեդի է մրմնջում: Կադրի երկրորդ և երրորդ պլանում են Գիքոն և Շուշանը (Հասմիկ): Այս հերոսների սև հագուստը և կադրի ընդհանուր մթնոլորտն անհանգիստ տրամադրություն են ստեղծում: Ըստ սցենարի՝ մուրհակը պետք է կորչի, բայց ֆիլմում դա պատահաբար է տեղի ունենում: Խաղալիս Միխոն փոխանցում է այն թելերի փաթաթման համար նախատեսված հասարակ թղթի փոխարեն: Այդ պահին ընդգծված է միջկադրային մոնտաժով, խոշոր պլանով: Այնուհետև մենք կրկին տեսնում ենք անշարժ կադրի միջին պլանը: Նրա մեջ մտնում է սպիտակ զգեստ հագած Կեկելը (Տ. Մախմուրյան): Միխոյի հետ նրանք գնում են շուկա: Դերասանների յուրաքանչյուր գործողությունն ընդգծում է տեսարանի առաջնագիծը: Ռեժիսորն ու օպերատորը կառուցում են տեսարանը առանձին, բայց միաժամանակ փոխկապակցված բաղադրիչներից: Յուրաքանչյուր մանրուքն ինչպես կադրում, այնպես էլ բուն տեսարանում շեշտադրված է և առանձնացված՝ ունի նշանակություն և իմաստային բովանդակություն, որն էլ ֆիլմին հաղորդում է գեղարվեստական արժեք:

³ Пелешян А. Мое кино, Ереван, 1988, с. 137-138.

Եզրակացություններ

Խոսելով կադրի՝ որպես ֆիլմի բջիջի ձևավորման նշանակության և իմաստի մասին՝ մենք հանգում ենք այնպիսի հիմնարար բաղադրիչի, ինչպիսին է համատեքստը կադրի ներսում, որը նրա հիմնական տարրերի փոխազդեցության հետևանքն է:

Եզրահանգումներ

1. Կադրի հիմքը պետք է կազմեն փոխկապակցված բաղադրիչները, որոնք պատկերին իմաստ են հաղորդում:

2. Լինելով իմաստային միավոր՝ կադրն ապահովում է ողջ ֆիլմի հաջորդական զարգացում:

ПУСТОЙ КАДР

(значение и смысл в контексте фильма)

АРСЕН АМБАРЦУМОВ

В статье рассматриваются некоторые вопросы, связанные с композицией кинопроизведения и кадром как основополагающим компонентом фильма. Благодаря выразительным средствам экрана в кино происходит формирование художественной основы кадра. При этом важное место занимает категория значения, а именно, построение кадра таким образом, чтобы действующие лица «взаимодействовали» с вещественным и предметным миром в силу строгой необходимости. Приводятся примеры из фильмов «Цвет граната» С. Параджанова, «Мы» А. Пелешяна, «Пепо» А. Бекназаряна.

Ключевые слова – кадр, смысл, значение, фильм, композиция, контекст, художественное произведение.

EMPTY SHOT

(significance and meaning in the context of a film)

ARSEN HAMBARDZUMOV

The article reviews some issues related to the composition of a cinematographic work and a shot as the principal component of a film. The expressive means of the screen are conducive to formation of the artistic basis of the film shot. Along with this, of key importance is the category of significance, namely, composition of the shot in a way that characters and objects “interact” with each other due to strict necessity. Examples from the following films are presented: S. Parajanov’s “Color of the Pomegranate”, A. Peleshyan’s “We”, H. Beknazaryan’s “Peпо”.

Key words – shot, meaning, significance, film, composition, context, work of art.

ՄԿՐՏԻՉ ԹԱՇՃՅԱՆ. ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆԸ, ԲԵՄԱԴՐԻՉԸ, ՆԿԱՐԻՉԸ

ԱՆԱՀԻՏ ՉԹՅԱՆ*

Մկրտիչ Թաշճյանը, 1917-ին հաստատվելով Թավրիզում, իր շուրջը համախմբեց տեղի թատերական կյանքի գրեթե բոլոր առաջատար ուժերը: Կիրառելով սկզբունքորեն նոր մոտեցումներ ինչպես դերասանական խաղի, այնպես էլ ռեժիսորական արվեստի նկատմամբ՝ նա, փաստորեն, Իրանի հայ թատրոնում ունեցավ նույն առաքելությունը, ինչ որ Օվի Սևումյանն ու Արշակ Բուրջայանը արևելահայ թատրոնում: Շոայլ տաղանդների տեր այս արվեստագետը նույնպիսի շոայլությամբ դրանք փոխանցեց իր գործընկերներին՝ նպաստելով համայնքի թատերական շարժման կայացմանը:

Քանայի բաներ¹ Իրան, թատրոն, դերասան, արդիական, ռեժիսոր, ներկայացում, կերպար:

Ներածություն

Տաղանդավոր Թաշճյան. այսպես էին սովորաբար բնութագրում Իրանի հայ թատրոնի հիմնադիրներից մեկին՝ Մկրտիչ Թաշճյանին՝ նրա շոայլ ունակություններին հավելելով մարդկային բարձր հատկանիշները:

Մկրտիչ Թաշճյանը (1888-1958) ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում¹: Կոստանդնուպոլսում կարճ ժամանակ ապրելուց հետո ընտանիքով վերադարձավ Ալեքսանդրիա, որտեղ էլ ստացավ նախնական կրթությունը: Մայրը՝ Գոհարը, ֆրանսերենի և ձեռագործի ուսուցչուհի էր: Հոր հանկարծահաս մահը պատճառ դարձավ, որ Թաշճյանը թողներ ուսումը: Հազիվ տասնինը տարեկան՝ նա հայտնվում է Կովկասում՝ ներգրավվելով Թիֆլիսի և Բաքվի հայ թատերական կյանքում: Մ. Թաշճյանի առաջին դերերից մեկը եղավ Լաերտը՝ Վիլյամ Շեքսպիրի «Համլետում»՝ Կարապետ Գալֆայանի (1877-1945) միստիկական Համլետի կողքին: Որոշ ժամանակ (1908-1909)

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, anahit.anahit.art@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 04.10.2021, գրախոսելու օրը՝ 11.10.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

¹ Տե՛ս Ալիք (Թեհրան), 1957, 17 մարտի: Թաշճյան ազգանունը հայտնի է եգիպտահայ թատրոնում. Օննիկ Թաշճյան, Անահիտ Տաշճյան, Երվանդ Թաշճյան, Մանուկ Թաշճյան: Մկրտիչ Թաշճյանը, հավանաբար, ազգակցական կապեր է ունեցել նրանց հետ: Թաշճյաններից ճանաչվածը Մանուկ Թաշճյանն է (1881-1973): Խաղալով կատակերգություններում և օպերետներում՝ Մանուկ Թաշճյանն աչքի ընկավ Մուրադիկ Սերգեյի դերով՝ Խաչիկ Սանդալյանի «Սոնյա» օպերետում (1936): Նրա թատերախաղերից հայտնի են. «Իզնատ աղան և իր տղան բեմին վրա դեր կխաղան», «Կույրն ու կուզը», «Թախթաբիթիեն վախցող նոր հարսը» և այլ գործեր: Տե՛ս **Անահիտ Չթյան**, Հայ թատրոնը Եգիպտոսում, Երևան, 2020, էջ 133-134, 142, 201; նաև՝ **Անտիս Եսփունճյան**, Եգիպտահայ մշակույթի պատմություն, Գահիրե, 1981, էջ 384-385:

մասնակցել է Հայոց դրամատիկական ընկերության թատերախմբի և Զուբալովի ժողովրդական տան ներկայացումներին՝ դառնալով Սիրանույշի, Հովհաննես Աբելյանի, Ազնիվ Հրաչյայի և այլ նշանավոր դերասանների խաղընկերը: Այդ տարիներին արդեն, դրամատիկական «խաղի նրա ձիրքը նկատվել է և գնահատվել,- գրում է Լևոն Հախվերդյանը, - շնորհքն անկասկած է, ապագա կունենա, եթե «կանոնավոր զարգացնի իր ձիրքը»²:

Կանոնավոր ներկայացումներին, սակայն, գերադասելով «հյուրախաղային դերասանի ոչնչով չհսկվող»³ անկանոն գործունեությունը, Թաշճյանը խմբեր է կազմել, իր մեծ ու փոքր դերերով (Անդրեաս Էլիզբարյան՝ «Պատվի համար», Ռասայուն՝ «Կրեչինսկու հարսանիքը», Կորրադո՝ «Ոճրագործի ընտանիքը») վարպետությունը հղկելուց բացի, ճանաչվել ու գնահատվել ամենուրեք:

Մկրտիչ Թաշճյանի մուտքն Իրանի հայ թատրոն

1917-ին, Արմեն Արմենյանի դրամա-օպերետային խմբի կազմում, Մ. Թաշճյանը հյուրախաղերով գալիս է Թավրիզ՝ այնտեղ գտնելով կայացած, Թիֆլիսին բավական մոտ թատերական միջավայր: Քաղաքն արդեն ուներ իր թատրոնական շենքը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան հոյակերտ մի կառույց: Հասարակության բոլոր շերտերը հրապուրված էին բեմարվեստով՝ եկեղեցու հանդեպ ունեցած պաշտամունքն անգամ ստորադասելով թատրոնին: Այնպես որ, Մաղաքիա եպիսկոպոս Տերունյանը՝ պարսկա-հնդկական թեմի առաջնորդը, իր նոթերում ստիպված եղավ արձանագրել. «Դավրիժեցի հայեր շատ ավելի թատերասեր են, քան եկեղեցասեր»⁴:

Սա կարևոր հանգամանք էր, որ Մկրտիչ Թաշճյանը, իրեն պատուհասած աղետից հետո՝ նա նոր էր կորցրել իր զավակներին, լքել կնոջը՝ անվանի դերասանուհի Սյուզան Գարագաշին (1897-1944), որոշեր մնալ Թավրիզում: Անվերջանալի հետապնդումները նույնպես մղեցին նրան դիմելու այդ քայլին՝ մերժելով անգամ իր նորակազմ խմբին միանալու Սիրանույշի (1857-1932) առաջարկը: «...Ինձ պակասում է գլխավոր դրամատիկ դերակատար,- գրում է արտիստուհին Երևանից, իր 1917 թ. 14 դեկտեմբերի թվակիր նամակում: - Սիրելի Թաշճյան, խնդրում եմ մի մերժեք իմ առաջարկությունը, և այս նամակս ստանաք թե չե պատասխանեցեք ինձ»⁵: Չնայած մեծանուն դերասանուհու և իր խաղընկերների խնդրանքին, Մկրտիչ Թաշճյանն իր որոշման մեջ մնաց անդրդվելի, հետագայում զղջալու պահերին անգամ համոզվելով, որ իր համար այլ ելք չէր կարող լինել:

Մինչդեռ, Թավրիզի թատրոնին մոտ մարդիկ, ողջունելով Թաշճյանի քայլը, համոզված էին, որ նրա նման հմուտ արվեստագետի ներկայությունը միայն կխթաներ տեղի թատերական կյանքը: «Լսում ենք,- գրում է «Ալիքը»,-

² Լևոն Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն (1901-1920), Երևան, 1980, էջ 285:

³ Նույն տեղում:

⁴ Ալիք, 1976, 2 նոյեմբերի:

⁵ Արսէն Մամեան, Իրանահայ վերջին 50-ամեայ թատրոնի վաստակատուներ, Թեհրան, 1985, էջ 78:

որ մի խումբ բազմամյա սիրողներ ցանկանում են կազմակերպել սիրողների մի մշտական խումբ: (...) Բնական է, - շարունակում է թերթը,- որ այս խումբը կունենա իր մշտական ղեկավարը փորձված և թատերական արվեստին քաջ ծանոթ»⁶:

Մկրտիչ Թաշճյանը՝ որպես թատրոնի նորարար

Թատերական արվեստին քաջ ծանոթ ասելով, թերթը, անշուշտ, նկատի ուներ Մկրտիչ Թաշճյանին, որի շուրջ համախմբվեցին Թավրիզի բոլոր առաջատար ուժերը. Մուշեղ Հովհաննիսյան՝ հետագայում հմուտ մանկավարժ-բեմադրիչ, որի աճեցրած սաները դարձան 1950-ականների Թեհրանի հիմնական բեմական ուժերը, ինչպես նաև Զարուհի Գաֆաֆյան, Աննիկ Եղիազարյան, Նվարդ Հարությունյան և այլք: Այս կազմով էլ Թաշճյանը բեմադրեց Լեռ Կամսարի «Կասկածոտ ամուսինը», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»⁷, Պաուլո Ջակոմետտոյի «Կորրադո կամ ոճրագործի ընտանիքը» և այլ գործեր:

Մկրտիչ Թաշճյանը, ինչպես և սպասվում էր, կիրառեց սկզբունքորեն նոր մոտեցումներ ինչպես դերասանական խաղի, այնպես էլ ռեժիսորական արվեստի նկատմամբ: Ի տարբերություն մեկընդմիջտ գտնված ամպլուաների՝ Թաշճյանի հերոսներն ունեին կենդանի նկարագիր, որը պատճառաբանում էր նաև նրանց վարքագիծը բեմում: «Գլխավորն այն է,- գրում է Թաշճյանը, - որ դերասանը կերպարի մեջ գտնի մի այնպիսի հատկանիշ կամ բնավորության գիծ, որը կարողանա սնել նրա դերասանական խաղը, նյութ տալ երկարատև ապրումների համար»⁸:

Սա մի ելակետ էր, որը լիովին համընկնում էր Գևորգ Չմշկյանի և Գևորգ Պետրոսյանի հայեցակետերի հայ և Կոստանտին Ստանիսլավսկու հիմնադրույթների հետ՝ ռուս թատրոնում: «Ամպլուան ինքը,- շարունակում է Թաշճյանը,- շատ պայմանական բան է: Ես խաղում եմ դրամատիկ և կոմիկ

⁶ Ալիք, 1976, 10 նոյեմբերի:

⁷ Գլխավոր՝ Մանուկ աղայի դերում հանդես եկավ այդ տարիներին Թեհրանում գտնվող Հրաչյա Աճառյանը, որը Հայկազյան դպրոցում աշխատում էր որպես ֆրանսերենի, աշխարհագրության և այլ առարկաների ուսուցիչ: Նշենք, որ այս դերով Աճառյանն արդեն աչքի էր ընկել եգիպտահայ ականավոր թատերական գործիչ, նույն դպրոցի ուսուցիչ Գասպար Իփեկյանի (Արմենյան) բեմադրության մեջ: Հրաչյա Աճառյանը, Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանում եղել է Հակոբ Պարոնյանի աշակերտը, Իփեկյանի եղբոր՝ Արմեն Արմենյանի հետ սովորել նույն դասարանում: Արմենյանն իր հուշերում գրում է, որ աշակերտները հաճախ են տեսել Հ. Պարոնյանին Գում-Գափուի սրճարաններից մեկում՝ լուռ հետևելիս մանր առևտրականների, արհեստավորների և «Մանուկ աղայի նման» ազգայինների առանձին կամ ընդհանուր խոսակցությունները՝ օրվա «ազգային գործերու» և այլ դեպքերի մասին: Հրաչյա Աճառյանին հոգեմոտ էր Կոստանդնուպոլսի մթնոլորտը, դպրոցական տարիներից ծանոթ Մանուկ աղայի կերպարը, որը, պետք է ենթադրել, նրան հաջողվեց լիովին: Տե՛ս Արմեն Արմենյան, 60 տարի հայ բեմի վրա, Երևան, 1654, էջ 8-9: Նաև՝ Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 75-76: Նաև՝ Կարո Գեղորգեան, Ամենուն տարեգիրքը, 1957, 2 տարի, Պէրյուֆ-Լիբանան, էջ 432:

⁸ Ալիք, 1976, 24 նոյեմբերի:

դերեր: Իմ արտիստական հոգուն հարազատ են գիշատիչ Էլիզբարովն ու միամիտ Բաղդասար Աղբարը, դիվահար Սվենգալին և հրեշավոր Յագոն, Ստրինբերգի կիսախելագար հերոսն ու ազնիվ Ֆերդինանդը և այլն»⁹:

Դերասանական խաղի նման ընկալման շնորհիվ է, որ Մ. Թաշճյանը կարողանում էր հավասար հեշտությամբ ինչպես ծիծաղեցնել հանդիսատեսին, այնպես էլ խլել նրա արցունքները: Եթե նրա Հանրի Դյուվալը (Ալեքսանդր Բիսոն, Անտոնի Մարս՝ «Ապահարզանի անակնկալները») հանդիսատեսին դրդում էր ծիծաղել «հոմերական ծիծաղով»¹⁰, ապա Կորրադոն (Պաոլո Զակոմետտի՝ «Ոճրագործի ընտանիքը»), որի ջղերը «աշնանային տերևների պես»¹¹ ցնցվում էին հոգեկան խռովքից, նույն հոգեկան խռովքից ցնցում էր ամբողջ թատերասրահը:

Տարբեր դերերի նկատմամբ, այսպիսով, ունենալով նույն մոտեցումը, Թաշճյանը, իր իսկ խոսքերով, վերամարմնավորվում էր այնպես, որ «զգա իրեն ուրիշ մարդ»¹²: Նրա Կորրադոն, ինչպես և Կարապետ Գալֆայանի Համլետը, հասավ անձնավորման և անձնավորության կատարյալ ներդաշնակության, բեմական կերպարի և անձնավորող դերասանի բացարձակ միասնության¹³: Այնպես որ, Սիրանույշը, մեծ դերասանին բնորոշ նրբազգացությամբ, իբրև Թաշճյանի արվեստի գնահատական, նրան դիմել է իր կերպարի անունով: «Գնա, իմ Կորրադո զավակս»¹⁴: Սրանք արտիստուհու հրաժեշտի խոսքերն են՝ նրա իրանյան հյուրախաղերի վերջում (1921):

Կորրադոն Մկրտիչ Թաշճյանի գլուխգործոցն էր: Սակայն, նրա արտիստական հոգուն, իր իսկ խոսքերով, մոտ էր նաև «հրեշավոր Յագոն»: Եվ այդ Յագոն նա խաղաց Վահրամ Փափազյանի Օթելոյի կողքին: Մի դեր, որը Փափազյանի համար դարձավ «մի մեծ հայտնություն»¹⁵: «Յագո, որ իրերի և օրերի բերմամբ մի անձանոթ է այսօր մեր հանդիսատեսին, և որը սակայն եղավ մի մեծ դերասան, հազվագյուտ մի վարպետ և իմ ունեցած բոլոր Յագոների շարքում ոչ միայն մեկը ամենաաչքառուներից, այլև ամենից ավելի «արտիստը» այդ բառի լավագույն առումով»¹⁶:

Հավելենք, որ Թաշճյանի հերոսները, աչքառու լինելուց բացի, նաև արդիական էին՝ կերտված դերասանական խաղի բոլորովին նոր ընկալումով: «Խաղում էր այնպես, ինչպես այժմ են պահանջում մեզանից»¹⁷: -Սրանք արդեն Ավետ Ավետիսյանի խոսքերն են՝ Թաշճյանին Անանիա Գլխայի (Ալեքսանդր Սումբատով - Յուժին՝ «Դավաճանություն») դերում տեսնելուց հետո և ավելացնում. «Իրոք, տաղանդավոր էր Թաշճյանը»¹⁸:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, 1935, 13 հուլիսի:

¹¹ Նույն տեղում, 9 հունիսի:

¹² Նույն տեղում, 1976, 24 նոյեմբերի:

¹³ Տե՛ս **Լևոն Հախվերդյան**, նշվ. աշխ., էջ 157:


¹⁴ Ալիք, 1976, 22 նոյեմբերի:

¹⁵ **Վահրամ Փափազյան**, Իմ Օթելլոն, Երևան, 1964, էջ 92:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Ալիք, 1976, 22 նոյեմբերի:

¹⁸ Նույն տեղում:



Նկ. 1. «Կորրադո կամ ոճրագործի ընտանիքը» (Պաուլո Ջակոմետտոյի), Մկրտիչ Թաշճյանի ինքնանկարը՝ Կորրադոյի դերում



Նկ. 2. Մկրտիչ Թաշճյան

Տաղանդավոր էր նաև որպես կազմակերպիչ, և, եթե Իրանի հայ թատրոնը Հովհաննես Խան-Մասեհյանի, Մեսրոպ քահանա Փափազյանի¹⁹, Գաս-

¹⁹ Իրանի հայ համայնքում ընդհանրական շահերի միակ արտահայտիչը թեմական առաջնորդարանն է: Թատրոնը, լինելով հասարակական կյանքի կարևոր կողմերից մեկը, նույնպես դարձավ իրանահայ թեմական առաջնորդարանի համակողմանի հոգաժողովի առարկան: Ուստի, պատճառաբանված է, որ Թեհրանից հետո, հայ թատրոնի սկզբնավորումն Իրանի մեկ այլ խոշոր քաղաքում՝ Թավրիզում, առնչվում է հոգևոր անձի՝ Մեսրոպ քահանա Փափազյանի անվան հետ: Նշենք, որ հոգևորականը յոթ զավակների հայր էր, որոնցից առնվազն չորսն արժանի տեղ գրավեցին հայ հասարակական կյանքում: Քահանայի զավակներից ամենանշանավորը՝ գրող և հասարակական գործիչ Վրթանես Փափազյանն է, որն Իրանում ապրած տարիներին «Շավիղ» շաբաթաթերթի խմբագիրն էր (1894-1896) և շարունակելով իր մեծ նախորդի՝ Հովհաննես Խան-Մասեհյանի հիմնած գործը, նպաստեց արևելահայ մշակույթի և լեզվի հաստատմանն իրանահայ համայնքում: Մեսրոպ քահանայի մյուս որդին՝ ազգային հեղափոխական գործիչ Վահան Փափազյանն է՝ «Կոմս» ծածկանունով: Հուսիկ և Աշխեն Փափազյանները կանգնած են Թեհրանի և Թավրիզի թատերական շարժման ակունքներում: Ինքը՝ Մեսրոպ Փափազյանը, լինելով կրթված անձնավորություն, թատրոնի մասին իր պատկերացումներն ստացել է Ռուսաստանում: Շեքսպիրի «Վե-

պար Իփեկյանի օրոք ընթանում էր արևելահայ բեմարվեստի ուղղությամբ, ապա Մկրտիչ Թաշճյանի շնորհիվ վերջնականապես ձևավորվեց որպես ռուսահայ թատրոնին հարող մի նոր համակարգ: Մինչ այդ «Հայ թատրոնի պատմությունը գերազանցորեն եղել է հայ կարկառուն դերասանների պատմություն: - Գրում է «Ալիքի» հեղինակը՝ «Pectus» (Հրանտ Սրվանձտյան) ստորագրությամբ: -Մեզ մոտ չի կիրառվել հավաքական թատրոնի սկզբունքը, որի մարմնացումն էր Մոսկվայի գեղարվեստական թատրոնը, Նեմիրովիչ-Դանչենկոյի և Ստանիսլավսկու ղեկավարությամբ»²⁰:

Այսպիսով, ի տարբերություն Կոստանդնուպոլսի թատրոնի, որը պայմանաբար կարելի է ընդունել որպես դերասանի թատրոն, Իրանի հայ թատրոնը, մեծապես նաև Մկրտիչ Թաշճյանի շնորհիվ, կազմավորվեց որպես ռեժիսորական, և այս առումով, ըստ նույն հեղինակի, նրան կարելի է համեմատել արևելահայ թատրոնում նույն առաքելությունն ունեցած Օվի Սևումյանի և Արշակ Բուրջալյանի հետ²¹:

Մկրտիչ Թաշճյանը և հայրենի դերասանները

Եթե Թաշճյանի դիրքորոշումը նորություն էր արտերկրի թատրոնում, ապա, Երևանի մի խումբ դերասանների համար, որոնք 1921-ին եկան Թավրիզ՝ հյուրախաղերի, ընդհանուր ելակետ էր՝ լիարժեք համագործակցության համար, փոխելով նաև հյուրախաղերի մասին Սփյուռքում ընդունված պատկերացումներն ընդհանրապես: Սովորաբար դրսի արտիստները նոր լիցք են հաղորդում, խթանում գաղթօջախների թատերական կյանքը, սակայն այս դեպքում կատարվեց հակառակը: Մայրաքաղաքից եկած դերասանները (Մանուէլ Մարության, Ստյոպա Նավասարդյան, Բաբկեն Ռաշմաճյան, Շավարշ Մակարյան), նրանց թվում՝ նաև երիտասարդ Գուրգեն Ջանիբեկյանը, Թաշճյանի ղեկավարած խմբում անցան վարպետության մի դպրոց, որը նրանց ուղղորդեց հետագա տարիներին նույնպես:

Մկրտիչ Թաշճյանը, ինչպես հիշում է Գուրգեն Ջանիբեկյանը, նախ ստեղծեց «դերասանական կուռ անսամբլ»²², նրանցից յուրաքանչյուրին օգնելով գտնել իր «դերի բանալին»²³: Ռեժիսորական ցուցմունքներից բացի, նա, բեմում նույնպես, կերպարի որքան անսպասելի, նույնքան համոզիչ լուծումներով, խաղընկերներին մղում էր իրենց ունակությունների լիարժեք դրսևորմանը: Ջանիբեկյանը Թաշճյանի Կորրադոյի կողքին հանդես եկավ Պալմիերիի դերով, «Օթելլոյում» Կասիո էր, իսկ «Նամուսում»՝ Սեյրան: Սեյրանի դերն էլ դարձավ նրա արտիստական կյանքի կարևոր ձեռքբերումներից մեկը, որը Թաշճյանն ընկալեց որպես սեփական հաջողություն:

նետիկի վաճառականի» բեմադրությունը դիտելուց հետո նա ինքը հեղինակեց մի պիես՝ նույն թեմայով: Փափագյանի գրչին է պատկանում նաև «Արդար դատաստան» թատերախաղը: Տե՛ս Ալիք, 1994, 8 մարտի, 10 մարտի, 14 մարտի; Նաև՝ նույն տեղում, 15 հուլիսի:

²⁰ Նույն տեղում, 1935, 9 հունիսի:

²¹ Նույն տեղում:

²² **Գուրգեն Ջանիբեկյան**, Իմ աշխարհից, Գիրք երկրորդ, Երևան, 1960, էջ 241:

²³ Նույն տեղում, էջ 242:

Նրա «ուրախությանը չափ չկար: - Հիշում է Ջանիբեկյանը: - Դերասա՞ն են դառնում, սիրելիս, դերասա՞ն... Գիտե՞ս ինչ երջանկություն է դա: Փառքով պիտի մտնես Երևան, փառքով...»²⁴:

Ինքը՝ Մկրտիչ Թաշճյանը, գիտեր այդ երջանկության գինը, երբ յուրաքանչյուր դեր կատարելիս կարողանում էր գտնել կերպարի ի՛ր լուծումը՝ այն դարձնելով ընդունելի հնչյալ խաղընկերների, այնպես էլ հանդիսատեսի համար: Ի հակադրություն Կորրադոյի՝ նա որոշ վերապահությամբ էր վերաբերվում Շեքսպիրի Օթելլոյին և, ասես կողքից դիտելով, տալիս նրա մարդկային էության գնահատականը: Կերպարը մեկնաբանելու այս եղանակը հարում է Բերթոլդ Բրեխտի գեղագիտությանը՝ բնութագրվելով որպես «օտարման էֆեկտ»: Բեմում դերասանը, հերոսի նկատմամբ իր վերաբերմունքը ցուցադրելուց բացի, «տալիս է նրա հասարակական արժեքը»²⁵, հանդիսատեսին հանձնելով «տվյալ պերսոնաժին արժանի վերաբերմունքի բանալին»²⁶: Թաշճյանը, ներկայացնելով Օթելլոյի այս ընկալումը, գրում է. «Օթելլոն ինձ չի հուզում: Այդ դեպքում ես ներքուստ չեմ կարողանում նախապատրաստվել մի սոսկալի և կանխամտածված սպանության: Նման քայլն անելու համար ես ուժ չեմ գտնում կուտակել և սնել իմ մեջ ինչ-որ անմարդկային ատելություն դեպի սիրած կինը: Հետևաբար և ներքին, ինքնաբուխ, անմիջական խաղի չեմ կարողանում հասնել»²⁷: Այստեղից՝ Օթելլոյի բոլորովին նոր և անսովոր մեկնաբանում, որը թերևս մոտ է Ալեքսանդր Պուշկինի ընկալմանը: Ըստ Պուշկինի՝ Օթելլոյի ողբերգությունը ոչ թե խանդի, այլ սիրած կնոջ հանդեպ հավատը կորցնելու ողբերգություն է²⁸:

Ելնելով այս դրոյթից՝ Թաշճյանի Օթելլոյի բացատրությունը Դեզդեմոնային հիասթափված մարդու զուպ մեղադրանք է, բայց ոչ խանդի անսանձ դրսևորում: «Ոչ մի ոռնոց կամ մոնչոց չէիր լսի, - հիշում է Գուրգեն Ջանիբեկյանը, - ամեն ինչ խաղարկվում էր կիսատ տոներով, երբեմն նույնիսկ շշուկով, մի հեզնական ժպիտով անգամ, ասես նա ծիծաղում էր աշխարհի, մարդկանց վրա, որ չեն հավատում բարուն ու գեղեցիկին: [...] Ես պարզապես ապշել էի Օթելլոյի այսպիսի անսովոր նկարագրի առաջ: [...] Զգում էինք Օթելլոյի խորը բորբոքվող, աքցանների մեջ առնված հոգին, որն ուզում էր ճչալ, բայց չէր կարողանում, խեղդվում էր իր իսկ սահմանած կապանքների մեջ»²⁹:

²⁴ Նույն տեղում, էջ 238:

²⁵ **Бертольд Брехт**, Театр в 5-и т., т. 5, полутом 2, Москва, 1965, с. 139.

²⁶ Там же, с. 377.

²⁷ Ալիք, 1976, 24 նոյեմբերի:

²⁸ Տե՛ս **Айхенвальдъ Ю.** Этюды о западныхъ писателяхъ, Москва, 1910, с. 50.

²⁹ **Գուրգեն Ջանիբեկյան**, նշվ. աշխ., էջ 243: Տասնամյակներ անց՝ 1940-41 թթ., երբ «Օթելլոն» պետք է ներկայացվեր Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Արմեն Գուլակյանի բեմադրությամբ, իսկ գլխավոր դերակատարը Գուրգեն Ջանիբեկյանն էր, դերասանն այդ կերպարի բոլոր հայտնի մեկնաբանումները վերլուծելուց հետո, ի վերջո, հանգեց Թաշճյանի Օթելլոյին մոտ կերպարին: «Անհրաժեշտ էր պարզել նաև՝ Օթելլոն խանդո՞ւտ էր, թե ոչ, -գրում է արտիստը: -Քանի որ շատերը Օթելլոյի անունը լսելիս դրա տակ առաջին հերթին հասկանում են խանդը: Ես էլ սկզբում այդպես էի ընկալում: Կերպարի գննությունը ցույց տվեց, որ նրան խանդի դուռն են

Կերպարի զարգացման դինամիկան ընդգծող և, դարձյալ ըստ Ջանի-բեկյանի դիպուկ բնորոշման, «ներքին դրամատիզմով և զուսպ լարվածքով»³⁰ է նաև Թաշճյանի Բարխուդարը՝ Ալեքսանդր Շիրվանզադեի «Նամուսում»: Նշենք, որ Հովհաննես Աբեյանի Բարխուդարը, որն այդ տարիներին համարվում էր առավել հաջողվածներից մեկը, ուներ ճիշտ հակառակ նկարագիր. ընդգծված դիմախաղի վրա կառուցված այդ կերպարը ներկայանում էր որպես հախտուն, նույնիսկ անզուսպ բնավորության տեր անձնավորություն:

Մկրտիչ Թաշճյանի խաղաոճը, երբ արտահայտչամիջոցների կիրառումը հասնում էր նվազագույնի, մոտենում էր դերասանական խաղի ադամյանական ընկալմանը: Նա իրեն համարում էր Պետրոս Ադամյանի հետևորդ: Նրանից է ժառանգել Կորրադոն՝ Ադամյանի անգերազանցելի դերը, որը, այսուհանդերձ, Թաշճյանը յուրովի հասցրեց կատարելության՝ արժանանալով Սիրանույշի հատուկ վերաբերմունքին: Մի առիթով, հարցին, թե ինչ կարծիք ուներ Ադամյանի մասին, Մկրտիչ Թաշճյանն իրեն հատուկ հումորով պատասխանել է.

- Տղաս, Ադամյանը հանճար էր, մորեղբայրս էր: Դերասանությունը նրանից եմ ժառանգել³¹:

Մկրտիչ Թաշճյանը՝ նկարիչ, ճարտարապետ և երգիչ

Եթե ավելացնենք, որ Մկրտիչ Թաշճյանը, ինչպես և Պետրոս Ադամյանը, բազմակողմանիորեն օժտված արվեստագետ էր, մարդկային բարձր արժանիքների տեր անձնավորություն, կստանանք նրա եթե ոչ լրիվ, ապա բնութագրող նկարագիրը: Հրաշալի նկարիչ էր՝ գրաֆիկայի վարպետ, ունի նաև յուղաներկ կտավներ, որոնք արվեստագետի բանաստեղծական և ումանտիկ տրամադրությունների արտահայտությունն են: Նրա աշխատանքները ցուցադրվել են «Գարուն» ակումբի անդրանիկ ցուցահանդեսում, իսկ ինքը՝ Թաշճյանը, որպես նկարչության ուսուցիչ, աշխատել է Աբաղանի պետական դպրոցում³²: Ճարտարապետության իր գիտելիքներով ոչ միայն չէր զիջում, այլև գերազանցում էր մասնագետներին³³: Թավրիզի «Շիր-օ-Խորշիդ» թատրոնը կառուցվեց ըստ Թաշճյանի մշակած հատակագծերի (1927), իսկ Մարաղայի պետական թատրոնի պատասխանատու ճարտարապետները, բավականաչափ գիտելիքներ չունենալով թատրոնական շենքերի մասին, դիմեցին Թաշճյանին, որոշելով օգտվել «այդ աննման հայ արտիստի

հասցնում հավատն ու հավատարմությունը: Չէ՞ որ հենց ինքը՝ Օթելլոն, խոստովանում է՝ որ «ինքը խանդոտ չէ»: [...] Օթելլոյի տառապանքները խանդից չեն գալիս, այլ վիրավորված ինքնասիրությունից, այն մտքից, որ խաբված է իր հավատի մեջ»: Նույն տեղում, էջ 276:

³⁰ Նույն տեղում, էջ 243:

³¹ Ալիք, 1976, 10 նոյեմբերի:

³² Նույն տեղում, 1957, 17 մարտի: Նաև՝ նույն տեղում, 1960, 19 օգոստոսի:

³³ 1921-1923 թթ. Թավրիզում ապրող Ալեքսանդր Թամանյանը Մկրտիչ Թաշճյանի հարևանն էր: Հիացած էր նրա Կորրադոյով, բարձր է գնահատել նաև Թաշճյանի գիտելիքները ճարտարապետության ասպարեզում, որոշ գծագրական աշխատանքներ նրան է հանձնարարել: Տե՛ս **Գուրգեն Ջանիբեկյան**, նշվ. աշխ., էջ 251-252:

շնորհքից»³⁴ (1928): Նրա ցուցումներով էլ կառուցվեցին դեկորացիաները և արևելյան ոճով նկարագարովաժ Մարաղայի թատրոնի վարագույրը:

Քաջալերելով երկրով մեկ ծավալվող թատերական շարժումը՝ Մ. Թաշճյանը մասնակցել է նաև բեմական շինությունների վերակառուցմանը, Իրանի հայ թատրոնի հաստատմանը նպաստելով նաև բառիս ուղղակի իմաստով: «Կարճ ժամանակի մեջ, - գրում է «Ալիքը» Նոր Ջուղայի հյուրախաղերի առիթով, - դերասան Թաշճյանը, երիտասարդ նկարիչ Հարութ Մինասյանի օգնությամբ կարողացավ ազգ. դպրոցի բեմը հիմնական և հաջող, գեղարվեստական նորոգության ենթարկել և առաջին առիթով իսկ ներկայացրեց «Կորրադոն»³⁵: Սուլթանաբադի հյուրախաղերին նույնպես նախորդեցին մոտ մեկ ամիս տևող նախապատրաստական աշխատանքները: Թաշճյանը, այս անգամ առանց որևէ մեկի օգնության, Հոթել Նադերիի բակում կառուցեց բացօթյա մի բեմ՝ իր օժանդակ շինություններով³⁶:

Թվում է, մեկ մարդուն այսքանն էլ բավական է իբրև արվեստագետ կայանալու համար: Մինչդեռ Մ. Թաշճյանը նաև հմուտ երաժիշտ էր՝ երգիչ և իր կատարումներով նույնպես չէր զիջում պրոֆեսիոնալներին: «Այդ ինչ ձայն էր..., - գրում է Ջանիբեկյանը, այս անգամ հիացած՝ նրա Սարոյի արիան լսելուց հետո: - Դրամատիկ հնչեղ տենոր ուներ, լի բարիտոնային թավ երանգներով, հիանալի տեմբրով և շատ մաքուր ձայնարտաբերմամբ: Երգում էր ազատ, առանց լարվածության, հնչյունային բարձրունքները վերցնում էր հանգիստ և անբռնագբոս. թվում էր, որ ռեգիստորը դեռ կարող էր և բարձրացնել: Երգի ընթացքում Գրոն³⁷ և ես զարմացած իրար էինք նայում և լուռ, գլուխներս տարուբերում՝ իբրև մեր հիացմունքի ու զարմանքի նշան: Թաշճյանը ոգևորված շարունակում էր իր երգը... Պատերը դրոգում էին նրա ձայնի ուժից:

Երգն ավարտելուց հետո մանկան անմիջականությամբ դիմեց մեզ՝
- Լավ էր չէ՞..., - ու բարձրաձայն ծիծաղեց...»³⁸:

Շոայլ տաղանդների տեր այս արվեստագետը նույնպիսի շոայլությամբ դրանք փոխանցում էր իր գործընկերներին, մերձավորներին: Հարութ Մինասյանը՝ Հարություն Մինասյանը (1910-2002), որի օգնությամբ վերանորոգվեց Նոր Ջուղայի դպրոցի դահլիճը, հետագայում՝ համայնքի ճանաչված արվեստագետներից մեկը, հայ «Շեքսպիրականի» հեղինակը նկարչության ասպարեզում իբրև դերասան և բեմանկարիչ կայացավ Մկրտիչ Թաշճյանի հովանու ներքո³⁹: Թաշճյանի երկրորդ կինը՝ Արուայակ Թաշճյանը (Առլեթ Թաշճյան, 1897-1974), դուստրը քաղաքական խոշոր գործիչ Լևոն Թադևոս-

³⁴ Ալիք, 1977, 26 հունվարի:

³⁵ Նույն տեղում, 1935, 1 հոկտեմբերի:

³⁶ Տե՛ս Ալիք, 1937, 21 սեպտեմբերի:

³⁷ Թավրիզի բժիշկ, որն այցելում էր Թաշճյանի տանն իջևանած վատառողջ Ջանիբեկյանին:

³⁸ **Գուրգեն Ջանիբեկյան**, նշվ. աշխ., էջ 229:

³⁹ Նրա մասին տե՛ս մեր հոդվածում՝ Հովհաննես Խան-Մասեհյան և Հարություն Մինասյան. մի դրվագ ակադեմիկոս Ռուբեն Զարյանի անվան շեքսպիրագիտական գրադարանի պատմությունից, Երևան, 2012, Հայ արվեստի հարցեր, գիրք 4, էջ 131-142:

յանի (Պապաշա, 1865-1936), իր բեմական ունակությունները զարգացրեց ամուսնու օգնությամբ՝ մասնակցելով նրա գրեթե բոլոր բեմադրություններին: Արտիստուհու հաջողված գործերից մեկը եղավ զոքսանչի դերը՝ «Ապահարգանի անակնկալներում» (հեղ.՝ Բիո, Կարե):

Եզրակացություններ

Մկրտիչ Թաշճյանի դստեր՝ Լեոնի (Լալիկ) Թաշճյանի նկարչական ձիրքը նույնպես հղկվեց հոր հսկողությամբ և ղեկավարությամբ: Աբաղանից հետո աշխատել է որպես նկարչության ուսուցչուհի Թեհրանի «Նաիրի» դպրոցում: Անհատականից բացի (1948), մասնակցել է մի շարք ցուցահանդեսների: Հաջողված աշխատանքներից են «Հարսը», Պերսեպոլիսի հնությունները պատկերող կտավները, մի շարք դիմանկարներ⁴⁰:

Թաշճյանի մյուս դուստրը՝ Սեդան, դարձավ երաժիշտ:

Այսքանով հանդերձ՝ Մկրտիչ Թաշճյանին միշտ ուղեկցել է չգնահատված ու լքված մարդու զգացումը, և որ նա, ինչպես գրում է Վահրամ Փափազյանը, «ասուպի պես սուզվեց աղջամուղջի մեջ, մնալով «անգիտված, մոռացված, գրեթե անհիշատակ»⁴¹: Նա քաջ գիտակցում էր, որ եթե մնար հայրենիքում, «կանոնավոր մի խմբի մեջ, - ինչպես գրում է Թաշճյանի խաղընկեր Մանուէլ Մարությանը, - անտարակույս մեծ հոչակ պիտի վայելեր: Սակայն, - ինչպես շարունակում է հեղինակը, - տարիներ ու տարիներ մնաց նույն միջավայրում, ու միայն վերջին տարիներին այցելեց Թեհրան, ապա Աբաղան ու այնտեղ էլ մեռավ»⁴²:

Այսուհանդերձ, այն նույն ճակատագիրը, «անբացատրելի բախտը», որը, Թաշճյանից բացի, անարդար կերպով է տնօրինել հայ թատրոնի մարդկանցից շատերի կյանքի ուղին, ուներ իր տրամաբանությունը և բարեխնամ գտնվեց Թաշճյան-արվեստագետի նկատմամբ: Ծնվել է մշակույթը գնահատող մի երկրում, թատերական հարուստ ավանդույթներ ունեցող իր հայ համայնքով: Իբրև արվեստագետ կայացել է արևելահայ թատրոնի կենտրոններում, հայ բեմարվեստի վարպետների կողքին, գնահատվել նրանց կողմից: Իրանի հայ համայնքում հաստատվել է ճիշտ ժամանակին, և, հավանաբար, միայն նա կարող էր շարունակել իր նախորդների այդքան հաջող սկսած գործը: Ինքը՝ Մկրտիչ Թաշճյանը, քաջ գիտակցելով իր արժեքը, մի առիթով ասել է. «Անվիճելի մեծություններ են Սիրանույշը, Աբեյանն ու Զարիֆյանը: Վերջիններիս հետ կարող են համեմատվել Շահխաթունին և Փափազյանը: Իսկ նրանցից հետո՝ ես եմ...»⁴³: «Դատելով ըստ վկայությունների, ըստ այն համոզիչ գրքույկի⁴⁴, որ գրվել է Մկրտիչ Թաշճյանի մասին, դերասանը թերևս շատ էլ հեռու չէր ճշմարտությունից, բայց նրա ստեղծագործական ճակատագիրն աննպաստ տնօրինվեց ոչ թե անբացատրելի բախտի,

⁴⁰ Տե՛ս Ալիք, 1979, 3 հուլիսի: Նաև՝ նույն տեղում, 1960, 30 օգոստոսի:

⁴¹ **Վահրամ Փափազյան**, նշվ. աշխ., էջ 92: Նախորդ մեջբերման աղբյուրը նույնն է:

⁴² **Մարութեան Մ.**, Երբ իջնում է վարագույրը, Ա. հատոր, Թեհրան, 1969, էջ 138:

⁴³ **Գուրգեն Զանիբեկյան**, նշվ. աշխ., էջ 228:

⁴⁴ **Ալեքսանդրյան Մ.**, Մկրտիչ Թաշճյան, Հուշեր, տպավորություններ, Երևան, 1964:

այլ բացատրելի անհատապաշտական հոգեբանությամբ»⁴⁵, - գրում է Լևոն Հախվերդյանը: Ճշմարտություն, որը հայ թատրոնի պատմության մեջ իր տեղը գտնելու և հաստատվելու կարիքն ունի:

МКРТЫЧ ТАШЧЯН: ТАЛАНТЛИВЫЙ АКТЕР, РЕЖИССЕР, ХУДОЖНИК

АНАИТ ЧТЯН

В 1917-м году поселившись в Тебризе, Мкртыч Ташчян собрал вокруг себя почти все ведущие силы местного театрального мира. Аппелируя к новым методам как в актерской игре, так и в искусстве режиссуры, в иранском армянском театре Ташчян выполнял ту же миссию, что и Ови Севумян и Аршак Бурджалян – в восточноармянском. Одаренный щедрым талантом, Ташчян с той же щедростью передавал их своим коллегам, способствуя тем самым становлению армянского театра общины.

Ключевые слова – Иран, театр, актер, современный, режиссер, спектакль, образ.

МКРТИՇ ԿԱՏՉՅԱՆ: ԹԵ ԿԱԼԵՆՏԵԴ ԱՔՏՈՐ, ԴԻՐԵՔՏՈՐ, ԱՐՏԻՏ

ԱՆԱԻՏ ՇՏԻԱՆ

Having settled in Tabriz in 1917, Mkrtych Tashchyan gathered around himself almost all the local leading theatrical figures. He applied new methods both in the field of acting and in the art of directing. In fact, in the Armenian theatre of Iran, he carried out the same mission as Ovi Sevumyan and Arshak Burjalyan did in the theater of Eastern Armenia. A man of many talents, Tashchyan generously shared his skills and knowledge with his colleagues, thereby promoting the emergence and formation of the Armenian theater in Iran.

Key words – Iran, theater, actor, contemporary, director, performance, image.

⁴⁵ Լևոն Հախվերդյան, նշվ. աշխ., էջ 286:

ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԱՐԱ ՀԱԿՈՒՅԱՆ*

Նկարիչ-արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի ստեղծագործությունների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տեղեկատվական համապատասխան նյութեր կան, մինչդեռ նրա կատարած որմնանկարները, չնայած թռուցիկ ակնարկներին, կարոտ են մնացել հանգամանալի լուսաբանման:

Հոդվածը նվիրված է Փարիզի Նուբարյան գրադարան» և Փարիզի հայ ուսանողների տան գլխավոր սրահներում Շիշմանյանի ստեղծած որմնանկարչական աշխատանքներին: Դրանք կատարված են միջնադարյան օրնամետիկային բնորոշ պատկերաձևերով, սակայն այսօր նշված հաստատություններում գործող գրադարան-սրահներն իրենց գեղարվեստական լուծումներով նոր շունչ են հաղորդում արվեստասեր շրջանների հիացմունքին:

Քանալի բաներ¹ որմնանկար, գրադարան, ուսանողական տուն, զարդամոտիվ, նկարիչ-արվեստաբան, ֆրանսիական շրջան, գույն:

Ներածություն

Սփյուռքահայ արվեստում և, ընդհանուր առմամբ, հայ մշակույթի պահպանման ու զարգացման գործում մեծ ավանդ ունի նկարիչ-արվեստաբան, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռաֆայել Մարտիրոսի Շիշմանյանը (1885-1959): Նրա արվեստաբանական աշխատությունները մինչև օրս էլ ուղեցույց են ուսանողության և ընդհանրապես արվեստասեր լայն հասարակության համար¹: Դժվար է մտաբերել սփյուռքում ապրած մեկ այլ արվեստագետի, որը մայր երկրից հեռու՝ օտար ափերում ապրած երկար ու ձիգ տարիների ընթացքում հոգով ու գործով այնքան կապված լիներ իր նախնիների հողին, այնտեղ արարող մարդկանց, որքան Շիշմանյանը:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում Փարիզի Նուբարյան գրադարանի և Փարիզի հայ ուսանողների տան սրահներում Ռաֆայել Շիշմանյանի ստեղծած որմնանկարչական աշխատանքներին, որոնք իրենց հայկական օրնամետիկային բնորոշ պատկերաձևերով ուշագրավ երևույթ են սփյուռքահայ արվեստում:

* Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, arahakobean@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 04.09.2021, գրախոսելու օրը՝ 23.09.2021, տպագրության ընդունելու օրը՝ 29.11.2021:

¹ Շիշմանյանի հեղինակած բազմաթիվ հոդվածների և ուսումնասիրությունների կողքին առավել ուշագրավ են «Էդգար Շահին» (Երևան, 1956) և «Բնանկարը ու հայ նկարիչները» (Երևան, 1958) գրքերը:

Նյութի հիմնական շարադրանք

Ռաֆայել Շիշմանյանը ծնվել է 1885 թ. Արևմտյան Հայաստանի Խարբերդ նահանգի Լիճք գյուղում: Մանկությունը անհանգիստ տարուբերումների մեջ է անցել. 1895–1896 թթ. եղել է Պոլսում, ապա տեղափոխվել Բուլղարիա: Հետագայում վերադարձել է Պոլիս և ավարտել Բեշիկթաշի Մաքրուհյան երկսեռ վարժարանի ընդհատված ուսումը: 1907 թ. ավարտել է Պոլսի ազգային կեդրոնական վարժարանը: 1908 թ. վերջապես տեղափոխվել է Փարիզ. 1908–1913 թթ. սովորել է տեղի Գեղարվեստի ու զարդարվեստի ազգային վարժարանում՝ միաժամանակ հաճախելով Ժյուլիան ակադեմիայի դասընթացներին: Մասնավորապես Գեղարվեստի ու զարդարվեստի ազգային վարժարանում ստացած գիտելիքները կողմնորոշիչ դեր ունեցան նրա կյանքում:

Ի դեպ, Արևմտյան Հայաստանից բազում շնորհալի հայ երիտասարդներ նկարչության մեջ կատարելագործվելու համար մեկնում էին եվրոպական երկրներ: Հայ մշակույթի զարգացման գործում առավել բարենպաստ եղավ Ֆրանսիան՝ դառնալով հայազգի ապագա արվեստագետների երկրորդ հայրենիքը: Ֆրանսիայի գրավիչ ու հրապուրիչ մայրաքաղաք Փարիզը դառնում է ուսումնասեր հայ երիտասարդների համար կրթական կենտրոն:

Շիշմանյանը Ֆրանսիայում ծավալում է հասարակական-մշակութային եռանդուն գործունեություն: 1919 թվականից մասնակցում է «Անկախների» սալոնի ամենամյա ցուցահանդեսներին: Տարիների ընթացքին համահունչ՝ արվեստագետը խորապես կապվում է Փարիզի հայկական համայնքի հետ, մեծապես նպաստում դրա ազգային գործունեությանը: Աշխատակցում է հայկական «Մեխյան», «Անահիտ», «Գեղարվեստ» և մի շարք այլ հանդեսների՝ հրատարակելով գեղարվեստի տեսության վերաբերյալ ուշագրավ հոդվածներ:

Ռ. Շիշմանյանը հատուկ վերաբերմունք է ցուցաբերում մանավանդ շնորհալի հայ երիտասարդ արվեստագետների նկատմամբ: Թերևս առաջին անգամ նրա շնորհիվ գեղարվեստական հասարակայնությունը ծանոթանում է կերպարվեստի հայ տաղանդավոր երիտասարդների հետ. կարծես Շիշմանյանն է նրանց տալիս ստեղծագործական «անձնագիր»:

Եղել է Փարիզի «Անի» հայ արվեստագետների խմբակցության հիմնադիրներից մեկը, պարբերաբար վերընտրվել նրա նախագահը²: Հետագայում Ռ. Շիշմանյանի նախագահությամբ Փարիզում հիմնվում է «Հայ ազատ արվեստագետների» միությունը (1931–1947)³: Շուտով դառնում է «Հայ ազգային ճակատ» կազմակերպության վարչության անդամ: Զբաղվել է բարեգործական միջոցառումների կազմակերպմամբ⁴:

² Միությունը հիմնադրվել է 1926 թ. Փարիզում և գործել մինչ 1930 թ.: Այն 1927 թ. ցուցահանդես է կազմակերպում Փարիզի «Ժորժ Պոտի» պատկերասրահում (Galeries Georges Petit), 1928 թ.՝ Բոյուսելում, ապա 1929 թ.՝ Անտվերպենում, 1930 թ.՝ կրկին Փարիզի «Ժորժ Պոտի» պատկերասրահում:

³ Միությունը կազմակերպում էր դասախոսություններ ու ցուցահանդեսներ. առաջինը՝ 1931–ին Սևրի Մուրատ–Ռաֆայելյան վարժարանում, ապա՝ 1933, 1934, 1936, 1945 թվականներին: Միությունը չի գործել 1939–1945 թթ.:

⁴ Օրինակ, 1916 թ. հունիսի 18–ին Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով վնասված Ֆրանսիացի արվեստագետներին օժանդակող հոգատար կոմիտեի

1947 թվականին՝ Մեծ հայրենադարձության օրերին, իրականություն է դառնում տաղանդավոր արվեստագետի երազանքը. նա տեղափոխվում է Հայաստան: 1947 թ. դառնում է Հայաստանի նկարիչների միության անդամ, 1951-ից՝ նախագահության անդամ: 1948-1951 թթ. դասավանդել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: 1948 թ. Երևանում ունեցել է անհատական ցուցահանդես: Այս համառոտ թվարկումներն անվանի արվեստագետի հասարակական-ազգանպաստ գործունեության մի մասն են միայն: Իր ստեղծագործական գործունեության ընթացքում Շիշմանյանը թողել է բազմաթիվ կտավներ, որոնց մի մասն այսօր զարդարում են Հայաստանի ազգային պատկերասրահի ցուցասրահները:

Շիշմանյանի ստեղծագործությունները կարելի է բաժանել երկու մասի՝ 1908-1947 թթ.՝ Փարիզյան շրջան, և 1947-1956 թթ.՝ Խորհրդային շրջան: Ի դեպ, դրանք տարբերվում են իրենց ոճապատկերային մտածելակերպով:

Արվեստագետը ֆրանսիական շրջանի բնանկարներում հիանալի զգացել է իր երկրորդ հայրենիքին բնորոշ կոլորիտը: Ջուսպ գունաշարը կամերային թափանցիկ կտավներին հաղորդում է քնարական տրամադրություն: Ակամայից հիշում են հայ դասական նկարիչ Գաբրիել Գյուրջյանի խոսքերը. «Շիշմանյանը ստեղծեց բազմաթիվ գողտրիկ, ինտիմ, լիրիկական բնանկարներ՝ հմայիչ ու ներդաշնակ կոլորիտով: Նա ամբողջ հոգով սիրում է բնությունը: Այդ են վկայում նրա գունեղ, ջերմ զգացմունքներով համակված արժեքավոր գեղանկարները»⁵:

Շիշմանյանը կարողացավ ստեղծել իր ինքնատիպ ձեռագիրը՝ մասամբ հակված իմպրեսիոնիստական ընկալումներին: Հետագայում էլ՝ Խորհրդային շրջանում, նրա կտավներում միշտ զգացվել են իմպրեսիոնիստական միտումները՝ բնության գեղեցկության գովերգումը, արևի, լույսի, ստվերի հրաշագեղ խաղերը: «Արվեստի նորություններին ուշիուշով հետևելով՝ Շիշմանյանը երբեք զանազան «իզմերով» տարվող արվեստագետ չի եղել: Լինելով ռեալիստ-նկարիչ՝ միաժամանակ արդիական, ստեղծագործել է հոգու ներքին թելադրանքով, լիրիկ բանաստեղծի իր զգայուն խառնվածքով, առանց ուրիշներին հետևելու կամ նմանվելու ձգտման: Գույների հարցում, ուրիշ շատ նկարիչների նման, չափազանցության կողմնակից չէր, նկարչությունը գույների խաղ չէր համարում: Արվեստը նրա համար իր ներքին էությունը արտահայտող գեղեցիկ միջոց էր՝ գույների օգնությամբ, նրանց ներդաշնակ գործածությամբ», - գրում է նկարչի այրին՝ Ալիս Շիշմանյանը⁶:

Ինչպես վերևում ասվեց, Շիշմանյանը բազմաբնույթ արվեստագետ էր: Նկարիչ-արվեստաբանը զբաղվել է նաև դեկորատիվ կատարումներով:

ձեռնարկների օգտին տեղի է ունեցել մի վիճակախաղ, որի համար գործեր են նվիրել փարիզաբնակ տասներկու հայ արվեստագետներ՝ 2. Ջաքարյան, Է. Շահին, Ա. Բաբայան-Կարբոնել, Տ. Փոլադ, Հ. Ալխազյան, Ա. Տեր-Մարտիկյան, Կ. Աղամյան, Տ. Եսայան, Ա. Շաբանյան, Շ. Երիցյան, Տ. Կարապետյան և, իհարկե, Ռ. Շիշմանյան (այդ մասին տե՛ս **Շիշմանյան Ռ.**, Էդգար Շահին (1874-1947). կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, 1956):

⁵ **Գյուրջյան Գ.**, Ռաֆայել Շիշմանյանի ստեղծագործական երեկոն, Երևան, 1957, հ. 2:

⁶ **Ալիս Շիշմանյան**, Հայրենիքի և արվեստի սիրով, «Գարուն», 1980, հ. 9, էջ 77:

Ֆրանսիացի գիտնական և տեսաբան Ֆրեդերիկ Մակլերը գրում է. «Շիշմանյանը, բացի դիմանկարից, նատյուրմորտից և բնանկարից, մասնագիտացած է նաև դեկորատիվ արվեստի մեջ՝ հայկական որմնանկարչության և մանրանկարչության գծով: Նա իր պարտքն է համարել վերակենդանացնել ու կատարելագործել հայկական զարդարվեստը: Շիշմանյանի համար դեկորացիան նույնպես կարևոր ճյուղ է: Օրինակ վերցնելով Լեոնարդո դա Վինչիից, Ալբրեխտ Դյուրերից և ուրիշ վարպետներից՝ նա դեկորատիվ արվեստը հարստացրել է իր անհատական ընկալումներով»⁷:

Շիշմանյանից մեզ հայտնի որմնանկարչական աշխատանքները կատարվել են 1920-1930-ական թվականներին՝ Փարիզի Նուբարյան գրադարանի կենտրոնական սրահում և Փարիզի հայ ուսանողների տան գրադարան-ընթերցասրահում: Երկու մեծածավալ սրահներում լավագույնս դրսևորվում են Շիշմանյանի համարձակ մտահղացումները, ազգային զգացողությունն ու գեղարվեստական ճաշակը: Դրանցում, հարազատ մնալով ազգային օրնամենտիկայի կանոններին, Շիշմանյանը նրբորեն ներմուծում է իրենը՝ ստեղծագործական այն տարրը, որոնցով կատարված որմնանկարները ներդաշնակվում են շրջակա միջավայրին: Այդ առիթով արվեստագետի ինքնակենսագրությունում հանդիպում ենք նրա խոստովանությանը. «Ձարդարվեստի բնագավառում աշխատել եմ վերապրեցնել հայ ոճը, նրան տալով որոշ արդիական ոգի և ինքնատիպություն... Հայ ոճով եմ կատարել նույնպես, Փարիզում՝ «Հայ ուսանողների տան», ինչպես նաև «Նուբարյան» գաղութահայ մեծ գրադարանի որմնանկարները»⁸:

Մեծ է Փարիզի Նուբարյան գրադարանի դերը Սփյուռքի հայապահպանման գործում: Այն հիմնադրել է Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիր Պողոս Նուբարը⁹: Գրադարանի գրքերի մեծ մասը Փարիզ է հասել 1920 թվականին՝ Պոլսի հայ մտավորականների նվիրաբերությունների միջոցով: Այսօր գրադարանն ունի ավելի քան 43.000 տպագիր գիրք և 1500 անուն թերթեր, հանդեսներ, բազմաթիվ արխիվային նյութեր, նաև ցեղասպանության վերաբերյալ եզակի լուսանկարներ: Գրադարանում պահվում են Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի արխիվները, որոնք բավական հարուստ նյութ են պարունակում Հայ դատի և հատուցման պահանջների համար: Ինչպես նշում է Փարիզի Նուբարյան գրադարանի տնօրեն, պատմաբան Բորիս Աճեմյանը, «Այս գրադարանին դերը ո՛չ միայն ժառանգութիւնը պահպանել է, այլ նաև՝ գործել իբրև գիտական հաստա-

⁷ **Frédéric Macler**, *La France et l'Arménie, à travers l'Art et l'Histoire*, Paris, Imprimerie H. Turabian, 1917, p. 55:

⁸ Նկարիչ Շիշմանյան (Ռաֆայել Մարտիրոսի), ինքնակենսագրություն, ՀԱՊ, ինվ. 2420, էջ 3:

⁹ Պողոս Նուբար Փաշա (1851-1930). հայ բարերար և քաղաքական գործիչ, Եգիպտոսի վարչապետ Նուբար Փաշայի որդին, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիրներից և առաջին նախագահ:

տուփին... Ան հայկական Սփիւռքի մէջ այնպիսի ժառանգութիւն մըն է, որ կարելի է ազգային արժէք նկատել»¹⁰:

Փարիզի Նուբարյան գրադարանում Շիշմանյանը փորձում է իր մտահղացումներն իրականացնել գեղարվեստագեղագիտական համարձակ ընդհանրացման ավելի լավատեսական ընկալմամբ՝ զարդարվեստի միջոցով հասնել ազգայինի խոհախորհրդաբանական տրամադրության արտահայտմանը: Առաջին պլան է դրվում զարդի սեմանտիկ բովանդակությունը. որոշ դեպքերում զարդն ընկալվում է որպես թեմատիկ պատկերի հոմանիշ¹¹: Ի դեպ, «Հայկազյան բառարանում» զարդի առաջին իմաստը համարվել է վայելուչ հորինվածքը, աչքի համար գրավիչ գաղտնախորհուրդը: Որոշ դեպքերում զարդն իմաստավորել է նաև աշխարհ, տիեզերք, լույս, առավել ևս այն ներկայացվում է որպես պատկերատարածային նկարազարդման պարագա:

Այդ խնդիրների լուծման նկատառումով Շիշմանյանը իր իմացություններն ավելի խորացրեց հայկական մատենական արվեստի դաշտում, որի հնարավորությունը գոնե Ֆրանսիայում կար. նկատի ունենք մասնավոր հավաքածուներում հայկական հինավուրց պատկերազարդ մատյանները և, մանավանդ, մեծանուն հայագետ Ֆրեդերիկ Մակլերի հայտնի աշխատությունը¹²:

Փարիզի Նուբարյան գրադարանում Շիշմանյանն ընտրեց զարդի ֆրիզային ժապավենաձև ծավալումը՝ որմերի վերին և ներքևի հատվածներում: Վերին ֆրիզը ծածկված է լուսոսի ոճավորված տերևների համաչափ դասավորություններով: Դրանց բաց կանաչ ընդհանուր գունավորումը հանգիստ ու խաղաղ մթնոլորտ է ստեղծում: Ընդ որում, որոշ ընդմիջումներով ֆրիզի վրա տեղադրված են գունագեղ ծաղկեփնջեր, որոնք աշխուժացնում են կանաչի ու կապտավունի հավասարազոր շերտը (ակամայից հիշում ես մեր հինավուրց բերդերի պարիսպների վրա հատվածաբար «դրված» փոքրիկ ատամնավոր աշտարակները):

Որմերի ներքևի մասի ֆրիզային շերտը շատ ավելի լայն է: Դրանք կազմված են դեղնավուն քառանկյուն շրջանակներից, որոնց հյուսվածքների ներսում տեղադրված են գունագեղ (կարմիր, կանաչ) եռատերևիկներ:

Ամենաուշագրավ մոտիվն այս սրահում ճակատային պատերի վրա նկարված, հատակից վեր ձգվող սլացիկ սոսիներն են: Դրանք շատ նման են մեր ձեռագրերի անվանաթերթերի եզրերին պատկերված խոշոր լուսանցքազարդերին, միայն թե Շիշմանյանը նման մոտիվներով միանգամայն ուրույն հյուսվածք է ստեղծել՝ կարծես դիտողին ցույց տալով, թե ինչպես կարող են օգտվել հին ձևերից՝ բոլորովին չկրկնելով այն: Ուշագրավ փաստի ենք հանդիպում գրող, թարգմանիչ և հասարակական գործիչ Վահան Մալեգյանի

¹⁰ Հարցազրոյց՝ պատմաբան, ՀԲԸՄ-ի Նուպարյան գրադարանի ասանդապահ Պորիս Աճէմեանի հետ, «Նոր Յառաջ», 2017, յունիս 22, էջ 4:

¹¹ Այդ հարցերի շուրջ հանգամանակից խոսք կա արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի աշխատության մէջ (տե՛ս Սարգիս Պիճակ, Երևան, 1980, էջ 14-15):

¹² **Frédéric Macler**, *Miniatures arméniennes, vies du Christ, peintures ornementales*, X e au XVII e siècle, Paris, Geuthner. Année, 1913.

նամակում՝ ուղղված Պողոս Նուբարին: Այնտեղ կարդում ենք. «Փոքր պատվո սրահի հայկական ոճով զարդարանքը մի քանի ամիս է կատարում է հայ նկարիչ պարոն Շիշմանյանը, պարոն Էդգար Շահինի ղեկավարությամբ»¹³: Փաստորեն, Շիշմանյանը որմնանկարչական աշխատանքները կատարել է օֆորտի հայազգի մեծանուն վարպետ Էդգար Շահինի անմիջական խորհուրդներով և հսկողությամբ:

Գեղարվեստական ձևավորման այլ սկզբունք է օգտագործված Փարիզի հայ ուսանողների տան սրահում: Ուսանողական տունը կրկին հիմնադրել Պողոս Նուբար փաշան իր կնոջ՝ Մարի Նուբարի հիշատակին 1929 թվականին, իսկ շենքի նախագծումը կատարել է ականավոր ճարտարապետ Լևոն Նաֆիլյանը (1877-1937): Թեև այն արդեն 1920 թ. Ֆրանսիայի իշխանության կողմից որպես միջազգային ուսանողության համար համալսարանական նստավայրի նախագիծ արդեն կար, սակայն 1927 թ. Նուբար Փաշան նվիրաբերեց գումարներ՝ հայ ուսանողների համար բնակելի շենք կառուցելու: Շենքի բացումը և գործընթացը տեղի են ունեցել 1930 թ. դեկտեմբերի 16-ին: Պողոս Նուբարի բարերարությունն ի սկզբանե ծառայում էր այն գաղափարին, որ ցեղասպանությունից փրկված հայ երիտասարդները հնարավորություն ունենան ուսանելու Փարիզի համալսարաններում: Ահա և Փարիզի հայ ուսանողների տան շուրջ 30 քառակուսի տարածք ունեցող գրադարան-դահլիճում Շիշմանյանը 1931 թվականին կատարում է իր նկարագարումները:

Այստեղ բարձր գրապահարանները ծածկել են որմերի զգալի մասը, ուստի վարպետն ստիպված էր իր գործը կատարել վերին ազատ հատվածների պայմաններում և գտել է ճիշտ տարբերակը: Երկու մուտքերի դռների գլխավերևում ամենայն մանրամասնությամբ ու գեղեցկությամբ պատկերվել են ավետարանական խորանների շքեղ գլխազարդերը: Ձևավորման նման նախագիծը գալիս է հայկական ճարտարապետության սովորույթներից: Եկեղեցիների մեծ մասում՝ կենտրոնական մուտքի դռան վրա, եղել է կիսաշրջանաձև մեծ քար՝ տիմպան, որի վրա փորագրվել է քրիստոնեական գաղափարախոսության հանգուցային թեմա՝ «երրորդությունը» կամ «քավությունը»: Ահա Աղբակի Սբ Բարդուղեմիոս եկեղեցին, Նորավանքը և այլն, ինչպես պարզվում է՝ Շիշմանյանի մտահղացումը գալիս է մեր ազգային ավանդույթներից:

Ձախ կողմում կիսաշրջանաձև կամարների մի քանի ժապավենաձև շերտերը ծածկված են տարբեր զարդամոտիվներով՝ մանր, գույնզգույն քառանկյուններ, ոճավորված լայն տերևամոտիվներ և վերջապես՝ հայկական մատենական արվեստում առավել սիրված «շարժուն» ռոմբաձևերը: Կամարների վրա նստած են ավանդական թռչուններ, սակայն այնպիսի ոճավորմամբ, որպիսին նույնիսկ միջնադարյան ձեռագրերում հազվադեպ կարելի է հանդիպել:

¹³ Նուբարյան գրադարանի արխիվ, հ. BIB 6, Վահան Մալեգյանի նամակը ուղարկած Պողոս Նուբարին (ֆրանսերեն), 24 օգոստոս, 1928:



Նկ. 1. Փարիզի Նուբարյան գրադարանի սրահը



Նկ. 2. Փարիզի հայ ուսանողների տան սրահը

Աջ կողմի դռան վերևում քառանկյուն խորանագարդն է՝ երկհարկ դասավորությամբ: Գլխազարդի ներսում թույլ կապտականաչով հյուսված հինգ շրջանակներն են, որոնց ներսում կարմիր ծածկով մոտիվներ են: Հիրավի, նկարիչը մանրանկարների այս երկու գլխավոր զարդամոտիվների նպատակային տեղադրման և գույների օգտագործման շնորհիվ ստեղծել է հայկական ազգային ջերմ մթնոլորտ: Գլխազարդի վերևում երկու գեղեցիկ թռչուններ են, որոնք կտցահարում են իմաստության բույսը: Ոճավորված թռչուններ, որտեղ սովորաբար քթաղաղներ են լինում, շատ են նմանվում լորիկների: Ուշագրավ փաստ՝ հայկական որմնանկարչական արվեստում սակավադեպ հանդիպող մի երևույթ՝ Փարիզի հայ ուսանողների տան որմնանկարների զարդապատկերի մեջ տեսնում ենք արվեստագետի հայերեն և ֆրանսերեն ստորագրությունը և կատարման տարեթիվը՝ 1931: Վերջում մի կարևոր նկատառում. ուսումնակրթական բովանդակություն ունեցող այս սրահների գեղարվեստական ձևավորումները, ասել է թե՛ որմնանկարներն իրենց չափավոր ու զուսպ բնույթով կարծես թելադրել են կահույքի համապատասխան դասավորությունը: Դա Ռաֆայել Շիշմանյանի փայլուն տաղանդի արդյունքն է:

Եզրակացություններ

Սփյուռքում ստեղծագործած մի շարք արվեստագետներ, իրենց կամերային բնույթի աշխատանքներին զուգահեռ, զբաղվել են նաև որմնանկարչության բնագավառում: Նրանցից առավել ճանաչվածներից է Սարգիս Խաչատուրյանը: Վերջինիս որմնանկարչական աշխատանքների և դրանց վերականգնման գործերի մասին բավարար խոսք կա մասնագիտական գրականության մեջ: 2015 թվականին մեր հրատարակած «Հայազգի ծովանկարիչները» աշխատության մեջ թերևս առաջին անգամ խոսք կա ֆրանսահայ ծովանկարիչ Արսեն Շաբանյանի կողմից Փարիզի Սբ Հովհաննես եկեղեցում կատարված որմնանկարների մասին: Դրանք իրենց Աստվածաշնչյան թեմաներով նոր իրողություն են արվեստագետի արվեստում:

ФРЕСКИ РАФАЕЛА ШИШМАНЯНА

АРА АКОПЯН

Работы художника и искусствоведа Рафаела Шишманяна уже нашли отклик в профессиональной литературе. Однако фрески художника, за исключением отрывочных публикаций, все еще нуждаются в доскональном профессиональном анализе.

Данная статья посвящена фрескам Шишманяна, которые находятся в Библиотеке Нубарян в Париже, а также в парижском Доме армянских студентов. Фрески выполнены на основе канонов средневековой орнаментики. Однако художественное решение интерьера вышеупомянутых заведений при-

дает новизну данным работам Шишманяна, вызывая восхищение ценителей искусства.

Ключевые слова – фреска, библиотека, дом студентов, декоративный мотив, художник и искусствовед, французский период, цвет.

RAPHAEL SHISHMANYAN'S MURALS

ARA HAKOBYAN

The artist and art historian Raphael Shishmanyán's works have already resonated in professional literature, as distinct from his mural paintings, still needing a thorough professional investigation.

The paper studies Shishmanyán's murals, which are in the Paris Nubaryan Library and House of Armenian Students. Even though they are executed in line with the canons of medieval ornamentation, the artistic solution of the interior of the mentioned buildings attaches a flavour of novelty to Shishmanyán's works, invariably admired by art lovers.

Key words – fresco, Nubaryan Library, House of Armenian Students, decorative motif, artist and art historian, French period, color.

«УСПЕНИЕ БОГОРОДИЦЫ» В СРЕДНЕВЕКОВОМ ИСКУССТВЕ АРМЕНИИ И РУСИ

СЕЙРАНУШ МАНУКЯН*

Статья посвящена параллельным идентичным явлениям в армянском и русском искусстве, явлениям, которые не обусловлены взаимовлиянием, а отражают сходные процессы в развитии восточнохристианского искусства на достаточно отдаленных друг от друга территориях. В контексте изучения истоков и развития рассмотрены общие особенности иконографии «Успения Богородицы» в армянском и русском искусстве, а именно – иконографический извод этой сцены с эпизодом Наказания Софонии (Авфонии). Его появление было связано с тенденцией расширения и обогащения иконографических схем повествовательными и дидактическими элементами, с более свободным привлечением неканоничных апокрифических текстов в качестве источников иконографии.

Ключевые слова – иконография, «Успение Богородицы», Наказание Софонии, Армения, Русь, апокриф, параллельные идентичные явления.

Вступление

Наша статья посвящена параллельным идентичным явлениям в армянском и русском искусстве, явлениям, которые не обусловлены взаимовлиянием, а отражают сходные процессы в развитии восточнохристианского искусства на достаточно отдаленных друг от друга территориях. Мы рассмотрим общие особенности иконографии «Успения Богородицы» в армянском и русском искусстве, а именно – иконографический извод этой сцены с эпизодом Наказания Софонии (Авфонии)¹. Его появление было связано с тенденцией расширения и обогащения иконографических схем повествовательными и дидактическими элементами, с более свободным привлечением неканоничных текстов² в качестве источников иконографии.

«Успение Богородицы» в средневековом искусстве Армении и Руси

Сведений об «Успении Богоматери» в канонических Евангелиях нет. Иконография сцены «Успения Богоматери» полностью основывается на апокрифических источниках. Это – повествование «Об Успении Марии» (IV в., в

* Старший научный сотрудник отдела изобразительного искусства Института искусств НАН РА, кандидат искусствоведения, доцент Ереванского государственного университета, seyranushmanukyan@yahoo.com, статья представлена 30.09.2021, рецензирована 07.09.2021, принята к публикации 29.11.2021.

¹ Впервые к этой теме мы обратились в 2010 году, см.: Манукян С.С. Общие особенности иконографии сцены «Успения Богоматери» в армянском и русском искусстве // Международный симпозиум «Армения-Россия: диалог в пространстве художественной культуры», Москва, 2010, с. 24-25.

² Лазарев В. Русская средневековая живопись, Москва, 1970, с. 164-165.

трех версиях), «Слово Иоанна Богослова на Успение Богоматери» (ок. 550-580), свидетельства святителей Дионисия Ареопагита (Псевдо-Дионисия), Игнатия Богоносца, Омилии Иоанна Солунского (610-649) и другие³. Содержание армянских апокрифических текстов об Успении – «Видение Богородицы» и «Успение Богоматери ...от Никодима» – совпадает с греческими.

В византийском и русском искусстве, в православной традиции в целом, Успение входит в канонический ряд двенадцатых Праздников, каждая сцена которых изображается и в рукописях, и в иконах, и в монументальной живописи. В армянском искусстве состав Праздничного цикла не устойчив: в разные периоды и в разных школах он различен. «Успение Богородицы» до XIV в. встречается не часто, хотя упоминания о Празднике Успения в Армении сохранились с V в.⁴

Изображение Успения в армянском искусстве появляется очень рано, в нач. X в. – во фресках храма св. Креста на о-ве Ахтамар (915-921): сохранились фрагменты изображения зданий с двух сторон сцены и скорбящих женщин в окнах⁵. Следующий по времени памятник – фресковый ансамбль церкви Тиграна Оненца в Ани 1215 г.⁶ (илл. 1). Для него характерна канони-

Фасады двухъярусного здания городского театра Наикевани выполнены в формах ренессанса с элементами барочной архитектуры. Здание имеет сложную конфигурацию в плане, отражающую его внутреннюю планировку. Рисунок плана главного фасада определяется несколько выступающей вперед слегка скругленной центральной частью, акцентированной в нижнем ярусе тройной аркадой входных проемов и поднятым над ней портиком с колоннами, и боковыми пилонами, завершающимися капителями сложного ордера. Боковые ризалиты главного фасада придают зданию монументальность и еще больше акцентируют его центральную часть с порталом. Нижний ярус здания декорирован скромней, его украшением служит

¹² **Баева О.В.** Архитектура провинциальных театров России второй половины XIX века в региональном и глобальном пространстве культуры // *Искусствознание: наука, опыт, просвещение: сборник статей по материалам Международной научной конференции*, Москва, Государственный институт искусствознания, 2019, с. 284–292.

крупный прямоугольный и клинчатый руст, поддерживаемый рустованными лопатками во втором ярусе. Верхний ярус главного фасада декорирован значительно богаче, его украшают херувимы, картуши, орнамент. Полуциркульные окна нижнего и верхнего яруса украшены замковым камнем – излюбленный прием архитектора. Венчает здание шатровый купол, который, если судить по проекту, должен был сильнее возвышаться над центральной частью здания, но видимо в ходе строительных работ его высоту пришлось скорректировать. Архитектура остальных фасадов здания отличается от главного большей скромностью, но их оформление поддерживает его целостный образ.

Главный фасад повторяет форму зрительного зала и окружающих его вестибюля и фойе, располагавшиеся на другом конце здания вспомогательные помещения при сцене также читаются в объеме.

Заключение

Излюбленными приемами архитектора стали трехчастное или пятичастное вертикальное членение фасадов, осевая композиция, использование профилей и тяг. Во многих своих проектах он обращался к коридорной архитектурно-планировочной схеме. Помещения могли располагаться по одну сторону или по обе его стороны. Иногда архитектор применял смешанную систему планировки. Например, он использовал зальную планировочную систему, что было обычным в то время решением для особняков, в которых центром являлся большой зал для приемов.

Эти архитектурные приемы, безусловно, отсылают нас к его студенческим годам, проведенным в Санкт Петербурге: обращение к формам классических стилей, рустовка первых этажей зданий крупными прямоугольными плитами, стремление к ансамблевости в застройке. В итоге они способствовали окончательному сложению облика Нахичевани-на-Дону и отвечали столичным устремлениям образованных слоев города. Как и большинство архитекторов своего времени, Дурбах работал в стилистике эклектики, а преобладающими в его творчестве стали академические стили. Тонко чувствующий уникальность архитектурной среды зодчий следовал современным ему тенденциям архитектуры и использовал прогрессивные для своего времени планировочные решения.

ԴՈՆԻ ՆԱԽԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Ն.Ն. ԴՈՒՐԲԱԽԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՕԼԳԱ ԲԱԵՎԱ (ՌԴ, Դոնի Ռոստով)

Դոնի Նախիջևանի քաղաքային ճարտարապետ Ն.Ն. Դուրբախը, որի մասնագիտական գործունեությունը զարգացում ապրեց XIX-XX դարերի վերջին, համարվում է Կայսերական գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտների ներդրման վառ օրինակ Ռուսական կայսրության գավառական քաղաքների ճարտարապետական-քաղաքաշինական զարգացման և բարե-

կարգման գործում: Միաժամանակ, բնիկ նախիջևանցի ճարտարապետը նրբանկատորեն զգաց ու հասկացավ պատվիրատուների տրամադրություններն ու ցանկությունները, քաղաքային միջավայրի ճարտարապետական ու գեղարվեստական կարիքները: Նրա աշխատանքի շնորհիվ ձևավորվել է Դոնի Նախիջևանի ամբողջական տեսքը՝ կառուցվել են շուկայի և քաղաքային թատրոնի շենքերը, Մարիինյան քաղաքային հիվանդանոցը, մի քանի ուսումնական հաստատություններ, ունևոր քաղաքացիների առանձնատներ, ձևավորվել են քաղաքի կենտրոնական հրապարակները, Ալեքսանդր II-ի պատվին հիմնվել է քաղաքային այգին և կառուցվել այլ օբյեկտներ:

Հոդվածում քննարկվում է Ն.Ն. Դուրբախի ավանդը Դոնի Նախիջևանի ճարտարապետության մեջ և վերլուծվում ճարտարապետի ստեղծագործական մեթոդը:

Բանալի բաներ՝ Ն.Ն. Դուրբախ, Դոնի Նախիջևանի ճարտարապետություն, էլեկտիկա, քաղաքային թատրոն, Դոնի Նախիջևանի քաղաքային ճարտարապետ, կլասիցիզմի սկզբունքներ, խառը նախագծային համակարգ:

THE OEUVRE OF THE CITY ARCHITECT OF NAKHICHEVAN-ON-DON NIKOLAY DURBAKH

OLGA BAYEVA (Rostov-on-Don, RF)


The oeuvre of the city architect of Nakhichevan-on-Don Nikolay Durbakh (Nikoghos Durbakhyan), who worked at the turn of the 19th-20th centuries, is a vivid example of how graduates of the Saint-Petersburg Imperial Academy of Arts contributed to the architectural and town-planning activity and improvement of provincial cities of the Russian Empire. He was a Nakhichevan-on-Don native, hence he had a refined feeling and clear understanding of the customers' wishes and preferences, their architectural and artistic requirements to the city environment. Owing to his efforts, a holistic appearance of Nakhichevan-on-Don was formed: the buildings of City Market and City Theater, the Mariinsky City Hospital, several educational institutions, mansions for well-to-do citizens were built, as well as the central squares of the city redesigned, the municipal park in honor of Alexander the Second founded, a number of other projects accomplished.

The article considers N. Durbakh's contribution to the architecture of Nakhichevan-on-Don and analyzes the architect's creative method.

Key words – N. Durbakh, architecture of Nakhichevan-on-Don, eclecticism, City Theater, city architect of Nakhichevan-on-Don, principles of classicism, mixed planning system.

БИОГРАФИИ ИСКУССТВОВЕДОВ В ДОКУМЕНТАХ

ГАРЕГИН ЛЕВОНЯН*



Гарегин Левонян – видный филолог, искусствовед, первый заслуженный деятель искусств ССР Армении, редактор, историк армянской периодической печати, библиограф, преподаватель, профессор, оставил неизгладимый след в истории армянской культуры и науки. Родился 24 октября (5 ноября) 1872 г. в Александрополе (Гюмри) в семье известного народного певца (ашуга) Дживани. С юношеских лет занимался художественно-литературной, затем – редакционно-издательской деятельностью. Активно сотрудничал в газетах и журналах своего времени. В 1908 г. в Тифлисе издавал и редактировал художественно-литературный журнал «Гехарвест» (Искусство), который с перерывами издавался до 1921 г.

В 1910-1911 гг. Г. Левонян преподавал рисование в Нерсесяновской семинарии. В 1911-1915 гг. являлся директором художественных курсов в Тифлисе. С начала 1920-х годов он преподавал в учебных заведениях Грузии и Армении.

С 1903 по 1907 г. Г. Левонян был членом социал-демократической партии «Гнчак» в Вагаршапате.

Круг литературно-художественных и научных интересов Г. Левоняна очень широк. Он охватывает историю искусства (музыка, живопись, скульп-

* Ընդունվել է տպագրության 29.11.2021:

тура, архитектура), историю армянской книги и книгопечатания, издательского дела и др. Его перу принадлежит ряд ценных исследований. Среди них: «Армянские ашуги» (1892), «История армянской журналистики» (1895), «Венецианские мхитаристы» (1901), «Культурная роль армян в Турции» (1917), «О преобразовании армянского типографического шрифта», (1927), «Армянские народные и ашугские песни и их взаимовлияния», (1930), «Жизнь и творчество знаменитого ашуга Саят-Нова» (1931), «Шота Руставели и его герои в изобразительном искусстве», «Полный каталог армянских периодических изданий» (1794-1934)» (1934), «Армянская культура в период эпоса Давид Сасунский» (1939), «Ашуги и их искусство» (1944), «История армянской книги» (1944), «Библиография по истории армянского искусства» (1944), «Армянские народные музыкальные инструменты» (1904), «Введение в историю армянского искусства» (1913), «Об армянской древней архитектуре» (1917), «О храме VII века Звартноц» (1926), «Скульптура в древней Армении» (1937), «Овнатаняны в истории армянской живописи» (1938), «Языческий храм I века Гарни» (1938), «Знаменитый архитектор X века Трдат» (1941), «Театр в исторической Армении» (1941), «Альбом армянских исторических и этнографических костюмов» (1944), «История армянского хореографического искусства» (1944), «Из истории армянской музыки» (1945) и др.

Г. Левонян – автор учебников «Образцы по черчению», 3 вып. (1907), «Образцы по армянскому чистописанию», 3 вып. (1908), «Геометрическое черчение» (1909), «Учебник по линейной перспективе» (1910). Г. Левонян занимался также переводческой деятельностью – с армянского на русский им был переведен рассказ Нардоса «Анна Сароян», а с русского на армянский – «Плоды просвещения» Льва Толстого (1936). После его смерти вышли в свет работы «Армянская книга и искусство печатания (исторический обзор с начала до 20-го века)» (1958), «Воспоминания» (1959) и «Сочинения» (1963).

Академик Рубен Зарян в очерке о Левоняне писал: «Образ Гарегина Левоняна редкий. Сейчас, например, в нашей культурной жизни мы не имеем такой [личности], которая хоть частично напомнит Левоняна, и никто не удивляется, что сегодня его личность и дело и, особенно, издававшийся им «Гехарвест» удостоиваются внимания молодых филологов.

...К личности и делам [Г. Левоняна] не остался равнодушным ни один армянский поэт и литературовед, ни один армянский художник, искусствовед, ни один архитектор или артист, ни один музыкант и музыковед» (**Рубен Зарян. Перед закатом. Воспоминания. Ереван, 1990, с. 442, на арм. яз.**)

Гарегин Левонян умер 28 сентября 1947 г. в Ереване

Ниже впервые публикуются автобиография Гарегина Левоняна и характеристика Г. Левоняна, данная академиком Мкртычем Нерсисяном.

СТЕПАН ГАРИБДЖАНЫН
Кандидат исторических наук

Автобиография Гарегина Дживановича Левоняна

Родился в 1872 г. в Александрополе (Ленинакан), в семье ашуга. Начальное и среднее образование получил в местном армянском и русском училищах, после окончания которых некоторое время занимал должность заведующего библиотекой. Параллельно занимался литературой: мои статьи и корреспонденции печатались в тифлисских армянских газетах.

В 1896 г. я переехал в Москву для получения художественного образования. В 1897 г. поехал в Петербург и поступил в художественную мастерскую академика Л.Е. Дмитриева-Кавказского, а со следующего года я был принят в Академию художеств в гравюрную мастерскую профессора В.В. Моте. В 1902 г. по окончании образования вернулся на Кавказ и был назначен преподавателем в Эчмиадзинской духовной академии и в лицеях той же академии читал лекции по истории искусств.

В 1906 г. я поехал в Германию и в Лейпциге поступил в полиграфическую фирму Зеемана для практики по ксилографии. В 1907 г. я в Тифлисе открыл художественную школу (курсы) для подготовки учителей по рисованию. Курсы эти продолжались до 1912 г. С 1908 г. я в Тифлисе издавал и редактировал художественно-литературный журнал на армянском языке «Гехарвест» (Искусство), который с перерывом выходил до 1921 г. В 1912-13 годах я путешествовал по Западной Европе для ознакомления с оригиналами великих мастеров кисти и вообще художественными сокровищами материальной культуры. В течение 16 месяцев я побывал во Франции, Швеции, Германии, Австрии, Италии, Швейцарии, Финляндии, Англии, Бельгии, Голландии и через Варшаву-Москву вернулся на Кавказ.

До первой мировой войны, как и до Великой Октябрьской революции я проживал в Тифлисе, занимаясь литературным трудом: изданием журнала, участвовал [с]графическими работами на художественных выставках, долгие годы вел параллельно не общественную работу в редакционной коллегии Арм[янского] этнографического, в жюри Арм[янского] драматического, в правлении Арм[янского] издательского и других обществах.

Со дня установления в Грузии Советской власти я всецело посвятил себя упрочению и внедрению идей новой власти в массах, – читал доступные лекции в Народном университете, в Авлабарском театре и писал статьи в армянских газетах. В 1922 г. в Тбилиси организовался Дом армянского искусства («Айартун»), куда входили союзы писателей, художников, композиторов и артистов. Я был избран членом совета Айартуна и секретарем Союза художников, также советом был назначен лектором на драматических курсах.

В 1925 г. я переехал в Ереван по приглашению Наркомпроса на должность директора ИЗО[бразительного] училища. Так как мне были поручены другие срочные работы, поэтому я отказался от этой должности.

В том же году я был назначен членом Комитета по охране древних памятников АрмССР. В 1926 г. был избран действительным членом Института науки и искусств и членом бюро Центрального комитета краеведения Армении.

С 1927 по 1933 г. я занимал должность зав[едующего] художественным отделом Арм[янского] госиздательства. В том же году был избран членом правления, затем и председателем Общества художников Армении.

В 1932 г. было отмечено 40-летие моей литературно-художественной деятельности и правительством мне было присвоено звание заслуженного деятеля искусств с назначением персональной пенсии.

С 1933 по 1935 г. я работал в редакции Арм[янской] советской энциклопедии в качестве ученого секретаря отдела литературы и искусств.

С 1938 по 1941 г. читал лекции по истории искусств в Педагогическом институте, а с 1940 г. – в Госуд[арственном] университете.

С 1939 г. в связи с декадой армянского искусства в Москве я был награжден Почетной грамотой Верховного совета АрмССР.

В настоящее время я состою членом Ученого совета институтов литературы и истории АН АрмССР, членом К[омитета] по охране истор[ических] памятников Армении, членом Союза советских писателей и Союза советских художников и членом Учен[ого] совета Госуд[арственного] истор[ического] музея.

Г. Левонян. [Подпись].

Архив Академии наук Армянской ССР. Личное дело Гарегина Левоняна. ф. 1, оп. 1, д. 1587, л. 3-3об. Подлинник. Машинопись.

Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի՝ Գարեգին Լևոնյանին տրված բնութագիրը

5 հուլիսի 1945 թ.

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գ. Լևոնյանը հայ գրականության մեջ հայտնի է իր բեղուն և բազմակողմանի աշխատանքներով: Հայ մամուլի, աշուղների, ճարտարապետության մասին նա ունի մի շարք կապիտալ աշխատություններ, որոնցից շատերը եզակի են իրենց տեսակի մեջ:

Դեռ 1895 թվին նա իր վրա բևեռեց հայ հասարակության ուշադրությունը իր մինչև այսօր չգերազանցված «Հայ մամուլի պատմության» սովոր հատորով, որն իր ժամանակին արժանացավ գրական մրցանակի: 1892 թվից սկսած մինչև այսօր Գ. Լևոնյանը մնում է հայ գրական այն միակ դեմքը, որն այնքան համառ և հետևողականորեն զբաղվում է հայ աշուղների գործերի ուսումնասիրությամբ:

Հայ գիրքը և տպագրությունը հանձին նրա ունի իր բարեխիղճ ուսումնասիրողը: Գ. Լևոնյանի գործունեության կենտրոնը կազմել և կազմում է հայ կերպարվեստի ուսումնասիրությունը: Մինչև այժմ էլ հազիվ թե գտնվի կերպարվեստի հարցերով զբաղվող մի հետազոտող, որն իր ուսումնասիրությունների ընթացքում կարիք չզգա օգտվելու նրա աշխատություններից: Նա մեկն է հայ արվեստի պատմության պիոներներից և կարկառուն դեմքերից: Լևոնյանի գրչին են պատկանում մի քանի տասնյակ գրքեր և գրական ու բանասիրական հոդվածներ, որոնք անկասկած կման որպես մնայուն ժառանգություն հայ գիտական գրականության մեջ: Գ. Լևոնյանի ջանքերով լույս է տեսել հայտնի «Գեղարվեստ» հանդեսը:

Գ. Լևոնյանը գործում է հայ գրական ասպարեզի վրա 1892 թվից սկսած և շարունակում է իր եռանդուն աշխատանքը նաև այժմ: Լևոնյանն իր գրական վաս-

տակի համար Սովետական Հայաստանի կառավարությունից ստացել է արվեստի վաստակավոր գործչի կոչում:


Գ. Լևոնյանը ակտիվորեն մասնակցում է Ինստիտուտի հասարակական-քաղաքական կյանքին: Նա միանգամայն արժանի է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի անդամ-թղթակցի կոչմանը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնակատար՝ Մ. Ներսիսյան

Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի արխիվ, Գարեգին Լևոնյանի անձնական գործը, ֆ. 1, ց. 1, գ. 1587

УДК : 929:72(470) Токарский

НИКОЛАЙ ТОКАРСКИЙ



Крупный ученый-искусствовед, историк архитектуры, археолог, кандидат исторических наук, доктор искусствоведения, заслуженный деятель искусств Армении, первый лауреат премии имени Тороса Тораманяна Николай Михайлович Токарский на протяжении многих десятилетий плодотворно занимался исследованием богатого архитектурного наследия армянского народа. Родился 6 (18) декабря 1892 г. в Санкт-Петербурге в семье инженера-служащего. Высшее образование получил на архитектурном факультете Института гражданских инженеров по специальности инженер-строитель (архитектор). В июле-августе 1909 г. юнгой на пароходе Северного пароходного общества г. Одессы побывал в Турции и Египте, а в августе-сентябре 1913 г. – с туристической поездкой в Германии, Франции, Швейцарии, Италии, Австрии.

В 1914-1915 гг. Н. Токарский был практикантом на постройках, вольнонаемным санитаром на Кавказском фронте, исполняющим обязанности архитектора в экспедиции Российской академии наук в Ани под руководством Н.Я. Марра, младшим и старшим техником на изысканиях и постройке Батум-Трапезундской железной дороги, исполняющим обязанности младшего инженера на изысканиях Семиреченской железной дороги (Турксіб), начальником партии изысканий в Шереховическом районе бывшей Новгородской губернии. В 1921-1931 гг. являлся научно-техническим, младшим и старшим научным сотрудником Государственной академии истории материальной культуры. В 1923 г. с научной целью был командирован в Армению, в 1924 г. в качестве заместителя начальника экспедиции получил приглашение участвовать в археологических раскопках Ольвии на северном берегу Черного моря под руководством известного ученого, члена-корреспондента Российской академии наук, профессора Петроградского университета Б.В. Фармаковского.

С 1921 по 1934 гг. Н. Токарский по совместительству являлся научным сотрудником и научным руководителем группы Центрального научно-исследовательского института железнодорожного транспорта, начальником экспедиции Государственного Эрмитажа и Института истории культуры ССР Армении в Анберд и Двин, сотрудником экспедиции в Колагран, в 1935-1938 гг. - старшим научным сотрудником Гос. Эрмитажа. В 1935 г. участвовал в качестве действительного члена в работах III Иранского международного конгресса, в 1936-1938 гг. был заместителем начальника экспедиции Гос. Эрмитажа в Анберд под руководством академика Иосифа Орбели, в 1937 г. в Армении принял участие в реставрационных работах Комитета охраны исторических памятников, в экспедиции для раскопок в Двине, в 1938-1939 гг. исполнял обязанности старшего научного сотрудника Института истории материальной культуры АН СССР.

С начала 1939 г. был откомандирован Академией наук в распоряжение Управления по делам искусств при Совнаркоме Армянской ССР для работ по подготовке юбилея эпоса «Давид Сасунский» и декады армянского искусства в Москве. Указом Президиума Верховного совета СССР от 4 ноября 1939 г. был награжден орденом «Знак Почета». С 1 декабря 1939 г. по 21 апреля 1941 г. являлся старшим научным сотрудником Государственного Эрмитажа в Ленинграде, а в 1941-1945 гг. – заместителем председателя Комитета по охране исторических памятников Армении. В эти годы Н. Токарский подготовил к печати свой основной труд «Архитектура Древней Армении» (1946), переработанный и переизданный в 1961 г. За этот труд – первый опыт изложения истории армянской архитектуры, ему была присуждена степень доктора искусствоведения (1962). Отметим, что еще в 1938 г., 28 июня, на заседании Ученого совета Ленинградского государственного университета Токарский был утвержден в ученой степени кандидата исторических наук без защиты диссертации.

С 1 июня 1944 г. по 1 ноября 1946 г. Токарский работал старшим научным сотрудником Института истории Академии наук Армянской ССР. После

переезда в 1951 г. в Ленинград он продолжал заниматься исследовательской деятельностью – издал книгу «По страницам истории армянской архитектуры» (Ереван, 1973), а спустя 11 лет после его смерти был опубликован ценный труд «Из истории средневекового строительства в Тайкском княжестве» (1988).

Николай Токарский умер 20 декабря 1977 г. в Ленинграде.

СТЕПАН ГАРИБДЖАНЫН

Кандидат исторических наук

Ниже впервые публикуются характеристики, данные Н. М. Токарскому академиком Иосифом Орбели и заместителем директора Государственного Эрмитажа Тимофеевым.

Характеристика Николая Токарского, данная Иосифом Орбели

26 июня 1938 г.
г. Ленинград

Николай Михайлович Токарский является специалистом в области истории архитектуры Средневекового Кавказа и может служить прекрасным образцом целесообразности сочетания в одном лице качеств инженера – строителя и археолога.

Занятия его историей архитектуры и археологией начались в 1916 году, когда он доставил Н.Я. Марру чрезвычайно ценный материал – результаты своих наблюдений над архитектурными памятниками с театра военных действий в Турецкой Армении.

Ряд лет, проведенных им в аудитории Н.Я. Марра и в тесном научном общении с ним (Марр его высоко ценил) и со мною определил точнее круг его научных интересов, а участие в раскопках двух наиболее авторитетных советских археологов, изучавших древние города – Марра и Фармаковского, выработало в нем качества первоклассного специалиста по раскопкам городов и дало ему возможность впоследствии руководить археологическими экспедициями.

Применение технических приемов в исследовании памятников архитектуры привело не только к таким ценным результатам, как точное установление древнеармянской линейной меры, равнявшейся, как стало известно, 10 см, но и к выяснению ряда других точных данных, служащих критерием при изучении истории архитектуры на Востоке.

Его обширная работа над памятниками типа Рипсимэ (Армения) и над строительством, связанным с именем Нерсеса Строителя (Армения и Грузия), является ценным вкладом в науку.

С другой стороны, Токарский оказал неоценимую услугу археологической науке и историкам архитектуры, применив впервые стереофотограмметрический метод обмеров архитектурных памятников и археологических

объектов и внеся ряд уточнений и технических усовершенствований в использование стереофотограмметрической аппаратуры.

Внимательное изучение письменных первоисточников по истории Армении обеспечило ему одно из первых мест в ряду историков культуры Кавказа.

Читавшиеся Н.М. Токарским лекции и проводившиеся им занятия с молодыми научными сотрудниками и аспирантами показали его с лучшей стороны и как преподавателя.

Все эти работы дают, по моему убеждению, полное основание к присуждению Н.М. Токарскому степени кандидата исторических наук, как археологу и историку искусства и делают его чрезвычайно ценным специалистом.

Академик Орбели

Архив Академии наук Армянской ССР. Личное дело Н.М. Токарского, ф. 1, оп. 1, д. 1234, л. 6–6. об. Заверенная копия. Машинопись

Характеристика Николая Токарского, данная заместителем директора Государственного Эрмитажа Тимофеевым

27 января 1941 г.
г. Ленинград

Николай Михайлович Токарский, кандидат в члены ВКП(б), старший научный сотрудник, кандидат исторических наук, в Государственном Эрмитаже работает с 1935 года.

Крупный специалист по истории архитектуры и археологии Кавказа. Своими работами в этой области – свыше двадцати лет, сделал целый ряд открытий, обогативших эти отрасли знания.

Во втором полугодии 1938 года был командирован Эрмитажем на полтора года в распоряжение Управления по делам искусств АрмССР для участия в подготовке празднования 1000-летия армянского народного эпоса «Давид Сасунский».

По поручению руководящих органов АрмССР тов. Токарский принимал участие в реконструкции исторического музея и в художественном оформлении новых исторических постановок, показанных на декаде в Москве в октябре 1939 года, за что был награжден высшей наградой «Знак Почета». Наряду с производственной работой тов. Токарский принимает активное участие в общественной работе.

Настоящая характеристика дана для представления в Военный комиссариат.

Заместитель директора Государственного Эрмитажа Тимофеев

Архив Академии наук Армянской ССР. Личное дело Н.М. Токарского, ф. 1, оп. 1, д. 1234, л. 7. Заверенная копия. Машинопись

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ՀՏԴ : 929:78(479.25) Արևշատյան

ԱՆՆԱ ՍԵՆԻ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ*



Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Սենի Արևշատյանի ծննդյան հոբելյանը:

Ծնվել է 1951 թ. նոյեմբերի 7-ին Երևանում՝ անվանի փիլիսոփա, պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի երկարամյա տնօրեն, Երևանի պատվավոր քաղաքացի, Փիլիսոփայական միջազգային ակադեմիայի իսկական անդամ Սեն Արևշատյանի և գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Քնարիկ Տեր-Դավթյանի ընտանիքում:

Ավարտելով Երևանի Պ.Ի. Զայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցը՝ Ա. Արևշատյանը 1970-ին ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետը (Ռաֆայել Ստեփանյանի մասնագիտական դասարան), որի երաժշտագիտության բաժինը 1975-ին ավարտում է գերազանցությամբ՝ ստանալով «երաժշտագետի» որակավորում:

Ի դեպ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան բախտորոշ նշանակություն ունեցավ Ա. Արևշատյանի ոչ միայն հետագա գիտաստեղծագործական, այլև անձնական կյանքում: Այստեղ է նա գտնում իր «երկրորդ կեսին»՝ համակուրսեցուն, կոմպոզիտոր, հետագայում հայ կոմպոզիտորական արվեստի տաղանդաշատ ներկայացուցիչներից մեկին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Երվանդ Երկանյանին՝ դառնալով նրա ստեղծագործական ներշնչանքի աղբյուրն ու ժամանակակից հայ կոմպոզիտորական արվեստի հանդեպ պահպանելով գիտական հարատև հետաքրքրությունը:

Ա. Արևշատյանը 1976 թ. նոյեմբերի 16-ին աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ սկզբում որպես լաբորանտ (1976-1980), ապա՝ կրտսեր գիտաշխատող (1980-1986): ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ են կապվում երաժշտագետի գիտաստեղծագործական կյանքի ավելի

* Ընդունվել է տպագրության 29.11.2021:

քան չորս տասնամյակները: Եվ միանգամայն տրամաբանական էր, որ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման կեսդարյա հոբելյանի կապակցությամբ 2008-ին Ա. Արևշատյանը պարգևատրվեց ՀՀ ԳԱԱ վաստակագրով, որը, հընթացս հոբելյանական հանդիսավոր նիստի, նրան հանձնեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Ա. Արևշատյանը 1986-ին պաշտպանում է թեկնածուական թեզ՝ ««Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան» թեմայով (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր Նիկողոս Թահմիզյան), և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նույն թվականին նա հաստատվում է գիտաշխատողի պաշտոնում, իսկ 1992-2005 թթ. ղեկավարում «Հայ միջնադարյան հոգևոր երաժշտության հուշարձաններ» թեմատիկ խումբը: Նա 1999-ին հաստատվում է ավագ գիտաշխատողի պաշտոնում, իսկ 2000-ին պաշտպանում դոկտորական ատենախոսություն՝ «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնությունները» թեմայով, և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

2002-ից երաժշտագետը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող է: 2007-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ նրան շնորհվել է արվեստագիտության պրոֆեսորի գիտական կոչում:

Տարիներ շարունակ Ա. Արևշատյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ է:

Դիրիժոր Զավեն Վարդանյանի հետ, որն այդ տարիներին Հոգևոր երաժշտության կենտրոնի տնօրենն էր, Ա. Արևշատյանը 2002-ին հիմնադրել է «Մանրուսում» միջազգային երաժշտագիտական ժողովածուն՝ դառնալով նրա կազմողը և պատասխանատու խմբագիրը. մինչ օրս հրատարակվել են ժողովածուի չորս հատորները (2002, 2005, 2009, 2013):

Ա. Արևշատյանը 2006-ին ընտրվել է Բյուզանդագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEB) անդամ, Բյուզանդագիտական ուսումնասիրությունների Հայաստանի ազգային կոմիտեի գիտական քարտուղար (2006-2018): Նա Վիեննայի Մոնոդիայի ուսումնասիրման միջազգային ընկերության անդամ է (2012-ից), Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) անդամ (2015-ից):

2011-ին Ա. Արևշատյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

Լայն ու ընդգրկուն են երաժշտագետի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան հավասարապես զբաղեցրել են թե՛ հայ հոգևոր երաժշտության պատմության, տեսության և գեղագիտության հարցերը, թե՛ համեմատական երաժշտագիտության և կոմիտասագիտության ուսումնասիրման խնդիրները, անդրադարձել է նաև ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործության հետազոտությանը:

1991-ին Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսնում հայ միջնադարյան երաժշտության մասին Ա. Արևշատյանի անդրանիկ մենագրությունը՝ ««Մաշտոց» ժողովածուն որ-

պես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան» ուսումնասիրությունը¹, որտեղ լուսաբանված են հայ միջնադարյան հիմնական երաժշտական ժողովածուներից մեկի՝ «Մաշտոցի» պատմական զարգացման հանգամանքները, ընդգրկված հեղինակների ու ժանրերի շրջանակը: Աշխատության մեջ բացահայտվում են «Մաշտոցի» երաժշտական կազմի և յուրատեսակ երաժշտական շարքերի ձևակառուցման ներքին օրինաչափությունները:

Ծանրակշիռ է Ա. Արևշատյանի վաստակը հայ հոգևոր երաժշտության պատմության ուսումնասիրության գործում: Մի շարք հեղինակների և նրանց երկերի հեղինակային պատկանելության և ստեղծման հանգամանքների վիճահարույց խնդիրների ճշգրտմանն ու հետազոտմանն է նվիրված նրա գիտական ուսումնասիրությունների ստվար մասը: Այսպես, «Ո՞վ է «Ջորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակը»² հոդվածում Ա. Արևշատյանը վերջնականապես հաստատում է Գրիգոր Մագիստրոսի՝ այդ շարականի հեղինակ լինելու փաստը, իսկ «Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ)»³ և «L'identité de Step'annos Sywnec'i»⁴ հոդվածներում անդրադառնում հայագիտության մեջ վաղուց արժարժվող Ստեփանոս Սյունեցի Ա և Ստեփանոս Սյունեցի Բ շարականագիրներին՝ համոզիչ կերպով հարցը լուծելով հոգուտ VII և VIII դարերում ապրած Ստեփանոս Սյունեցու: Ուսումնասիրությունների այս շարքում կարևորվում է «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնության հեղինակի հարցի շուրջ. Անանիա Նարեկացի⁵, թե՞ Անանիա Շիրակացի» ուշագրավ հոդվածը⁵ և այլն:

XXI դարի առաջին տասնամյակում Ա. Արևշատյանի գիտական ուսումնասիրությունների առանցքն է դառնում հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության տեսության և գեղագիտության կենտրոնական երևույթներից մեկի՝ Ութձայն համակարգն արտացոլող միջնադարյան բնագրերի համակողմանի հետազոտությունը, որն իր դրսևորումն է ստացել մի շարք հոդվածներում և 2003-ին հրատարակված «Հայ միջնադարյան «ձայնից»

¹ Տե՛ս **Արևշատյան Աննա**, «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, 1991, 155 էջ, նկ., նոտաներ:

² Տե՛ս **Արևշատյան Աննա**, Ո՞վ է «Ջորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 106-115:

³ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), «Հայ արվեստի հարցեր», Գիրք 2, Երևան, 2008, էջ 23-34:

⁴ Տե՛ս **Arevshatyan Anna**, L'identité de Step'annos Sywnec'i, *Revue des Etudes Arméniennes* 30, 2005-2007, pp. 401-410.

⁵ Տե՛ս **Արևշատյան Աննա**, «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնության հեղինակի հարցի շուրջ. Անանիա Նարեկացի⁵, թե՞ Անանիա Շիրակացի, «Պատմաբանասիրական հանդես», 2014, № 1, էջ 131-136:

մեկնություններ» մենագրության մեջ⁶ դառնալով «կարևոր ավանդ հայ հոգևոր երգարվեստի ուսումնասիրման և ավելին՝ տեսական-գեղագիտական մտքի, միջնադարյան աշխարհայեցողական համակարգի առանձնահատկությունների հստակեցման գործում»⁷:

Այս ասպարեզում երաժշտագետ-միջնադարագետի գիտական երկարամյա պրպտումների հանրագումարը դարձավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2013-ին հրատարակված «Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում» աշխատասիրությունը՝ «հայ երաժշտական միջնադարագիտության կարևոր ձեռքբերումը»⁸ նվիրված հայ միջնադարյան հոգևոր մասնագիտացված երգարվեստում մշակված Ութձայն համակարգի հետ կապված երաժշտատեսական ուսմունքի ձևավորման, զարգացման և առանձնահատկությունների քննությանն ու լուսաբանմանը: Աշխատությունը «խիստ անհրաժեշտ և կարևոր քայլ է միջնադարյան արվեստների տեսությունն իմաստավորելու տեսակետից»⁹: Ձայնեղանակների ուսումնասիրմանը նվիրված սույն աշխատությունը կարևորվեց «հայ երաժշտության պատմական զարգացման մի հսկա տարածքի վերհանմամբ, որ գիտական մանրակրկիտ և ակադեմիական բարեխիղճ վերլուծության է տրվել»¹⁰:

ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով, ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը 2020 թ. լույս ընծայեց Ա. Արևշատյանի «Учение о гласах в средневековой Армении» մենագրությունը¹¹ (գիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր Լևոն Հակոբյան), որը հայերեն նույնանուն գրքի (2013) զգալիորեն ընդլայնված և վերամշակված տարբերակն է: Աշխատությունը նվիրված է միջնադարյան Հայաստանի հոգևոր երգարվեստում ձևավորված ձայնեղանակների մասին ուսմունքին, որն իր արտացոլումն է ստացել V-XVIII դարերի նշանավոր հայ մտածողների աշխատություններում: Այդ ուսմունքն ի մի է բերում միջնա-

⁶ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ (մենագրություն, քննական բնագրեր և աշխարհաբար թարգմանություններ), Երևան, 2003, 190 էջ:

⁷ **Նավոյան Մհեր**, Աննա Արևշատյանի «Հայ միջնադարյան «Ձայնից» մեկնություններ» ուսումնասիրությունը, «Էջմիածին», 2004, է-Ը, էջ 158:

⁸ **Նավոյան Մհեր**, Աննա Արևշատյան. Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, «Պատմաբանասիրական հանդես», 2014, №1, էջ 282:

⁹ Տե՛ս **Հովհաննիսյան Հենրիկ**, Կարծիք Աննա Արևշատյանի «Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում» աշխատության մասին, Ա. Արևշատյանի անձնական արխիվ:

¹⁰ **Մանսուրյան Տիգրան**, Կարծիք Աննա Արևշատյանի «Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում» աշխատության մասին, Ա. Արևշատյանի անձնական արխիվ:

¹¹ Տե՛ս **Аревшатын Анна**, Учение о гласах в средневековой Армении, Ереван, 2020, 282 с.

դարյան կանոնական մտածողության շրջանակներում բյուրեղացած երաժշտատեսական և գեղագիտական հասկացողություններն ու պատկերացումները: Պատմամշակութային լայն համատեքստում հեղինակը լուսաբանել է հայկական Ութնյան համակարգի զարգացումը, առանձնահատկությունները, քննել Մերձավոր և Միջին Արևելքի այլ երաժշտատեսական համակարգերի հետ առկա կապերը և դրանց գեղագիտական իմաստավորումը: Հավելվածն ընդգրկում է մի շարք գրաբար բնագրեր՝ ռուսերեն զուգահեռ թարգմանություններով, որոնց գերակշռող մասը ռուսերեն հրատարակվեց առաջին անգամ:

Ա. Արևշատյանի մենագրությունը կարևորվում է նաև նրանով, որ հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության տեսությանը նվիրված՝ Բ. Քուշնարյանի «Вопросы истории и теории армянской монодической музыки» (1958) և Ն. Թահմիզյանի «Теория музыки в древней Армении» (1977) հայտնի մենագրություններից հետո ռուսալեզու ընթերցողին ներկայացված ընդհանրացնող բնույթի երրորդ հետազոտությունն է:

Առանձին հեղինակների երաժշտական ժառանգության վերհանմանը և ուսումնասիրմանն են նվիրված երաժշտագետ-հայագետի մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ¹²:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2013-ին լույս տեսավ Ա. Արևշատյանի «Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը» մենագրությունը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևշատյանի խմբագրությամբ: Աշխատությունը նվիրված է XVIII-XIX դարերում Կոստանդնուպոլսում գործած հայ առաջին երաժշտագետի՝ Գրիգոր դպիր Գապասաքալյանի (1740-1808) կյանքին և գիտական ժառանգությանը, որտեղ ամփոփված են հայ միջնադարյան երաժշտական տեսական և գեղագիտական մտքի հարուստ փորձն ու ավանդույթները:

Շարունակելով իր պրպտումները՝ Ա. Արևշատյանը շուտով ռուսալեզու ընթերցողի դատին հանձնեց «Григор Гапасакалян, Книга о музыке, где содержатся вопросы и ответы на армянском, греческом и персидском языках» աշխատասիրությունը¹³ Գրիգոր դպիր Գապասաքալյանի 1803-ին գրված «Գիրք երաժշտական, յորում պարունակին Հայերէն, Յունարէն և Պարսկերէն հարցմունք և պատասխանատուութիւնք համառօտաբար» աշխատության ռուսերեն թարգմանությունը: Աշխատությունը գրաբարից թարգմանել և ծավալուն ներածականը հեղինակել է Ա. Արևշատյանը:

¹² Տե՛ս **Արևշատյան Աննա**, Մովսէս Խորենացու հիմներգական ժառանգությունը, «Բազմավէպ», 1992, էջ 138-146: **Արևշատյան Աննա**, Գրիգոր Գապասաքալյանի «Գիրք ութնյան ձայնից» ձեռնարկը, «Մանրուսում», հ. Գ, Երևան, 2009, էջ 214-234: **Արևշատյան Աննա**, Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությունը, «Պատմաբանասիրական հանդես», 2012, № 3, էջ 78-93:

¹³ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Григор Гапасакалян, Книга о музыке, где содержатся вопросы и ответы на армянском, греческом и персидском языках, перевод с грабара и введение А.С. Арешатян, примечания А.С. Арешатян и Л.О. Акопяна, Ереван, 2017, 142 с.

Առաջին անգամ ռուսալեզու ընթերցողին ներկայացվող Գրիգոր Գապասաքայանի «Գիրք երաժշտական» աշխատության թարգմանությունն ուղեկցվում է մանրամասն ծանոթագրություններով: Ինչպես և Գապասաքայանի մյուս երկերը, այս մեկը ևս ի մի է բերում միջնադարյան Հայաստանի երաժշտական տեսագեղագիտական մտքի ողջ ընթացքը, հարուստ փորձն ու ավանդույթները: «Գիրք երաժշտականը» ուշագրավ է նաև համեմատական երաժշտագիտության տեսակետից որպես Կոստանդնուպոլսում դարեր շարունակ համագոյակցող մշակույթների փոխհարաբերություններին վերաբերող արժեքավոր աղբյուր:

«ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2015-ին լույս տեսած «Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ» մենագրության¹⁴ մեջ Ա. Արևշատյանն առաջին անգամ ներկայացրեց X-XI դարերի նշանավոր գիտնական և արվեստագետ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ստեղծագործական, մասնավորապես երաժշտական ժառանգությունը, ներառյալ նրա հեղինակած շարականներն ու տաղերը: Երաժշտագետը քննության է առնում նաև Մագիստրոսի «Թղթերում»՝ Նամականիում և «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ արծարծված երաժշտագեղագիտական հայացքները: Հետազոտողը հնարավորինս համապարփակ ձևով լուսաբանել է Գրիգոր Մագիստրոսի վաստակն ու ավանդը հայ միջնադարյան երաժշտական մշակույթի զարգացման մեջ, առաջին հերթին իբրև երգահան հեղինակ՝ շարականագիր և տաղասաց, ինչպես նաև իբրև երաժշտության կարկառուն գեղագետ և գիտակ:

Ա. Արևշատյանի սույն աշխատությունը համալրեց հայագիտության և, մասնավորապես, հայ երաժշտական միջնադարագիտության ասպարեզում ձևավորված՝ մեր միջնադարի նշանավոր գործիչներին նվիրված մենագրությունների ստեղծման ավանդույթը, «ինչը թույլ է տալիս համապարփակ ձևով քննելու նրանց բազմակողմանի գործունեությունը, վերհանելու այդ գործունեության դեռևս քիչ հայտնի կամ անհայտ էջերը»¹⁵:

2018 թ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում լույս ընծայվեց Ա. Արևշատյանի «Григор Магистрос – гимнограф и эстетик» մենագրությունը¹⁶ (գիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր Լևոն Հակոբյան), որը հեղինակի՝ 2015 թ. հրատարակված աշխատության վերամշակված և ընդլայնված տարբերակն է, կարևոր ներդրում «Մագիստրոսի գեղագիտական հայացքների ուսումնասիրության բնագավառում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ

¹⁴ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Երևան, 2015, 130 էջ:

¹⁵ **Ամիրադյան Գայանե**, Աննա Արևշատյան, Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ, «Պատմաբանասիրական հանդես», 2015, № 3, էջ 299:

¹⁶ Տե՛ս **Аревшатын Анна**, Григор Магистрос – гимнограф и эстетик, Ереван, 2018, 129 с.+ 4 с. илл.

այս ականավոր գործչի մասին մինչ այժմ ստեղծված հետազոտություններում նրա գեղագիտական մոտեցումներին առանձին անդրադարձ չի արվել»¹⁷:

«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2014-ին լույս տեսած «Անիի երաժշտական մշակույթը» աշխատությամբ¹⁸, որը հեղինակը նվիրել է հոր՝ ակադեմիկոս Սեն Արևշատյանի անմոռաց հիշատակին, Ա. Արևշատյանն առաջին անգամ առանձին մենագրությամբ գիտական հանրությանը ներկայացրեց Անիի թագավորության ժամանակաշրջանի երաժշտական մշակույթի համապարփակ պատկերը, անդրադարձավ այդ շրջանում ստեղծագործած շարականագիրներ Պետրոս Գետադարձի, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագ Իմաստասերի և այլ հեղինակների շարականերգությանը և գեղագիտական հայացքներին:

«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2021-ին ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Ա. Արևշատյանի՝ IX դ. հայտնի մատենագիր և շարականագիր Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստէ ի յարապ գրոց» երկին նվիրված հետազոտությունը¹⁹ (գիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր Լևոն Հակոբյան)՝ նվիրված երաժշտագեղագիտական բովանդակության չափազանց ուշագրավ բնագրի քննությանը: Ծավալով ոչ մեծ գրքույկը նորովի է լուսաբանում ոչ միայն Համամ Արևելցու տեղը հայ միջնադարյան երաժշտական մշակույթի պատմության մեջ՝ բազմակողմանի երաժշտատեսական քննությամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով երաժիշտ-միջնադարագետների տեսադաշտից դուրս մնացած տվյալ բնագիրը, այլև որոշակի հետաքրքրություն ներկայացնում հայ-արաբական մշակութային կապերի պատմության առումով:

Վերջերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց Ա. Արևշատյանի «Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դդ.» մենագրությունը²⁰ (գիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյան), որը, կարծես շարունակելով հեղինակի գիտական հետաքրքրությունը Նոր ժամանակի հայ երաժշտագիտական մտքի ձևավորման հանդեպ, հանձին Գր. Գապասաքալյանի ժառանգության, ի մի է բերում և արժևորում վաստակն այդ ասպարեզում Պոլսում գործած ազգային երաժշտական մշակույթի երախտավորների, որոնք իրենց գործունեությամբ մեծապես նախապատրաստեցին Կոմիտասի՝ որպես հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի, երաժշտական ֆոլկլորագիտության և միջնադարագիտության հիմնադրի ստեղծագործական և գիտական սիրանքը:

¹⁷ **Ամիրադյան Գայանե**, Анна Аревшатян, Григор Магистрос – гимнограф и эстетик, «Արվեստագիտական հանդես», 2021, № 1, էջ 228:

¹⁸ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Անիի երաժշտական մշակույթը, Երևան, 2014, 204 էջ:

¹⁹ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստէ ի յարապ գրոց» երկը, Երևան, 2021, 99 էջ:

²⁰ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դդ., Երևան, 2021, 126 էջ:

Ա. Արևշատյանի՝ հայ հոգևոր երաժշտությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ են տպագրվել «Քրիստոնյա Հայաստան»²¹, «Հայ երաժշտության հանրագիտարան» և Մոսկվայում լույս տեսնող «Православная Энциклопедия» հանրագիտարաններում:

Հայ հոգևոր երաժշտության բազմավաստակ հետազոտողն իր գիտական ուսումնասիրությունները համատեղել է պրակտիկ գործունեության հետ՝ որպես Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի «Հոգևոր երաժշտության ժամ» համերգաշարի (1993-2002 թթ.) և Հայաստանի հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի (1990-1995 թթ.) գիտական խորհրդատու: Այդ գործունեության յուրահատուկ արտահայտությունն է Ա. Արևշատյանի կազմած հայ միջնադարյան երգաստեղծության «Հոգևոր երգեր» անթոլոգիան, որը լույս է տեսել 1997 և 2011 թթ. «Անահիտ» հրատարակչությունում և լայնորեն կիրառվում է կոնսերվատորիայի ուսումնական գործընթացում:

Իր գիտական գործունեության մեջ Ա. Արևշատյանը առանձնահատուկ տեղ է հատկացրել երաժշտական գեղագիտության հարցերին, որոնք լուսաբանվել են հայ միջնադարյան «ճայնից» մեկնություններին նվիրված նրա հոդվածներում²²:

Ա. Արևշատյանն իր խոսքն է ասել նաև կոմիտասագիտության ասպարեզում: Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրություններին նվիրված նրա հոդվածները հրատարակվել են ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն²³: Եվ պատահական չէ, որ Ա. Արևշատյանն ընդգրկվեց 2015-ին Երևանում ստեղծված Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական պարբերականի՝ «Տարեգրքի» խմբագրական խորհրդի կազմում:

Ա. Արևշատյանն ակտիվորեն մասնակցել է Կոմիտասի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբեյանական գիտական միջոցառումներին: Նա ընդգրկվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Կոմիտասականի» երրորդ հատորի խմբագրական հանձնախմբի կազմում և մասնակցել «Կոմիտաս վարդապետ և Գրիգոր Գապասաքայան. խազագիտական առնչություններ» հոդվա-

²¹ 1993-2002 թթ. Ա. Արևշատյանը եղել է Հայկական հանրագիտարանի «Քրիստոնյա Հայաստան» խմբագրության ավագ գիտական խմբագիր:

²² Տե՛ս **Arevshatyan Anna**, «Deux textes arméniens attribués à Basile de Césarée sur l'Interprétation des modes musicaux», «Les traités arméniens médiévaux sur l'Interprétation des modes musicaux et leurs parallèles au Proche Orient» (երկուսն էլ տպագրվել են «Revue des Études Arméniennes», 26, 1996-1997, pp. 339-355, 357-366). **Արևշատյան Աննա**, Эстетико-теоретические статьи Комитаса и их значение, Из истории эстетической мысли в Армении, кн. 6-ая, Ереван, 2006, с. 117-124. **Արևշատյան Աննա**, Григорий Нисский и музыкально-эстетическая мысль средневековой Армении, «Opera musicologica», 2013, № 3, с. 4-12 և այլն:

²³ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Կոմիտասի անդրանիկ երաժշտագիտական հոդվածը և նրա նշանակությունը, «Էջմիածին», 1996, Է-Ը, էջ 140-148: **Արևշատյան Աննա**, Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրությունների հետքերով, Հայ արվեստի հարցեր, Գիրք 1, Երևան, 2006, էջ 50-54 (լույս է տեսել նաև ռուսերեն և ֆրանսերեն): **Arevshatyan Anna**, Komitas and Gapasakalian: neumological connections (Musicology Today, 24, 2015):

ծով²⁴, զեկուցումներով հանդես եկել 2019 թ. նոյեմբերի 29-30-ը արվեստի ինստիտուտի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ գումարված «Կոմիտաս - 150» գիտական նստաշրջանի և հոկտեմբերի 8-10-ը Կոմիտաս թանգարան-ինստիտուտի՝ Բեռլինի Հումբոլդի և Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանների հետ համատեղ կազմակերպված «Կոմիտասը և իր ժառանգությունը» խորագրով միջազգային գիտաժողովի աշխատանքներին, հանդես է եկել հետաքրքիր զեկուցումներով և նախագահել նիստեր:

Ա. Արևշատյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում են համեմատական երաժշտագիտության՝ մեզանում սակավ ուսումնասիրված հարցերը ևս, որոնց հետազոտությանն են նվիրված տարբեր տարիների նրա աշխատությունները²⁵:

Դեռևս դիպլոմային աշխատանքից սկսած՝ Ա. Արևշատյանն անդրադարձել է հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործության ուսումնասիրությանը՝ հետագա տարիներին նույնպես նվիրելով դրան մի շարք ուշագրավ հոդվածներ²⁶: Զուգահեռաբար նա ակտիվ գործունեություն է ծավալել Հայաստանի կոմպոզիտորների միությունում՝ 1994-2014-ին լինելով ՀԿԵՄ

²⁴ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Կոմիտաս վարդապետ և Գրիգոր Գապասաքայան. խազագիտական առնչություններ, Կոմիտասական-3, Երևան, 2019, էջ 62-76:

²⁵ Տե՛ս **Արևշատյան Աննա**, Շարականի ժանրի տիպաբանությունը արևելաքրիստոնեական հիմներգության համատեքստում (լոյս է տեսել նաև ռուսերեն և ֆրանսերեն), **Аревшатян Анна**, Армянские средневековые Толкования на гласы и их параллели в ближневосточных музыкальных трактатах, «Науковий вісник», вып. 15, Киев, 2001, с. 39-46, **Аревшатян Анна**, Les cantiques consacrés à Marie Madeleine dans la pratique musicale des églises arménienne et catholique, «Revue des Études Arméniennes», 35, 2013, pp. 411-418, **Արևշատյան Աննա**, Սպիրիդոն Մելիքյանի «Յուճական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսականի վերայ» աշխատությունը արդի երաժշտագիտության տեսանկյունից, Հայ արվեստի հարցեր, Գիրք 5, 2013, էջ 28-38: **Аревшатян Анна**, «Певческие сборники Манрусум и Пападики: типология, общности и отличия» (Theorie und Geschichte der Monodie, 8, Wien-Brno 2014) և այլն:

²⁶ Դրանցից են՝ **Արևշատյան Աննա**, Ոչ ավանդական անսամբլները հայ արդի կոմպոզիտորների ստեղծագործություններում, 1976, №10, էջ 38-43: **Аревшатян Анна**, Монодия и поэзия Средневековья в творчестве армянских композиторов, ՀԿԳ, 1978, №12, с. 61-70. **Аревшатян Анна**, О специфике тембровой драматургии в симфониях Авета Тертеряна, Традиции и современность, вып. 1, 1986, с. 198-212. **Аревшатян Анна**, Музыка для камерно-оркестровых составов. 1970-80 гг., Армянское советское искусство на современном этапе, Ереван, 1987, с. 144-160. **Аревшатян Анна**, Монодийность как принцип мышления в симфониях Авета Тертеряна, «Музыкальная Академия», Москва, 2002, №2, с. 76-79. **Արևշատյան Աննա**, Երվանդ Երկանյանի «Ավագ շաբաթ» օրատորիայի ոճի առանձնահատկությունները, Հայ արվեստի հարցեր, Գիրք 3, Երևան, 2010, էջ 77-84: **Արևշատյան Աննա**, Մեծ Եղեռնի թեման հայ արդի կոմպոզիտորների երկերում, Հայոց ցեղասպանություն – 100. Ճանաչումից՝ հատուցում. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 478-486: **Արևշատյան Աննա**, Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված Տիգրան Մանսուրյանի երկերը, «Արվեստագիտական հանդես», 2021, №1, էջ 18-24 և այլն:

